767

01 JUL 2000

ՀԱՅԿ
ՊԵՏՀՐԱՏ

1 JUN 2013

767

Կ. ՀԵՆԿԵՅՐՈՒ

1
Հ-47 սր

ԲԱՌԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԻՍԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

Ֆրանս. թարգմանեց

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

39669
1408
38416

ԵՐԵՎԱՆ ՄՈՍԿՎԱ

1935

ՀՍԽՀ-ՍՍՀ

Պատ. խմբագիր՝ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Հ. ՔԱՐԱՄՅԱՆ

ԱՌԱՋԱԲԱՆ

Հռչակավոր «Բնության Սիստեմի» վերարտադրությունը ներկայացնող ներկա գրքույկի հեղինակի շուրջը, ինչպես հայտնի է, տարբեր կարծիքներ կան։ Առաջին անգամ այն լույս տեսավ Լոնդոնում 1774 թվին*, վորը ժամանակակիցները վերագրում էին դրանից յերեք տարի առաջ վախճանված Հելվեցիուսին։ Ինդիրը սակայն նրանում է, վոր այստեղ մենք գործ ունենք բուրժուական մատերիալիզմի այդ նշանավոր աշխատության վոչ թե բոլորովին նոր ու ինքնուրույն մեկնաբանման, — ինչպես կարծում են վոմանք, — այլ ավելի շուտ նրա իսկ խոսքերով տված շարադրանքի հետ, վորն այդ պատճառով զարմանալի հարազատությամբ վերականգնում է «Բնության Սիստեմի» ինչպես ամբող-

* Այս հրատարակությունից ել կատարված է հայերեն սույն թարգմանությունը։

ջական, նույնպես և նրա առանձին գլուխների հակիրճ բովանդակությունը։ Ահա թե ինչու, մեզ հավանական և թվում այն յենթադրությունը, որը «Բնության Սիստեմի» նման պոպուլյարիզացիան Հոլբախի ու Դիդրոյի մոտ գրական ոգնականի պաշտոնը վարող Նեժոնին է վերագրում։

Զնայած դրան, գիտավորյալ կերպով մեր առաջաբանին կցում ենք այս գրքույկի մինչ այժմ անուն հանած հեղինակի մասին կենսագրական որոշ տեղեկություններ՝ 18-րդ դարի խոշորագույն մատերիալիստներից մեկի հետ՝ հայ ընթերցողներին մոտիկից ծանոթացնելու միակ ցանկությամբ։

I

Կլոդի Ադրիան Հելվեցիուսը ծնվել է Փարիզում 1715 թվի հունվարին։ Նրա նախնիները, ըստ նրա կենսագիրների, գերմանական ծագում ունեին, Պֆալցիայից եկին, որտեղ նրանք կրում էին Շվեցեր — այսինքն Շվեցարացի ազգանունը։ Այս տոհմից մեկը, որը մասնագիտությամբ բժիշկ էր և ուներ մի շարք աշխատություններ բժշկականության և ալքիմիայի վերաբերյալ, 1649 թվին փոխադրվում է Հոլանդիա, հավանորեն Գերմանիայում կաթոլիկներին հալածելու պատճառով, լատինացման և յենթարկում իր ազգանունը և կոչվում Հելվեցիուս։ Նրա որդին, այսինքն մեր փիլիսոփայի պապը, տասնութերորդ դարի վերջին Փարիզ է փոխադրվում, նմանապես իր մասնագիտությունն ընտրելով բժշկությունը, և մեծ համբավ է ձեռք բերում գիդենտերիայի դեմ

առաջին անգամ հաջողությամբ կպեկակուան (փրխման արմատներ) գործադրելով։ Հելվեցիուսի հայրը գիտնական եր և Լյուդովիկ տասնհինգերորդի կնոջ՝ Մարիա Լեշչինսկայի մոտ պալատական բժշկի պաշտոն եր վարում։ Նա Գիտությունների Ակադեմիայի ու պետական խորհրդի անդամ եր և ընդհանրապես մեծ հեղինակության տեր անձնավորություն եր համարվում։

Տնային դաստիարակությունից հետո Հելվեցիուսն իր կրթությունը ստանում է Լուի Լե-Գրան կոլեջում, որի, — ինչպես և այն ժամանակվա ուսումնական հաստատությունների մեծ մասի — գլուխը կանգնած եր հոգևորականությունը։ Ավելորդ է այստեղ ապացուցել, որ կրոնավորների կողմից տարվող դաստիարակությունը, սովորողների գիտակցությունը աստծու և կրոնի մասին յեղած պատրանքներով շղարշելու նպատակը պիտի հետապնդեր։ Սակայն այդ դպրոցները, թեկուզ և ձևական, բայց որոշ գիտություն, մասնավորապես հին լեզուների մասին տալիս էին, ինչպես և լատին ու հույն գրողների յերկերի հիման վրա, պատմություն, գրականություն, ճարտասանություն և փիլիսոփայություն էին ուսուցանում։ Հելվեցիուսի անձնական բարեկամ, նրա հետևող և կենսագիր Սեն-Լամբերի ասելով, մեր փիլիսոփան վերջին դասարաններում, հին պատմության նկատմամբ խոր հետաքրքրություն ցույց տալու պատճառով, գրավում է դասատուների և հատկապես հայր Պորենի, — որն ի միջի այլոց նաև Վոլտերի ուսուցիչն է յեղել, — ուշադրությունը, որի հոգատար

վերաբերմունքին են մասամբ վերագրում նրա լուրջ հաջողությունը հույն և հռոմեական պատմության ու կլասիկների ուսումնասիրության առպարեզում։

Տակավին դպրոցում Հելվեցիուսը ծանոթանում է անգլիացի նշանավոր փիլիսոփա Լոկկի «Փորձ մարդու բանականության մասին» աշխատության հետ, վորը նրա գիտական հայացքների մշակման տեսակետից հետագայում վճռական նշանակություն ունեցավ։

Կոլլեջը վերջացնելուց հետո, Հելվեցիուսն ուղարկվում է Կանեն՝ իր քեռու մոտ, վորը հարկահավաքի պաշտոն ուներ, այդ գծով փորձառություն ձեռք բերելու համար։ Սակայն այնտեղ անցկացրած ամբողջ ժամանակը Հելվեցիուսը չի նվիրում «ֆինանսիստ» դառնալու գործին։ Ընդհակառակը, Սեն-Լամբերի ասելով, նա «ոչ այնքան զբաղված էր այստեղ ֆինանսներով, վորքան գրականությամբ ու փիլիսոփայությամբ և ոչ այնքան դրանցով, վորքան կանանցով»։ Իր վոտանավորներով նա տեղում պոետի հռչակ և ձեռք բերում և անդամ ընտրվում Կանենի Գրականության Ակադեմիայի անդամ։

Ցերբ լրացավ մեր փիլիսոփայի քսաներեք տարին, նրա ծնողներին հաջողվում է, թագուհու միջնորդության շնորհիվ, ձեռք բերել յերիտասարդ վորդու համար հարկերի գլխավոր կապալառուի (откупщик) պաշտոնը 100 000 եկյու տարեկան զուտ յեկամուտով։ Չնայած հարկատուների նկատմամբ ունեցած իր դգալի մեղմ ու կիջող վերաբերմունքին, Հելվեցիուսը վարում է ցոփության ատելանքն հասնող փարթամ կյանք։ Նա հաճախում է սալոններ, հրճվում է դերասանությունն անելով, գրում է բանաստեղծություններ, ստեղծում է սիրո արկածներ և տարվում ամեն տեսակի հաճույքներով։ Արտաքինով նա գեղեցիկ էր, վարվեցողության մեջ բարեկիրթ ու գրավիչ։

Սակայն բնությամբ նա ընդունակ էր «քաղելու ոչ միայն բավականության ծաղիկները, այլև հավաքելու բանականության պտուղները», ինչպես գրում է նա «Ցերջանկության մասին» կոչված իր պոեմում։ Նրա մոտիկ բարեկամությունը և հաճախակի հանդիպումներն իր եպոխայի առաջավոր մտքի ամենակարկառուն դեմքերի Մոնտեսկյոի, Վոլտերի, Բյուֆֆոնի, Ֆոնտենելլի, Դիդրոյի, Հոլբախի և այլոց հետ, անկասկած, հնարավորություն են տալիս Հելվեցիուսին քաղաքականության, պատմության և փիլիսոփայության մասին ունեցած իր գիտությունը վորոշ չափով ընդարձակել և խորացնել։

1751 թվին հրաժարվելով հարկերի կապալառուի պաշտոնից, նա առանձնանում է նախ իր կալվածքում, իսկ հետո փոխադրվելով Փարիզ, ձեռնամուխ է լինում իր տեսական հայացքների շարադրման գործին։ Ուղիղ յոթ տարի անց, 1758 թվին, անանուն կերպով լուս է տեսնում նշանավոր ստվարածավալ «De l'esprit»-ը, վորն իր հեղինակի դեմ է բարձրացնում ոչ միայն ֆեոդալա-կղերական Ֆրանսիայի գայրույթի կատաղի ալիքը, այլև բուրժուական շատ մտածողներին, վորոնց թվում նաև Հելվեցիուսի մոտիկ բարեկամներին։ Արքունական խորհուրդը շտապում է արգելել դերքը, Փարիզի արքեպիսկոպոսը և Կլեմենտի 13-րդ պապը հատուկ կոնդակով բանա-

զրում են նրա բովանդակությունը, պարլամենտը առաձին վորոշումով պահանջում է վոչնչացնել այդ աշխատանքը։ 1759 թվի փետրվարի 4-ին հրկիզվում է փիլիսոփայի այդ գլխավոր և նրա որոք լույս տեսած միակ աշխատությունը։ Դատախազն իր ճառում վորակում է նրան վորպես «ամենաանամոթ և խայտառակ կրքերի ժողովածու, մատերիալիզմի և այն ամենի ապոլոգետը», ինչ անհավատություն է ներշնչում և քրիստոնեության ու կաթոլիկության նկատմամբ ատելություն հարուցում։

Անգամ այնպիսի մարդ, վորպիսին Դիդրոն եր, սահմանագծում է իրեն «De l'esprit»-ում արտահայտված շատ մտքերից։ Հելվեցիուսն իրավացիորեն ձեռք է բերում 18-րդ դարի բուրժուական ամենաարմատական և համարձակ մտածողի համբավը։

Շնորհիվ իր և իր ազգականների մոտիկությանը պալատական շրջաններին, դերծ մնալով անձնական ֆիզիկական հալածանքներից, Հելվեցիուսը փոխադրվում է իր գյուղը և զբաղվում իր մյուս կարևոր «Մարդու մասին» աշխատությամբ, վորը լույս տեսավ փիլիսոփայի մահից հետո։ 1764—65 թվերին նա շրջագայություն է կատարում դեպի Լոնդոն և Բեռլին։ Իր կյանքի վերջին տարիները նա կրկին անց է կացնում սեփական կալվածքում, վորտեղ և մահանում է 1771 թվի դեկտեմբերի 27-ին։

II

Դենի Դիդրոյի և Պոլ Հոլբախի հետ միասին, Հելվեցիուսն անկասկած մնում է 18-րդ դարի հեղափոխական բուրժուազիայի փիլիսոփայական մտքի դագաթնակետն ու անգերազանց ներկայացուցիչը։ Ձևականորեն, ինչպես հայտնի է, նա նշանավոր «Ենցիկլոպեդիայի» շուրջը համախմբված ֆրանսիական լուսավորիչների թվին չի պատկանել։ Սակայն, չպետք է մոռանալ, վոր ենցիկլոպեդիստ կոչումը խիստ հարաբերական իմաստ ունի։ Այդ կոչումը ծածկում է քաղաքական նպատակադրումների և ընդհանուր աշխարհայացքի տեսակետից բնավ վոչ միատարր անձնավորություններին։ Ճիշտ է, նրանց բոլորին միացնում եր կապիտալիզմի զարգացման ընդհանուր շահերը և հանուն դրա ֆեոդալիզմի դեմ մղվող պայքարի անհրաժեշտությունը։ Բայց խոշոր է նաև այն տարբերությունը, վորը գոյություն ուներ մատերիալիստ ու աթեիստ՝ ենցիկլոպեդիստներ Դիդրոյի և Հոլբախի մի կողմից, ու իդեալիզմին հակված և դեյիզմի տեսակետին փարած, նույնպես ենցիկլոպեդիստ կոչվող Վոլտերի, ինչպես և Ռուսոյի միջև, մյուս կողմից։ Բուրժուական առաջավոր մտքի այդ որգանի հպարտ անունը կրողներից շատ քչերին,— ֆեոդալական հարաբերությունների, բարքերի ու նախապաշարմունքների դեմ պայքարի հաստատուն ու հետևողական տրամաբանությունը հանդես բերելու տեսակետից — Հելվեցիուսի հետ կարելի չի համեմատել։ Չնայած այս իմաստով առանձնահատուկ այն դերքին, վորը Հելվեցիուսը գրավում է ֆրանսիական լուսավորիչների շրջանում, գաղափարապես նա 18-րդ դարի ֆրանսիական մատերիալիստների մարտական խմբին եր

պատկանում, լինելով, ինչպես ասացինք, այդ հոսանքի առաջնակարգ դեմքերից մեկը։

Տասնութերորդ դարի մատերիալիստական տեսությունը,—ասում է Մարքսը,—իր իսկական բացատրությունն է գտնում այն ժամանակվա Ֆրանսիական իրականության մեջ։ Վերջինիս հատկանշական կողմն, ամենից առաջ այն եր, վոր չնայած տիրապետող ֆեոդալիզմին, զգալի չափով աճել ու ամրապնդվել եյին կապիտալիստական հարաբերությունները, մասնավորապես տնտեսության բնագավառում։ Որակարգում դրված եր հեղափոխության հարցը, նրա գաղափարական նախապատրաստման ու ձևակերպման խնդիրը։

Կապիտալիստական արտադրական հարաբերությունները պայմանավորող արտադրողական ույժերի զարգացման համար բուրժուազիան, հասկանալի յե, պետք է դիմեր բնության ավելի օբյեկտիվ ու բազմակողմանի ուսումնասիրությանը։ Սակայն 17-րդ դարի մետաֆիզիկներին հակառակ, վորոնք մատերիայի գոյությունը և նրա շարժման աղբյուրն ատծու հետ եյին կապում, բնությունը, վորպես սկզբնական և կատարյալ մի ամբողջությունը դիտելը, ինչպես և նրա ներքին որինաչափությունը մեխանիկայի, ֆիզիկայի և այլ ճշմարիտ գիտությունների ոգնությամբ բացահայտելու համոզումը, դրձնում եր 18-րդ դարի բուրժուազիայի առաջավոր ներկայացուցիչներին վոչ միայն հակաթեալեոլոգիական, այլև հակաբնազանցական։

18-րդ դարի հակաթեալեոլոգիական, հակաբնազանցական մատերիալիստական

փիլիսոփայությունն իսկ իրենից ներկայացնում եր Ֆրանսիական բուրժուազիայի այդ հակաթեոլոգիական, հակաբնազանցական պրակտիկայի արտացոլումը՝ նրա առաջավոր գաղափարախոսների գլխում։

Հին կարգերի, ատծու և կրոնի դեմ իրենց կրքոտ և հետևողական պայքարով Ֆրանսիական մատերիալիստները, ինչպես Ենգելսն է ասում, հեղափոխեցին իրենց ժամանակակից մարդկանց գիտակցությունը շատ ավելի վաղ, քան քաղաքական այն մեծագույն իրադարձությունները, վորոնք տեղի ունեցան 1789 թվին։

III

Սակայն Ֆրանսիական մատերիալիստների անժխտելի ծառայությունը վոչ միայն այն է, վոր նրանք անխնա քննադատության յենթարկեցին գոյություն ունեցող քաղաքական հաստատությունները, կրոնը, աստվածաբանությունը, այլև բացահայտ պայքարի դուրս եկան ամեն կարգի և մասնավորապես Դեկարտի, Մալբրանշի, Սպինոզայի, Լայբնիցի մետաֆիզիկայի դեմ։

Դեկարտն ընդունում է իրարից միանդամայն անկախ յերկու՝ հոգու և նյութական սուբստանցների գոյությունը։ Նրա կարծիքով անմտություն է հոգին վորևե կերպ բղխեցնել մատերիայից, կամ համարել նրա հատկություններից մեկը։ Մատերիայի ատրիբուտը—տարածականությունն է մոդուսը—շարժումը։ Հոգու ատրիբուտը—մտա-

ծողություն է, մարդուսը — յերևակայություն, կամեցողություն։ Եյությամբ բոլորովին տարբեր այդ սուբստանցների մեջ հատման վոչ մի կետ գոյություն չունի։ Որինակ, ընդհանուր վոչինչ չկա մեր որգանիզմի, մարմնի և հոգու ու բանականության միջև։ Մեր մարմինը, ինչպես և յուրաքանչյուր կենդանի, նման է մեքենայի, վորոնց մոտ ֆիզիոլոգիական բոլոր գործողությունները հիմված են զուտ մեխանիկական որինաչափության վրա։ Վորպեսզի մարդը մարդ լինի, անհրաժեշտ է Դեկարտի կարծիքով, միացնել նրա մարմինը այսպես կոչված բանական հոգու հետ, մի բան, վորից զուրկ են մարդուց ցածր կանգնած բոլոր կենդանիները։ Հոգու և մարմնի այդ միացումը տեղի յե ունենում ասածու հզորության և կամքի ուժով, վոր և հանդիսանում է նյութական և մտածող սուբստանցների ստեղծողը։ Մահը — հետևանք է զուտ մեր մարմնի քայքայման, ուստի նա չպետք է մեզ ահաբեկի, ինչպես ճանճերին և մրջյուններին, վորոնց եյությունը միայն իրենց որգանիզմի մեջ է, վորովհետև մենք ունենք նաև հոգի, վորը կործանման յենթակա չէ — անմահ է։

Ճակատին Դեկարտի կենդանության ժամանակ, նրա աշակերտ, բժիշկ, Հանրի Լեուբան (1598—1679) փորձ արեց վերացնելու այն անանցանելի վիհը, վոր Դեկարտն այդպիսով ստեղծեց մատերիայի և հոգու, մարմնի և բանականության միջև։ Նրա կարծիքով, մտածողությունն ու տարածականությունը, ճիշտ է տարբեր, բայց միմյանց ժխտող հակադիր յերևույթներ չեն։ Այդ յերկուսն էլ, — ասում է Լեբուան, — կամ մի միասնական սուբստանցի տարբերություններ են, կամ թե հոգին մարմնի մոդուսը պիտի ճանաչել։ Լեբուայի մահից մոտ յերեք քառորդ դարանց ֆրանսիական մատերիալիստների ավագ սերնդին պատկանող Լամեթրին (1709—1751), 1748 թվին հրապարակում է իր նշանավոր «Մարդ-Մեքենա» աշխատությունը, վորում ջերմ կերպով պաշտպանում է այն միտքը, թե մարդու մեջ բացարձակ վոչինչ չկա, վորի թվում նաև հոգին, վորը չբղխե մարմնից, և յենթակա չլինի պատճառակցության որենքներին։

Այսպիսով, 18-րդ դարի մատերիալիստների հետագա ներկայացուցիչները, հիմք և որինակ ունենալն աներկբայորեն սկզբնական համարելու մատերիան. հոգին հանգեցնելու, մտածելու, զգացողության ընդունակությանը, իսկ զգացողությունն իրեն հերթին, որինակ, Դիդրոյի կարծիքով, ամեն տեսակ մատերիայի հատկությունն է։ Զգացողությունը, — ասում է Հելվեցիուսը, — կենդանի մարմնի կազմության հետևանքն է, նա սկիզբն է առնում նրա որգանների առաջ գալու հետ միասին, պահպանվում է քանի նրանք գոյություն ունեն, և վերջապես վոչնչանում է մարմնի քայքայման հետ զուգընթաց։ «Ցեթե մետաֆիզիկները հարցնեն ինձ, ինչ է տեղի ունենում կենդանիների մահից հետո զգացողության այդ ընդունակության հետ, յես նրանց կպատասխանեմ այն, ինչ տեղի յե ունենում տարրալուծվող յերկաթի մագնիսական ձգողության ընդունակության հետ։ Այլ կերպ ասած, որգանիզմի մահից հետո դադարում է

գործել զգացողությունը, ընկալումը, չքանուն և մտածելու, դատելու ունակությունը, ուրեմն և մենք կորցնում ենք այն, ինչ հոգի յե կոչվում, վորովհետև վերջինս, ինչպես ասացինք, զգացողության ընդունակությունն և նշանակում և վոչ ավելին։

Հոգու և մարմնի մասին մետաֆիզիկների գլխավոր կարծիքը, ըստ Հոլբախի, հետևանք և այն բանի, վոր նրանք անջատում և հակադրում են միմյանց, մարդու մեջ միասնության ձևով գոյություն ունեցող նրա յերկու կողմերը։ Մարմինը նրանք դիտում են վորպես անշարժ, քարացած, իներտ մեծություն. հոգին — վորպես գործոն, ակտիվ եյակ։ Ստեղծվում և անջրպետ մարդու ֆիզիկական, մարմնական, նյութական և մյուս կողմից հոգեկան, մտածողական գործողությունների միջև։ Մարդը յերկատվում և միմյանցից բացարձակապես անկախ ֆիզիկական և հոգեկան մարդու։ Նման զառանցանքներն անխուսափելիորեն ավարտվում են նրանով, վոր կարիք և զգացվում աստծու միջամտությանը, հոգու և մարմնի համակցությունը հնարավոր դարձնելու համար և տանում են դեպի հոգու պարզության ու անմահության մասին յեղած մոլորությունները։ Մինչդեռ մարդը, Հոլբախի կարծիքով նմանապես ՀՆՅՈՒԹԱԿԱՆ եյակ եՀ, միայն կազմակերպված այնպես, վոր ընդունակություն և ձեռք բերում մտածելու և զգալու համար։

Այսպիսով, կա միայն մեկ սուբստանց — մատերիա։ Նա չի ստեղծված, այլ գոյություն և ունեցել միշտ։ Նա հավիտենական և։ Հոգի կոչվածը

լոկ զգացողության ընդունակությունն և, վորով ոժտված և միայն մատերիան. սակայն վոչ ամեն մատերիա, — ինչպես կարծում եյին ֆրանսիական մատերիալիստներից մի քանիսը (Ռոբինե, Դիդրո), այլ առանձին ձևով կազմակերպված՝ որգանական մատերիան։ Հետևաբար, մտածողությունը յերկրորդական և, մատերիան՝ սկզբնականը, գլխավորը։ Ուստի ամեն ինչ ըմբռնելու և հասկանալու բանալին պետք և փնտրել միայն բնության ու նրա որինաչափության մեջ։

Ճիշտ այնպես, ինչպես 18-րդ դարի յերկրորդ կիսի ֆրանսիական բուրժուազիան վաղուց մոռացության եր տվել այն տատանումները, անհետևողականությունը, պահանջների կիսատպռատությունը, վորը հատուկ եր նրան դրանից մեկ դար առաջ, յերբ նա տնտեսապես և գաղափարապես տակավին թույլ եր ու ֆեոդալական կարգերի դեմ գրոհամարտի ուղին եր բռնել, ճիշտ այդպես ել նրա ներկայացուցիչները փիլիսոփայության մեջ հաղթահարեցին 17-րդ դարի համաձայնողական բուրժուազիայի փիլիսոփա Դեկարտի եկլեկտիզմը, աստծու և կրոնի դավանանքը, նրա մետաֆիզիկան, ոգտագործելով սակայն նրա ֆիզիկան և մատերիալիզմի պատվանդանի վրա ստեղծեցին այդ բուրժուազիայի հեղափոխական նպատակներին ադեկվատ մարտական փիլիսոփայությունը։

IV.

Այդ փիլիսոփայության ստանձնողը, յեթե վոչ ամենաառաջնորդներից մեկը, ֆրանսիացի Լամետրին, կնա

ՀՍՍՀ-ՍՍՌ
Ակադ. Ա. Մեշչերյան
Ս. Սեմաշկոյի անվան

1770 թ. մայը յերկրից դուրս՝ Ամստերդամում լույս տեսած նշանավոր «Բնության Սիստեմը»։ Նա, ինչպես հիմա յե պարզվում, հավաքական՝ այսինքն վոչ միայն նրա գլխավոր հեղինակ — Հոլբախի, այլև Դիդրոյի, Գրիմի, Լեգրանժի և Նեժոնի աշխատանքի արդյունքն է յեղել։ Հայ ընթերցողներին հանձնարարվող այս գրքույկը ևս «Բնության Սիստեմի» հակիրճ, սակայն շնորհալի, հանրամատչելի շարադրությունն է։

Դժվար է մատնացույց անել մեկ ուրիշ գրական յերկ, վորը կարելի լիներ «Բնության Սիստեմի» հետ համեմատել հեղափոխական բուրժուազիայի աշխարհաբմբռնումը այդքան ամբողջական, սիստեմատիկ (ել չենք խոսում ջերմ շնչով) արտահայտելու տեսակետից։ Նրա մեջ տրված է 18-րդ դարի բուրժուական մատերիալիզմի կվինտեսենցը, նրա սահմանափակությամբ և թերություններով հանդերձ։ Հին մետաֆիզիկ ու կրոնական աշխարհայեցողությանը այստեղ հակադրված է բոլորովին նոր հայացքների մի սիստեմ. — մատերիայի, շարժման, մարդու, նրա իմացության աղբյուրների և եյության, դատարկության, բարոյականության, անաստվածության անհրաժեշտության ու ոգտավետության վերաբերյալ։

Նյութի մասին ունեցած ֆրանսիական մատերիալիստների ուսմունքը վորոշ իմաստով սկիզբ ել առնում, ինչպես Մարքսն է ասում, Դեկարտի ֆիզիկայից։ Սակայն վերջինիս ֆիզիկական ուսմունքը, արատավոր ել, ամենից առաջ իր յելման կետում։ Մատերիայի սուբստանց գոյությունը չժխտելով, Դեկարտը միևնույն ժամանակ նրան բղխեցրեց բարձրագույն հոգուց, այսինքն համարեց նյութը աստծու ստեղծագործության արդյունք։ Տարածականությունը, վորն ըստ նրա, մատերիայի միակ ատրիբուտն է, նույնացվեց իրեն, մատերիայի հետ։ Այնուհետև շարժման մասին ունեցած իր հայացքի համաձայն, Դեկարտը գտնում ել, վոր աստված ել հարված է բացակայության դեպքում, մատերիան, շնորհիվ իր ինքնատասալի, բացարձակ հանգստի մեջ կմնա։ Նյութականությունը ստանցին այդ աբսոլյուտ հանգստի վիճակից հանում է աստվածը, բնությանը հաղորդելով շարժում, վորի քանակը այնուհետև մնում է անփոփոխ, — այստեղից շարժման քանակության պահպանման նրա որենքը, — փոխանցվելով միայն մեկ մարմնից մյուսը և այսպիսով բնական բոլոր յերևույթների հետագա զուտ մեխանիկական, պատճառականացական շարժման աղբյուրն է հանդիսանում։ Սպինոզան, վորը Դեկարտի դուալիստական սիստեմին հակադիր մատերիալիստական մոնիստական փիլիսոփայությունն ստեղծեց նյութական սուբստանցի ըմբռնման խնդրում՝ մնաց իսկ վերացական և 17-րդ դարի իմաստով մետաֆիզիկ տեսակետի վրա։ Նրա պատկերացումով, սուբստանցը մշտապես կատարելության մեջ գտնվող, ամեն տեսակի շարժումից ու զարգացումից ընդմիշտ դուրս՝ եյություն է, վորի հետ անմիջականորեն, մարդը վոչ մի առնչություն ունենալ չի կարող։ Շարժումը վերաբերվում է լոկ եմպիրիկ բնությանը, լինելով նրա, ինչպես Սպինոզան է ասում, անվերջնական մոդուսներից մեկը։ Դեկարտի նման, նա ևս գտնում է, վոր ժամանակ

հակացողությունը, վոչ թե նյութի այլ մտածողության մոդուսը պիտի համարել։

Ինչպես վերև հիշեցինք, ֆրանսիական մատերիալիստներին խորապես անհեթեթ եր թվում մատերիայի ստեղծման, առաջացման վորևե հարցադրումը։ Այն հարցին, թե վորտեղից և ստացվել մատերիան, «Բնության Սիստեմը» վորոշակի պատասխանում է՝ նա միշտ էլ յեղել է։ Մատերիան՝ դա բնությունն է, նրա մարմինների, ույժերի հավաքականությունը։ Իր բազմապիսության մեջ, բնությունը միասնական է, միասնական են նաև նրա օրենքները ու գործողությունները։ Մեծագույն մի ամբողջության նման, նա անբաժան կերպով իշխում է իր բոլոր մասերի, վորոնց թվում նաև մարդու վրա։

Բնության եյությունը, գործողության պրոցեսում գտնվելու մեջ է։ Նրա տարրերի ուշադիր ուսումնասիրությունը կասկած չի հարուցում, վոր դրանցից և վոչ մեկը, բացարձակ հանգստի մեջ չէ։ Այն առարկաները, վորոնք մեզ հաճախ շարժումից բոլորովին զուրկ են թվում, իրականում լոկ հարաբերական հանգստի մեջ են։ Բնության նկատմամբ վոչ կանխամտածված հայացքը լիովին համոզում է, վոր նա շարժման մեջ է գտնվում իր սեփական ույժերի շնորհիվ և վոր դրա համար բնությունը արտաքին հարվածի կարիք չի զգում։ Յեթե հարցնեն, վորտեղից առաջ յեկավ շարժումը, պետք է պատասխանել, վոր մատերիան միշտ էլ շարժման մեջ է յեղել, վորովհետև շարժումը նրա գոյության անհրաժեշտ ձևերից մեկն է, նրա այնպիսի նախնական հատկություններ-

ից, ինչպես տարածականությունը, կշիռը, ֆիզուրան, անթափանցելիությունը։

Մատերիան, այդպիսով, Դեկարտի ենթադրությամբ տարածականությունը չէ և վոչ էլ կոնկրետ առարկաներից անկախ ու շարժումից դուրս մետաֆիզիկ եյությունը, ինչպես կարծում եր Սպինոզան։ Նա գործոն է։ Զկա մատերիա առանց շարժման, և ընդհակառակը։ Ույժն ու շարժումը — նրա անբաժան հատկություններն են։

Ամեն տեսակ մատերիային ի սկզբանե բնորոշ այդ հիմնական հատկության՝ շարժման շնորհիվ, առարկաները, վորոնցից կազմված է բնությունը, մշտապես ճնշում են մեկը մյուսին, բախվում, միանում, առանձնանում, վանվում, ձգում ու ձգվում վորոշ կենտրոնի, մի խոսքով, պատճառական կախման մեջ մտնում միմյանց հետ։ Բնության մեջ մենք անընդհատ պատճառն ու հետևանքը, մեկը մյուսից բղխող առարկաներ ենք տեսնում։ Կրակն անհրաժեշտորեն վառում է այրելի նյութը, մարդն անհրաժեշտորեն ձգտում է այն բանին, ինչ նրան ոգտավետ է թվում, ոդից ծանր մարմինները, անհրաժեշտ կերպով վայր են ընկնում, թեթևները՝ վեր բարձրանում։ Բավական է մի փոքր խորհել հասկանալու համար, վոր այն ամենը, ինչ մենք նկատում ենք մեր շուրջը, անհրաժեշտորեն պետք է լինեյին այնպես, ինչպես այժմ նրանք կան։ Անհրաժեշտությունը, հենց պատճառի ու հետևանքի անքակտելի, մշտական կապն է։

Սակայն անհրաժեշտությանը յենթակա յեն վոչ միայն բնական յերևույթները. նա իր ահմանը տա-

բածում է լիովին կերպով, նաև մարդու, նրա նյութական ու բարոյական աշխարհի վրա։ Այսպես կոչված բարդ շարժումները վոչ այլ ինչ են, քան հասարակ շարժումների կոմբինացիան։ Ուստի բոլոր յերևույթների հասկանալու ճշմարիտ բանալին անալիզի միջոցով նրանց շարժման պարզ ու ընդհանուր ձևերին հանդեցնելու մեջ է, վորովհետև, նրանցից յուրաքանչյուրի հիմքում, վերջին հաշվով, ընկած են Նյուտոնի կողմից Ֆիզիկայում մացրած ձգողականության ու վանման որենքները։ Քիմիայում վերջիններս արտահայտվում են այն համամասնությունների ձևով, վորոնք մարմիններին միացման են բերում, բիոլոգիայում՝ մոլեկուլների համակցության ու քայքայման, իսկ սոցիալական յերևույթներում՝ սիրո ու ատելության մեջ։ Այսպիսով մեր վարվեցողության բոլոր ակտերը՝ ընտանեկան, քաղաքական, համայնական բնագավառներում, որյեկտիվ պատճառներով կանխորոշված են։ Մարդը սոսկ պասիվ գործիք է անհրաժեշտության ձեռքին, ֆատալիզմը՝ ահա նրա գործողությունների որինաչափությունը։

Զգեստը է մոռանալ, վոր հետևողական մեխանիստական այս կոնցեպցիան իր սուր ծայրով ուղղված եր ամենից առաջ կրոնի դեմ։ Անտրոպոցենտրիզմը, վորը տիեզերքի կենտրոնում միայն մարդուն ու նրա փառամոլությունն եր տեսնում, խորտակվում է բնությունը համայնապարփակ մեկ ամբողջության հաշիվումով։ Բոլոր, վորոնց թվում նաև հասարակական յերևույթները մերկ անհրաժեշտությամբ

բացատրելու փորձը, ամեն տեսակ գերբնական ուժերի ու կամքի բացարձակ ազատության մասին յեղած հերյուրանքների ժխտման է բերում։ Աստծու և հոգու անմահության դոգմատը ճանաչվում է վորպես մոլորության, տգիտության ու նախապաշարմունքի հետևանք։ Բնությամբ, փորձով ու բանականությամբ առաջնորդվողը, «Բնության Սիստեմի» ասելով, անխուսափելիորեն աթեիզմի տեսակետին կհանգի։ Աթեիստը հենց նա յե, ով ժխտելով պատրանքների գոյությունը, վերադարձնում է մեզ դեպի բնությունն ու բանականությունը։

Սակայն թեոլոգիայի ու աստվածաբանության նկատմամբ, ֆրանսիական մատերիալիստների ունեցած խոր ատելությունը, ուղիղ համեմատական չեր հասարակական յերևույթների գիտականորեն լուսաբանելու նրանց կարողությանը։ Կրքոտ աթեիստները լինելով հանդերձ, նրանք չկարողացան բացահայտել կրոնի ծագման կոնկրետ աղբյուրները, առավել ևս նրա վերացման իրական միջոցները։ Լուսավորության մեջ պիտի փնտռել, նրանց կարծիքով, կրոնից զերծ մնալու յերաշխիքը։ Մեր որերի այն ճշմարտությունը, վոր կրոնը, դա հասարակության մեջ յեղած զանակարգային անհավասարությունների արդյունք է ու կվերանա այդ ներհակությունների արմատահանման հետևանքով, կատարյալ գաղտնիք եր նրանց համար։ Այս տեսակետից սխալ է, ի հարկե, բուրժուական աթեիզմը վորևե չափով նույնացնել պրոլետարականի հետ, վորի գերքերից միայն, վերջին հաշվով, կարող է լինել հետևողական

գործոն ու մարտական անաստվածությունը։ Սակայն մյուս կողմից, չի կարելի չնկատել, անգամ ինչպես Լենինն է պահանջում, չոգտագործել կրոնի ու անաստվածությունների դեմ, այսորվա մեր մղած պայքարում, 18-րդ դարի աթեիստների «խիզախ, կենդանի տաղանդավոր, սրամիտ, բացահայտ հաճախող պուբլիցիստական, տիրապետող տերտերական նուիրյան դեմ»։

Վերևում, այնուհետև մենք տեսանք, վոր «Բնության Սիստեմի» հեղինակը, ժխտելով մատերիայի ինքնուրույն մասին մետաֆիզիկական տեսակետը, շարժման տակ հասկանում եր մարմինների հասարակ տեղափոխությունը տարածության մեջ։ Շարժումն այս ըմբռնման համաձայն, կարող է միայն փոխել առարկաների դրությունը մեկը մյուսի նկատմամբ, նրանց միացման կամ անջատման պատճառ դառնալ։ Ինչ վերաբերվում է նյութի ամենափոքր ու այն ժամանակվա տեսակետով անբաժան մասնիկներին՝ ատոմներին, Հոլբախը գտնում է, վոր սխալ է նրանց ներսում վորևե շարժում տեսնել։ Շարժումը փոխազդեցությունների արդյունքն է ու այս կամ այն մարմնի շարժման մեջ գտնվելը մի ուրիշ մարմնի նրա վրա ունեցած արտաքին հարվածի հետևանք կարող է լինել։

Աշխարհը մեխանիստական այդ առանձին շարժումների գումարն է։ Վերջիններս վոչ մի վորակական փոփոխություն չեն մտցնում բնության մեջ։ Մարմինների առաջ գալը զուտ ֆիզիկական որենքների ուժով ատոմներից այս կամ այն կոմբինացիաների ստեղծումն է նշանակում, գոյությունը՝

վերջիններիս հարաբերական կայունությունը, վոչընչացումը՝ նրանց տարալուծումն ու վերադարձը նախորդ վիճակին։ Մատերիայի հավիտենական շարժումն այսպիսով միշտ միևնույն հետևանքների յե հանգում ու փակվում մի մեծ անփոփոխ, բնական շրջապտույտի մեջ։ Չկա իսկական ծագում, զարգացում, թռիչք ու փոխանցում դեպի ուրիշը։ Այն փոփոխությունը, վորի մասին խոսում է Հոլբախը, միևնույն վորակի ներսում, նյութի միատեսակ տարրերի քանակական, տարբեր կոմբինացիաներն են, այդ տարրերի գումարումը, հանումը։

Այստեղ ակներև է այն սահմանափակությունը, վորը հատուկ եր 18-րդ դարի բուրժուական անգամ այդ առաջավոր մտածողներին։ Ճիշտ է, նրանք կարողացան վերացական ռացիոնալիզմին հակադիր, փորձով առաջնորդվող սենսուալիստական մատերիալիստական փիլիսոփայություն ստեղծել, վորի միակ խնդիրը բնության ու նրա մասերի ճշգրիտ ուսումնասիրությունն եր։ Հոլբախը գրում է «Բնության Սիստեմը», Դիդրոն—«Բնության Մեկնաբանումը», Ռոբինեն—«Բնության մասին» ստվար աշխատություններ։ Հաստատվում է ֆիզիկական աշխարհի առաջնության գաղափարը գիտության ու փիլիսոփայության մեջ։ Մետաֆիզիկան հայտարարվում է դատարկ ու տափակ խորհրդածության արդյունք։ Իսկական փիլիսոփայությունը պիտի կառուցել, կանգնած մնալով ֆիզիկայի ու առհասարակ բնական գիտությունների հաստատ պատվանդանի վրա։

Սակայն դուրս վանելով մետաֆիզիկական փիլիսոփայությունից, ֆրանսիական մատերիալիստները մեխանիստներ էին, ու բնության ուսումնասիրության խնդրում կանգնած մնային մետաֆիզիկական տեսակետի վրա, որքանով նրանք չհասան յերևույթներն իրենց զարգացման դիալեկտիկական պրոցեսում ըմբռնելու կարողությանը։

Բնության նկատմամբ նման հայացքը, Ենգելսի կարծիքով, անխուսափելի յեր 18-րդ դարի պայմաններում, յերբ զարգացման համեմատաբար բարձր աստիճանի յեր հասել միայն կարծ մարմինների մեխանիկան ու համարյա խանձարուրի մեջ էին գտնվում յերկրաբանությունը, բուսաբանությունը, քիմիան։ Այդ դարի վերջին ու 19-րդ դարի սկզբներին են վերաբերվում էլեկտրական հոսանքի ողնությամբ ալկալիի տարալուծման ու մի շարք քիմիական տարրերի հայտնաբերման ուղղությամբ Հեմֆրի Դեվիի թափված ջանքերը, եվոլյուցիոն տեսության կարկառուն ներկայացուցիչ՝ Լամարկի գործերը, («Զոոլոգիայի փիլիսոփայությունը»), Սենտ-Իլերի ու Կյուվիեի ուսումնասիրությունները, առաջինը կենդանական տեսակների—մոդիֆիկացիայի, յերկրորդը՝ յերկրագնդի փոփոխությունների ու հեղաշրջումների առաջարկում։ Դիալեկտիկական աշխարհայեցողությունը կարող եր առաջ գալ, այս իմաստով ավելի լայն ու բազմաթիվ փաստերի կուտակման հետևանքով, մի բան, որն ինչպես հայտնի յե, չուներ 18-րդ դարը։ Այսպիսով, այս շրջանի համար այնքան բնորոշ ամեն ինչ մեխանիկական որինաչափության հանդեցնելու ձգտումը դիտական իր բացատրությունն ունի։ Ֆրանսիական մատերիալիզմի թերությունները բղխում էին նրան ստեղծող եղոխայի սահմանափակությունից։

Պատմության մեջ մեխանիստական մեթոդը, ինչպես վերևում տեսանք, հասցնում է սոցիալական յերևույթների «ստատուրացմանը»։ Վոր մարդը, բնության մի մասն է, նրա արդասիքն ու նրա որենքներին յենթակա՝ իհարկե ճիշտ է։ Նմանապես ճիշտ է և այն, վոր մարդու գործողությունները, իր կամքից անկախ, իրական, վերջին հաշվով արտադրական հարաբերություններից բղխող պատճառներ ունեն։ Մենք, հետևապես, դիտերմինիստներ ենք։ Սակայն մարդը, ամենից առաջ հասարակության անդամ է, վորն իր պատմությունը հյուսում է բուն մարդկանց, նրանց խմբակցությունների, դասակարգերի ու դեկավարների միջոցով։ Վերջիններս վոչ միայն պատմության սուբյեկտ են, այլև սուբյեկտ։ Մարդիկն են կատարում իրենց պատմությունը։ Նրանք փոխում են, ինչպես բնությունը, նույնպես և այն հասարակական հարաբերությունները, վորոնց մեջ ապրում են։ Իրենց գործողությունների մեջ նրանք կույր են, քանի դեռ չեն հասել բնական ու սոցիալական աշխարհի որինաչափության, նրանց զարգացման տենդենցների և ուղղությունների ըմբռնմանը, վորոնց ճիշտ ճանաչողությունը, նրանց համար ակտիվ ու պատահական գործունեության հնարավորություն է ստեղծում։ Իսկ դա ազատություն է։ Ազատությունը, — ասում են դելսը, — գիտակցված անհրաժեշտությունն է։

Ուստի սխալվում եր Հոլբախը, յերբ ամեն ինչ ֆատալիզմով եր բացատրում, վորովհետև վերջինս պատմական դեպքերի կանխորոշություն և նշանակում, մարդկանց բացարձակ անզորությունն ու վոչնչությունը նրանց հանդեպ։ Դժվար չե նկատել, վոր այսպիսի զատողությունը կարող և հասցնել ճակատագրին կուրորեն հպատակվելու միստիկական համոզմանը։

Սակայն 18-րդ դարի մատերիալիզմի այս անհետևողականությունների ու արատների մեջ դրսևորվում և նրա հետևողական բուրժուական եյությունը։ Հասարակական յերևույթները, բնությանը հանդեցնելու բացահայտ մեխանիստական փորձով, հավերժացման ասպիճանին են բարձրացնում իր վերելքն ապրող բուրժուական դարգացման, — նույնքան ժամանակավոր ու անցողիկ, ինչպես ֆեոդալիզմը — որենքները։ Ահա թե ինչու ֆատալիզմը 18-րդ դարի մտածողների բերանում վոչ միայն բնության, այլ միևնույն ժամանակ կապիտալիզմի անխուսափելիության առաջ գլուխ խոնարհեցնելու կոչի օբյեկտիվ իմաստն ուներ։

V

Յեթե ֆրանսիական մատերիալիստների ֆիզիկական աշխարհի մասին ունեցած տեսությունը, իր ակունքների իմաստով, ինչպես վերև ասացինք, առընչություն ուներ Դեկարտի ու Նյուտոնի անվան հետ, ապա իմացաբանության մեջ նման նախապատվությունը պատկանում և բացառապես անգլիացի Լոկկին։

Անհրաժեշտ և նկատել, վոր վերջինիս խոր ազդեցության տակ են գտնվել 18-րդ դարի ֆրանսիական համարյա բոլոր լուսավորիչները։ Վոլտերը, վորին անշուշտ, այդ փիլիսոփայի ֆրանսիական հետևողների շարքին պիտի դասել, իր ֆանտաստիկական պատմվածքներից մեկում նկարագրում և Սիրիուսի ու Սատուրնի յերկու բնակիչներին, վորոնք տիեզերական շրջագայության ժամանակ ընկնում են նաև մեր մոլորակը։ Այստեղ, արտասովոր շատ յերևույթների թվում, նրանց զարմացնում և, յերկրի բնակիչների բանական ընդունակությունների բարձր աստիճան զարգացած լինելը։ Նշանավոր փիլիսոփաների կողմնակիցների հետ ընդարձակ բանավեճի մեջ մտնելուց հետո, նրանք — արտայերկրային այդ բնակիչներն անգամ, — յերկրի վրա ամենաճշմարիտ ու բանական միայն Լոկկի սիստեմը գտան։ Լոկկի պես մտածողին, Հելվեցիուսի կարծիքով, ժամանակն անզոր և մոռացության քողի տակ թողնելու, նա մարդկային այն սակավաթիվ հանճարներից և, վորոնք միշտ ել անմահ կմնան։ Ինչ խոսք, վոր անգլիացի տիպիկ համաձայնողական փիլիսոփային ժամանակից ու տարածությունից վեր տեսնելու այս փորձը, իր պատճառն ուներ, և այդ այն և, վոր նրա ուսմունքը, ինչպես Մարքսն և ասում, վորոշ հենակ ծառայեց ֆրանսիական մատերիալիստների համար հին մետաֆիզիկայի դեմ նրանց մղած պայքարում։

Լոկկի մեծությունը, ֆրանսիական մատերիալիստների աչքում ամենից առաջ, գաղափարների բնածին լինելու մասին Դեկարտի ունեցած տեսության ան-

հեթեթությունը վեր հանելու մեջ կը։ Մեր բոլոր հասկացողությունները, նրա համոզմամբ, ձեռք են բերված փորձից, բան վորում պետք է տարբերել յերկու կարգի — նախ արտաքին փորձ, վորը հետևանք է առարկաների մեզ վրա ունեցած ներգործության,— դա զգացողությունն է և ներքին փորձը,—հոգու ինքնագործությունը,—վորն այլ կերպ ռեֆլեկս է կոչվում։ Զգացողությունը և ռեֆլեկսը այն աղբյուրներն են, վորոնք մեզ մատակարարում են մեր բոլոր իդեաներն ու տպավորությունները։ Այնուհետև Լոկկի կարծիքով, արտաքին աշխարհը, մեր մեջ առաջացնում է սկզբնական վորակներ, — ինչպես որինակ տարածականությունը, շարժումը, ֆիզուրան, հանգիստը և յերկրորդական վորակներ, — ինչպես գույնը, լույսը և այլն։ Առաջինները, մեզանից անկախ գոյություն ունեցող հատկությունների ադեկվատ արտացոլումն են մարդու գիտակցության մեջ, յերկրորդները, մեզանից դուրս վոչ մի որիգինալ չունեն, մեր ֆիզիկական կազմության արդյունք լինելով։ Հետևապես Լոկկը դուալիստ է, վորովհետև ընդունում է իմացության յերկու՝ իրարից անկախ աղբյուրների գոյությունը, իդեալիստ, վորքանով բխեցնում է գաղափարները մեր ներքին աշխարհից ու սուբյեկտիվ հայտարարում արտաքին աշխարհի բազմազանությունը, — այստեղից ճանապարհ դեպի Բերկլի, Յում.—մատերիալիստ, վորքանով բնությունը զգացողության միջոցով արտացոլելու մեջ է տեսնում իմացության պատճառը, — այստեղից

ճանապարհ դեպի ֆրանսիական մատերիալիստները։

Ֆրանսիական մատերիալիստներն այսպիսով հարում յեին Լոկկի ուսմունքի մատերիալիստական տարրերին։ Հետևելով վերջինիս, նրանք ևս, մեր բոլոր գաղափարները բխեցնում եին փորձից։ Փորձի անտեսումը, — կարդում ենք այս գրքում, թերի գաղափարների ու մոլորությունների պատճառ է դառնում։ Ճշմարիտ գիտությունը պիտի փորձնական լինի, այսինքն՝ առաջնորդվի միայն զգացողությունների հաղորդած վկայություններով։ Զգացողությունն արտաքին առարկաների հետ մեր ունեցած առընչության արդյունք է, ու դրանից զատ իմացության համար վոչ մի աղբյուր գոյություն չունի։ Ռեֆլեկսների մասին Լոկկի ուսմունքը վճռականորեն մերժելով, ֆրանսիական մատերիալիստները, մասնավորապես Հելվեցիուսը, մատածողության յուրաքանչյուր գործողությունը հանդեսցրեց իրերի կողմից մեր մեջ առաջ բերած զգացումներին։ Նրանցից միայն Դիդրոն վիճարկելով Հելվեցիուսի այս տեսակետը ճանաչողության պրոցեսում նաև բանական վորոշ ակտերի առկայություն ու անհրաժեշտություն ենթադրում։ Ինչ վերաբերում է պրակտիկային իմացության մեջ ներառնելու ու նրան ճշմարտության չափանիշ դարձնելու խնդրին, ապա նրանցից և վոչ մեկն այդ գաղափարին չհասավ։ Այստեղից բխում է այդ մատերիալիզմի սենսուալիստական ու հայեցողական բնույթը։

Սակայն ֆրանսիական մատերիալիստները խոշոր քայլ արեցին դեպի առաջ Լոկկի համեմատությամբ —

հաղթահարելով նրա իմացաբանական դուալիզմը։ Հեղափոխական բուրժուազիայի մարտական փիլիսոփայություն ստեղծելու գործում առհասարակ ոգտագործելով անցյալ ուսմունքների բոլոր դրական արժեքները, նրանք դեն նետեցին նրանց անհետևողականությունը, աստվածաբանությունը, մետաֆիզիկան (Դեկարտ), իդեալիզմը (Լոկկ)։

Այս նկատառումով ել Մարքսն ասում է, մասնավորացնելով իր խոսքը Կանդելյակու մասին, որ վերջինս վոչ միայն աշակերտեց, այլև այն ժամանակվա ֆրանսիական հասարակության մեջ հառունացող նոր յերևույթների տեսանկյունից մեկնաբանեց Լոկկի ուսմունքը, հին մետաֆիզիկայի դեմ նրան պայքարի դենք դարձրեց։ Հանձինս Հելվեցիուսի,—վորը Լոկկի սկզբունքները հասարակական յերևույթների նկատմամբ կիրառելու խնդրով զբաղվեց, — մատերիալիզմը, նույն Մարքսի վկայությամբ յուր իսկական ֆրանսիական բնույթն ստացավ։

Վերը հիշված իր գլխավոր աշխատությունը Հելվեցիուսն սկսում է այն բանից, որ մտքի գիտությունը սերտորեն կապված է սրտի ու կրքերի գիտության հետ և որ անկարելի յե գրել առաջինի մասին, չանդրադառնալով մարդկանց վարվեցողության մոտիվներին — բարոյականությանը։ Առաջնորդվելով նրանով, որ յուրաքանչյուր յերևույթ, որ բնազավառին ել նա չվերաբերվի, իր պատճառն ունի, մեր փիլիսոփան իրեն խնդիր է դնում ստեղծել բարոյականությունը ճիշտ այնպես, ինչպես ստեղծվում է «ամեն մի փորձնական գիտություն»։

Այս նպատակին հասնելու յելակետը, Լոկկից փոխառած, մեզ արդեն ծանոթ համոզումն է, որ մարդու մեջ բնածին վոչինչ չկա՝ վոչ գաղափարներ և վոչ ել գործնական սկզբունքներ։ Մարդիկ դառնում են այն, ինչ են։ Նրանք ամբողջովին արդյունք են միջավայրի։ Իսկ այս խոսքի տակ պետք է հասկանալ վոչ միայն բնական առարկաները, վորոնց հետ մարդիկ գործ ունեն, այլև նրանց բարեկամները, սիրելիները, շրջապատող անձնավորությունները, ընթերցանությունը և վերջապես կառավարման ձևերը։ Արտաքին միջավայրի հետ մարդն առընչության մեջ է մտնում ֆիզիքական զգայարանների միջոցով, վորոնք հաղորդում են նրան յերկու կարգի զգացում — հաճելիություն և ցավ։ Քանի որ առաջինն ոժանդակում է գոյության պահպանմանը, — մենք ձգտում ենք նրան, յերկրորդից ընդհակառակը՝ խուսափում։ Անձնական ոգտավետությունը և ինքզինքը սիրելը դառնում է մեր վարվեցողության միակ չափանիշը։ Ամեն ինչ անհատական շահավետության տեսանկյունից գնահատելու բնազդը, — ասում է Հելվեցիուսը,— եֆիբի նման աննկատելիորեն ներթափանցում է մեր վողջ մարմինը։ Անգամ այն ժամանակ, յերբ թվում է թե մենք ուրիշին ենք հարգում, իրականում նախապատվում ենք նրա մեջ սոսկ մեզ հիշեցնող գծերը, — այսինքն հարգում ենք ինքներս մեզ։

Հասարակությունը բաղկացած է իրենց ինտերեսներով առաջնորդվող այդպիսի բազմաթիվ քաղաքացիներից, վորոնք մեկը մյուսից կախման մեջ են և ունեն նաև ընդհանուր շահ։ Ընդհանուր ու

մասնավոր ինտերեսների փոխհարաբերությունը Հելվեցիուսն համեմատում է ընդհանուր և մասնավոր շարժումների փոխհարաբերության հետ տիեզերքում։ Ինչպես առանձին մարմինների համար ավելի ակնբախ է նրանց բնորոշ շարժումը, քան ընդհանուր որինաչափության ազդեցությունը, ճիշտ նույնպես մարդկանց գործողություններն ավելի շուտ պայմանավորվում են իրենց համակրանքներով և հակակրանքներով, քան ընդհանուրի բարորության գաղափարներով։ Անհատի ու ընդհանուրի շահերի այս անհերդաշնակությունը հասարակության անդամների բարորության հասնելու պարագաների տարբերությունից է բխում։ Մարդկանց զանազանությունը պայմանների ու դաստիարակության վոչ միակերպության արդյունք է։ Նորմալ ծնված մարդը բոլոր տվյալներն ունի մտավոր ու բարոյական զարգացման համար, — խնդիրը միայն պայմանների մեջ է։ Մարդկանցից նրանք, վորոնք բարենպաստ դաստիարակություն ունեն, ձեռք են բերում և՛ լուսավորություն, և՛ սուր ու ընդարձակ միտք, և՛ հաստատակամություն, և՛ առաքինություն։ Ընդհակառակը՝ այս տեսակետից տարաբախտները մտադուրկ ու արատավոր են դառնում։ Տաղանդը, — ընդհանուրի սեփականությունն է, իսկ նրա զարգացման պարագաները — հազվադեպ։ Վորովհետև մարդիկ հազվադեպ են ընկնում բարենպաստ պայմանների մեջ, ապա առաջնակարգ հանճարները պետք է իրականում խիստ հազվադեպ լինեն։ Որինակ, յեթե այդ եպոխայի Ֆրանսիան լի յեր արատավորներով, թշվառնե-

ցով, հանցավորներով, չարագործներով ու մատների վրա կարելի յեր հաշվել Դեկարտի, Մոլիյերի, Լեբրենի, Գոլբերու նման մարդկանց, ապա դրա պատճառն այն է, վոր նրա որենքները քիչ նպաստավոր հող են ստեղծում իր քաղաքացիների յերջանկության համար։ Մասնավորեցնելով իր խոսքը արևելյան յերկրների մասին, Հելվեցիուսը պնդում է, վոր բռնակալությունն առհասարակ անխուսափելիորեն բարքերի ապականության, մտքի ու հառաջադիմության կաշկանդման, առաքինությունների հազվադեպության և հացնում։ Ընդհակառակը, բազմապիսի ու բազմաթիվ հանճարների գոյության փաստը հին Հունաստանում ու Հռոմում, մեր փիլիսոփայի կարծիքով, նրանց հանրապետական կարգերի և զարգացած որենսդիրների արդյունք եր, վորոնք կարողացան ներդաշնակել անհատական շահերը հասարակականի հետ։

Այսպիսով մարդն ամբողջովին որենքների արդասիք է։ ուստի նրա բարքերի ռեֆորմը պետք է սկսել որենքների ռեֆորմից։ Բարոյագիտությունն ունայն գիտություն է, քանի նա չի միաձուլվում որենսգիտության և քաղաքականության հետ։ Այս վերջիններիս վրա հենված դաստիարակությունը մարդկանց վերափոխելու հզոր զենք է դառնում։

Բարոյագիտության նոր սկզբունքների կառուցման հետամուտ Հելվեցիուսն, ինչպես տեսանք, հասարակության քաղաքական վարչաձևի փոփոխման գաղափարին հանգեց։ Յեվ դա պատահական չեր։ Տնտեսապես զգալի ամրապնդված ֆրանսիական բուրժուա-

ղեան իր կարողություններին հետագա անարգել զարգացման հանապարհին դեմ եր առել տիրապետող ֆեոդալական քաղաքական հարաբերություններին։ Վերջիններիս հաղթահարումը անհրաժեշտ եր բուրժուազիային, անշուշտ, վոչ թե հասարակությունը յերջանկացնելու համար, ինչպես հավատացնում եյին նրա իդեոլոգները, վորոնց թվում նաև Հելվեցիուսը (դա մի շրջան եր, առում է Զերնիշևսկին, յերբ գրծարանատիրոջ, առևտրականի ու փողատիրոջ շահերը հանրության շահերի պատրանքն եյին ստեղծում), այլ ամենից առաջ բուրժուազիայի նյութական հնարավորությունները զարգացնելու տեսակետից։ Քաղաքական հեղափոխության նախորյակին ապրող բուրժուազիայի գրությունը, այդ դասակարգի ներկայացուցիչների գլխում, սոցիալական բոլոր յերևույթների նկատմամբ քաղաքական հարաբերությունների առաջնության համոզումն ստեղծեց։

Բայց ինչպես փոխել մարդկային արատների ապրյուրը ներկայացնող որենսդրական հաստատությունները։ Մեզ հայտնի յե այս հարցին տրված Մարքսի մեկ ճշմարիտ պատասխանը, վորի համաձայն, գիտությունը, գեղարվեստը, փիլիսոփայությունը, ընտանեական ու քաղաքական հարաբերությունները, հասարակության հեմքը կազմող արտադրական վորոշ յեղանակի հետևանք լինելով, փոխվում են այս վերջինիս զարգացման ու հեղափոխականորեն վերակառուցման զուգընթաց։ Ֆրանսիական մատերիալիստները վոչ մեկին ֆեոդալական պետական կարգերի, — չնայած նրանց հանդեպ ունեցած իրենց խոր

ատելությանը, — բանի ուժով փոխելու գաղափարին չհասան, այլև պատմության մեջ ռացիոնալիստներ ուրեմն և իդեալիստներ մնացին, վորովհետև կարծում եյին, թե հնարավոր է հասարակությունը վերակառուցել լուսավորության ու դաստիարակության միջոցով։ Յերկրի բարգավաճության համար, ըստ նրանց, բավական է նրա գլուխն ունենալ բանական ու առաքինի որենսդիրներ։ Սակայն իշխանությունը, բուրժուական որենքն բանական մարդկանց ձեռքն հանձնելու համար, հետագայում, ինչպես հայտնի յե, անհրաժեշտ յեղավ հրի ու սրի դիմել։ Վորքան էլ այս վերջին հանգամանքը ֆրանսիական մատերիալիստներին արտասովոր ու հավանորեն անընդունելի կարող եր թվալ, գաղտնիք չե, վոր նրանց ուսմունքի անխուսափելի յեզրակացությունն եր 1789 թվի գիլյոտինի պրակտիկան։

Սակայն ֆեոդալիզմի դեմ ուղղված այդ հավորդատի ընթացքում բուրժուազիան գիլյոտինի յենթարկեց վոչ միայն հին աշխարհի ներկայացուցիչների՝ թագավորի ու պալատականների, հողատերերի ու կապալառուների գլուխները, այլև իր իսկ սեփական մատերիալիստական հոգին։ Գրավելով քաղաքական իշխանությունը և ժողովրդական մասսաների վրա իր տիրապետությունը հավերժացնելու նպատակով, նա նորից աստվածաբանության ու կրոնին վերադարձավ, վորոնց դեմ այնքան փայլուն պայքարեցին նրա առաջավոր ներկայացուցիչները։ Մերկացվեց վերջիններիս տենչած յերջանկության ու առաքինու-

թյան վողջ բուրժուական եյությունը, — հասարակությունը մատնվեց նյութական մի նոր կեղեքման, հոգեկան մի նոր կաշկանդման, բարքերի մի նոր այլասեռման։ Մատերիալիստական կենդանի փիլիսոփայությունը փոխարինվեց մտածողության անհարակ ու ունայն պոզիտիվիստական և իդեալիստական սիստեմներով։

Մոռացության տրված մատերիալիստական փառավոր տրադիցիաները սակայն շատ շուտով վերակենդանացվում են բանվոր դասակարգի կողմից։ Արտահայտելով նրա առաջին տարերային ու տակավին չկազմակերպված ցասումը, ֆրանսիական, ինչպես և անգլիական ուտոպիստ-սոցիալիստները 18-րդ դարի մատերիալիստներին հետևելով, տիրապետող, արդեն բուրժուական որենքների ու հասարակությունների մեջ եյին փնտրում մարդկանց թշվառությունների պատճառը։ Մատերիալիզմը նրանք կոմունիզմի տրամաբանական հիմքը դարձրին։ Լոկկից ակունք առնող ֆրանսիական մատերիալիստների թերը, այսպիսով, ինչպես Մարքսն է ասում, անմիջականորեն դեպի սոցիալիզմն ու կոմունիզմը տարավ։

Սակայն չնայած կապիտալիզմի սուր քննադատությանը, ուտոպիստ-սոցիալիստները նրա բարենորոգչության և վերադասակարգության դաղափարից հեռու չգնացին։ Մարդկանց շահագործումից ու անհավասարությունից ազատագրելու իրական ուղին նրանց համար էս գաղտնի մնաց։ Միայն իր շահերի լրիվ գիտակցության հասած պրոլետարիատը

հեղափոխական պայքարը կապիտալիզմի դեմ, հասարակությունն ամեն տեսակ կեղեքումներից, անարդարությունից ու թշվառությունից դեպի սոցիալիստական յերջանիկ կարգերը կարող եր առաջնորդել։ Ազատագրական այս վեմ պայքարի ուղին լուսավորող մարքսիզմը համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեծ ճանապարհից հեռու ծագած, ինչ վոր կղզիացած, քարացած տեսություն չէ, ասում է Լենինը։ Ընդհակառակը, նա առաջ յեկավ իբրև ուղիղ և անմիջական շարունակություն մարդկային գիտական մտքի, ու նրա մեծագույն նվաճումների միակ որինավոր հաջորդն յեղավ։ Գերմանական իդեալիստական կլասիկ փիլիսոփայության, անգլիական կլասիկ քաղաքատնտեսության հետ միասին ֆրանսիական ուտոպիստական սոցիալիզմի միջոցով 18-րդ դարի մատերիալիզմը մարքսիզմի տեսական աղբյուրներից մեկը կազմեց։ Հաղթահարելով այդ ուսմունքների սահմանափակությունը, մարքսիզմը զարգացրեց ու ավելի բարձր աստիճանին դրեց մարդկային մտքի բոլոր ընդգավառները, վորոնց թվում նաև փիլիսոփայությունը։ Վերջինս շնորհիվ դիալեկտիկական մատերիալիզմի արդեն զերծ է նախորդ մատերիալիզմի թերություններից ու արատներից։

Այսպիսով 18-րդ դարի բուրժուական մատերիալիզմը, հիմա լոկ անցյալ մի ետապ է. նա անզոր է բավարարել մեր այսորվա վոչ գործնական և վոչ էլ տեսական պահանջները։ Սակայն դաղտնիք չէ, վոր ապագա անդասակարգ հասարակություն կա-

ուցելու շահերի տեսանկյունից մենք հաճախ ենք դիմում պատմության շեմարանին, այնտեղ լքված ու մոռացության տված արժեքները քննադատորեն ոգտագործելու նպատակով։ Անցյալի ժառանգության այդ շեմարանում, ինչ խոսք, մեր աչքից չի վրիպելու Դիդրոյի, Հոլբախի, Հելվեցիուսի ու մյուսների պայծառ առտղաշարքը։ Պիտի միայն ցավել, որ մինչև այժմս փորձ չի արվում նրանց ավելի ստվար գործերը հայ ընթերցողների սեփականությունը դարձնելու ուղղությամբ։

Մ. ԴՐԻԳՈՐՅԱՆ

ԲՆՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ԻՍԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

ՆԱԽԱԲԱՆ

Մարդը դժբախտություն ունեցավ ցանկալու դուրս գալ իրականության սահմաններից. նա փորձեց թափանցել տեսանելի աշխարհից այն կողմը։ Նա անտեսեց փորձը՝ յենթադրություններով սնվելու համար։ Նա չհամարձակվեց զարգացնել յուր բանականությունը, վորի մասին նրան վաղուց ի վեր նախազգուշացրել եյին։ Նախքան այս կյանքում յերջանիկ լինել՝ նա հավակնեց մի այլ կյանքում յերջանկություն վորոնելու։

Հեղինակի նպատակն է՝ մարդուն վերադարձնել բնության, նրա մեջ արթնացնել բանականության սերը, ցրել այն սավերները, վորոնք քողարկում են տենչած յերջանկության միակ ուղին... արտահայտել մարդկանց հանգստության ու բարեկեցության

համար ոգտակար և մտքի հառաջադիմության համար բարենպաստ՝ խորհրդածություններ։

Հեռու բարոյականության սրբազան կապանքները փշրելու ցանկությունից՝ հեղինակն, ընդհակառակը, ցանկանում է նրանց առ առավել ամրապնդումը և ձգտում է զոհասեղանին դնել առաքինությունը, վորը միակ արժանի յե բոլոր մարդկանց ակնածանքներին։

ԳԼՈՒԽ I

ԲՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդը բնության արգասիքն է, նա ապրում է բնության մեջ, յենթակա յե նրա օրենքներին. նա չի կարող ազատվել նրանից, նա չի կարող իր մտքումն անգամ դուրս գալ նրա սահմաններից... Բնությունից դուրս եյակի համար վոչինչ բարձր չկա, քան այն մեծ ամբողջությունը, վորի մի մասնիկն է ինքը։ Բնությունից բարձր կամ տարբեր յենթադրված եյակները՝ պատրանքներ են, վորոնց մասին մենք չենք կարող ոեալ դաղափարներ կազմել։

Մարդը զուտ ֆիզիկական եյակ է։ Բարոյական մարդը նույն ֆիզիկական մարդն է՝ քննարկված վորոշ տեսանկյունից։ Նրա կազմությունը բնության գործն է։

Նրա տեսանելի գործողությունները և անտեսանելի ներքին շարժումները իր մեխանիզմի բնական արդյունքն ու անխուսափելի հետևանքն են։ Այն, ինչ նա հնարել է՝ իրեն հատուկ էության անհրաժեշտ հետևանքն է, ինչպես և մեր մտապատկերները։ Արվեստը սոսկ բնությունն է, վորը ներգործում է յուր կերտած գործիքների ոգնությամբ։ Ամեն ինչ բնության ներշընչումն է։

Իր բոլոր հետազոտությունների մեջ մարդը պետք է դիմե ֆիզիկային և փորձին։... Բնությունը ներգործում է պարզ որենքների միջոցով։ Եթե հրաժարվենք փորձից, մեր յերևակայությունը մեզ իսկույն կմոլորեցնի։ Փորձի բացակայությունից է, վոր մարդը թերի զաղափար է կազմել մատերիայի մասին։... Ծուլությունը զերադասում է առաջնորդվել ընդորինակությամբ, հնամոլությամբ, հեղինակավորությամբ, քան փորձով՝ վորը գործունեություն է պահանջում, քան բանականությամբ՝ վորը մտածողություն է յենթադրում։ Սրա հետևանքն է յեղել դժկամություն այն ամենի նկատ-

մամբ, ինչ շեղվում է սովորական կանոններից, և ակնածանք՝ հնադարյան հաստատությունների վերաբերմամբ։

Հավատն առաջանում է փորձի բացակայությունից։

Արդ, դիմենք փորձին. ուսումնասիրենք տիեզերքը. նա ներկայացնում է միայն մատերիա և շարժում։

ԳԼՈՒԽ II

ՇԱՐԺՄԱՆ ՑԵՎ ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Միայն շարժումն է, որ հարաբերություններ է հաստատում մեր զգայարանների և այն էյակների միջև, որոնք գտնվում են մեր մեջ կամ մեզնից դուրս։

Պատճառը մի էյակ է (être), որն այլ էյակի շարժման մեջ է դնում կամ նրա մեջ որևէ փոփոխություն է հարուցում։ Հետևանքն այն փոփոխությունն է, որը մի մարմին առաջ է բերում մի այլ մարմնում՝ շարժման ոգնությամբ։

Թե ինչպես է որևէ մարմին մեզ վրա ներգործում, այդ մենք իմանում ենք այն փոփոխության շնորհիվ, որը նա առաջացնում է մեր մեջ։

Գործողությունների շնորհիվ է, որ մենք դատում ենք ներքին շարժումների մտածողության, արարքների և այլ զգացմունքների մասին։ Եթե որևէ մարդ փախուստի է դիմում, մենք յեզրակացնում ենք, թե նա վախենում է։

Մարմինների շարժումը միշտ իրենց էյության անհրաժեշտ հետևանքն է։ Յուրաքանչյուր մարմին ունի շարժման յուրահատուկ որենքներ։

Տիեզերքում ամեն ինչ—շարժում է։ Բնության էյությունը՝ գործողությունն է։ Բոլոր էյակները ծագում, աճում, նվազում և չքանում են։ Քարը, յերկաթը և այլն ամեն ինչ ներգործում է։

Գետնին ծանրացած քարը ճնշում է նրան և ներգործում։ Ամենակուռ մարմինների եմանացիան մեր հոտառության է հասնում շարժման միջոցով։

Այդ շարժումը բնությունը ստացել է ինքն իրենից, որովհետև նա մի մեծ ամբողջություն է, որից դուրս վոչ մի բան չի կարող գոյություն ունենալ։ Այդ շարժումը բղխում է մատերիայի էյությունից։

Մատերիան շարժվում է յուր իսկ եներ-գիայի շնորհիվ։ Նա հատկություններ ունի, վորոնց համեմատ էլ ներգործում է։

Վորպեսզի կարելի լինի յենթադրել մատերիան շարժող պատճառի գոյությունը, պետք է ընդունենք, վոր մատերիան գոյություն է ունեցել շարժումից առաջ, մի բան, վոր անհնարին է։ Յեթե մատերիան չի կարող լիովին անհետանալ կամ դադարել գոյություն ունենալուց, ապա ինչպես ըմբռնել այն, թե նա կարողացել է յերբևէ սկիզբ առնել։

Վերեղից է ծագել մատերիան։ Նա միշտ յեղել է։ Վերեղից է առաջացել մատերիայի շարժումը։ Նա պետք է, վոր միշտ շարժվելիս լիներ, վորովհետև շարժումը նրա գոյության, եյության հետևանքն է, իսկ գոյությունը յենթադրում է հատկություններ՝ գոյություն ունեցող իրերի մեջ։ Յեվ քանի վոր մատերիան ունի իր հատկությունները, ապա նրա գործողության յեղանակը անհրաժեշտորեն պետք է բղխե նրա գոյության ձևից։ Յեթե վորևե մարմին ծանրություն ունի, պետք է վոր ընկնի։

ԳԼՈՒԽ III

ՄԱՏԵՐԻԱՅԻ ՅԵՎ ՆՐԱ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատերիայի փոփոխությունները, ձևերը, ձևափոխումները՝ շարժման արդյունք են։

Այն ամենը, ինչ գոյություն ունի, ծագում է, փոփոխվում, աճում և կործանվում՝ շարժման շնորհիվ։ Մատերիայի մոլեկուլների փոխանցումը, փոխանակությունը, անընդհատ շրջապտույտը կատարվում է շարժման ոգնությամբ։ Այդ մոլեկուլները տարալուծվում են, վորպեսզի հետագայում ստեղծեն նոր եյակներ։ Մի մարմին սնուցում է մի այլ մարմնի։ Վորոշ ժամանակամիջոցից հետո, յուրաքանչյուր մարմին վերադարձնում է ընդհանուր զանգվածին այն

տարրերը, վորոնք նա փոխ եր առել նրանից։

Բնությունն իր համակցություններով մոլորակներ և ստեղծում։ Շարժումը թերևս ցրե այն մասերը, վորոնցից նա կերտել է այդ հիասքանչ զանգվածները և վորոնց մարդն իր գոյության կարճ ժամանակամիջոցում լոկ մի ակնթարթ և տեսնում։

ԳԼՈՒԽ IV

ԲՈԼՈՐ ԵՑԱԿՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՐԵՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՁԳՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՎԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԻՆԵՐՑԻԱՅԻ ՈՒՑԺԻ ՑԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երբ մենք տեսնում ենք գործող պատճառը, նրա հետևանքներն ել բնական ենք համարում։ Իսկ յերբ տեսնում ենք վորևե արտասովոր յերևույթ և չենք կա՛ղ հայտարերել նրա գործողության պատճառը, մենք դիմում ենք յերևակայության, վորը մեր մեջ պատրանքներ է ծնում։ Բնության մեջ սակայն կարող են լինել միայն բնական պատճառներ և հետևանքներ։ Բոլոր շարժումները կատարվում են հաստատուն և անհրաժեշտ որենքներով։ Յեթե մենք այդ չենք նկատում, կարող ենք յերբևիցե յեզրակաց-

նել, թե գործող պատճառը գերբնական է։ Մարմինների բոլորի շարժումների ակներև նպատակն է իրենց արդի գոյության պահպանումը, ներձգել այն, ինչ բարենպաստ է, և վանել՝ ինչ վնասակար է։ Սեփական գոյության սկզբից ևեթ, մարմինները յենթարկվում են իրենց եյության հատուկ շարժմանը։

Յուրաքանչյուր պատճառ առաջացնում է վորևե հետևանք. չկա հետևանք առանց պատճառի։ Յեթե բոլոր շարժումներն իրենց պատճառներն ունեն և բնորոշվում են իրենց բնությամբ, եյությամբ և հատկություններով, այստեղից պետք է յեզրակացնել, վոր ամեն ինչ անհրաժեշտ է և թե բնության յուրաքանչյուր եյակ տվյալ հանգամանքներում և տվյալ հատկություններով չի կարող գործել այլ կերպ, քան նա գործում է։ Անհրաժեշտությունը պատճառների և նրանց հետևանքների անխախտ և հաստատուն կապակցությունն է և այս անդրդվելի ուժը, այս ընդհանրական անհրաժեշտությունը լոկ իրերի բնության հետևանքն է, վորի շնորհիվ ամեն ինչ գործում է անխոտորակ որենքներով։

ԳԼՈՒԽ V

ԿԱՐԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԿԱՐԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ, ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տիեզերքի որինաչափ շարժման դիտումը մարդկանց գլխում ծնեց կարգավորության գաղափարը։ Այս բառը միայն մարդկանց վերաբերող մի բան է արտահայտում։ Կարգավորության և անկարգավորության գաղափարը չի ապացուցում, թե դրանք գոյություն ունեն բնության մեջ, քանի վոր այստեղ ամեն ինչ անհրաժեշտ է։

Եյակի համար անկարգավորությունը հանդիսանում է անցումն լոկ մի նոր կարգավորության, նոր գոյաձևի։ Յեթե այդ անցումն արագ է կատարվում, անկարգավորությունը մեզ մեծ է թվում։ Ահա թե ինչու մահը մեր

աշքում յերևում ե իրրև ամենազգալի անկարգավորություն։ Մինչդեռ նա փոխում ե լոկ մեր եյությունը, մենք այստեղ ել մնում ենք կարգավորության շարժման յենթակա։

Բանականությունն մենք կոչում ենք վորոշ նպատակով գործելու կարողությունը, վորն ունի այն եյակը, վորին մենք վերագրում ենք այդ նպատակը։ Ընդհակառակը, մենք այդ չենք ընդունում այն եյակների մոտ, վորոնք չեն գործում մեզ պես։

Պատահականությանը մենք վերագրում ենք այն բոլոր իրողությունները, վորոնց կապակցությունն իրենց պատճառների հետ մենք չենք նկատում։... Հենց վոր մենք տեսնում կամ կարծում թե տեսնում ենք կարգավորությունը, մենք այդ վերագրում ենք բանականության, այսինքն մեզնից և մեր զգայելու յեղանակից փոխառնված հատկության։

Բանական եյակը մի եյակ ե, վորը մտածում ե, տենչում և գործում վորոշ մի նպատակի հասնելու համար։ Ուստի անհրաժեշտ ե ունենալ մեր զգայարանների և նպատակի նման զգայարաններ և նպատակ։ Յեթե բնու-

թյունը կառավարվեր բանականությամբ, նա ևս պետք ե ուժված լիներ զգայարաններով, վորովհետև առանց դրանց չի կարելի ունենալ վոչ գաղափարներ, վոչ ընկալումներ, վոչ ներազդումներ, վոչ մտքեր, վոչ կամք, վոչ ծրագիր, վոչ գործողություններ։

Միայն վորոշ կերպով կազմակերպված այդ մատերիան կարող ե գործողություն, բանականություն, կյանք ունենալ։

ԳԼՈՒԽ VI

ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ. ԲԱՐՈՑԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՑԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՑԵՐԿԱՏՄԱՆ, ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Մարդն յուրաքանչյուր վայրկյան յենթակա է անհրաժեշտության։ Նրա խառնվածքը իրերից կախում չունի, թեպետ այդ ազդում է նրա բոլոր կրքերի վրա։ Նրա ավելի կամ պակաս առատ և ջերմ արյունը, առավել կամ նվազ թուլացած նյարդերը, նրանց սնող կերակուրները, շնչած ոդը՝ այս բոլորը ներգործում են նրա վրա։

Մարդը զանազան նյութերից համակցված, կազմակերպված մի ամբողջություն է, որը գործում է իր հատկությունների համեմատ։

Իր շարժումների, գաղափարների պատճառն իմանալու դժվարությունը ստիպել է

նրան սեփական էությունը բաժանել յերկու մասերի։

Իրերը ճանաչելու անկարող լինելով՝ մարդը հնարեց բառեր։

Ինչպես և բոլոր մյուս եյակները, մարդը բնության արգասիքն է։ Բայց վիրտեղից նա ծագեց։ Այդ հարցը լուծելու համար, մենք բավական փորձ չունենք։

Արդյոք նա մշտապես գոյություն է ունեցել, թե բնության վայրկենական ստեղծագործությունն է։

Թե մեկը և թե մյուսը հավասարապես հնարավոր են։ Մատերիան հավերժական է, բայց նրա համակցությունները և ձևերը՝ անցողիկ են։ Մարդը, շատ հավանական է, մի վորոշ ժամանակի ստեղծագործություն է, վորը հատուկ է մեր յերկրագնդին, վորի վրա ուրիշ եյակներ և իրենք մարդիկ՝ փոփոխվում են կլիմաների զանազանության համեմատ։

Նա ծնվել է անշուշտ և՛ արական, և՛ իգական և նա իր գոյությունը կպահպանի, քանի դեռ տևում է յերկրագնդի և նրա մեջ յեղած համակարգումը։ Յեթե այդ

չքանալու լինի, մարդկային ցեղն իր տեղը պիտի զիջի նոր եյակներին, վորոնք կարող կլինեն համակերպվել յերկրագնդի նոր պայմաններին։

Խոսել ստավածության և արարչագործության մասին — դա նշանակում է ասել, թե մարդուն անհայտ է բնության էներգիան, թե նա չգիտե թե ինչպես է բնությունը կարողացել առաջ բերել մարդկանց։

Մարդը վոչ մի հիմք չունի իրեն բնության մեջ առանձնաշնորհյալ եյակ համարելու։ Նա յենթակա յե նույն փոփոխականության ինչ և մյուս արարածները։ Իր գերազանցության գաղափարը հիմնված է միայն այն սիրո վրա, վորը նա տածում է ինքն իր հանդեպ։

ՀՈԳՈՒ ՑԵՎ ՆՐԱ ՀՈԴԵԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այն, ինչ մարդը կոչում է հոգի, շարժվում է մեզ հետ։ Իսկ շարժումը մատերիայի հատկությունն է։ Այդ հոգին իր մատերիականությունը կրկին դրսևորում է այն անհաղթահարելի արգելքների մեջ, վորոնց նա հանդիպում է այլ մարմինների կողմից։ Յեթե նա իմ ձեռքը շարժման մեջ է դնում, յերբ վոչ մի բան նրան չի զիմադրում, ապա նա կդադարի այդ անելուց, յերբ իմ ձեռքը յենթակա յե մեծ ծանրության։ Այսպիսով, մատերիայի զանգվածը վերացնում է հոգեկան պատճառից առաջացած շարժումը։ Յեթե այս վերջինը վոչ մի նմանություն չունենար մատերիայի հետ, ապա նա չպիտի զիմադրության հանդիպեր մատերիայի կողմից։ Շարժումը յենթադրում է տարածություն,

ամբակու

կայի պատկերացումն է։ Յեթե մեր զգայարանները չեն գրգռվում, մենք չենք կարող ունենալ վոչ զգայնություն, վոչ ընկալումներ, վոչ էլ գաղափարներ։

Հիշողությունը ծնում է յերևակայությունը։ Մարդը պատկերացնում է այն, ինչ տեսել է։ Մարդը յերևակայությամբ թափանցում է այն, ինչ չի տեսնում։

Կրքերը՝ առարկաներով պայմանավորված կամքի շարժումներն են, վորոնք նրան գրգռում են մեր կացության ձևի համեմատ։

Հոգուն վերագրված բոլոր մտավոր կարողությունները զգայարանների վրա ներգործող առարկաներից առաջացած ձևափոխություններն են։ Այստեղից առաջանում է մարմնի այն դողը, յերբ ուղեղը գրգռված է վախ կոչված շարժումից։



ԳԼՈՒԽ IX

ՄՏԱՎՈՐ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ՎՈՐՊԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՐԱՆՔ ՅԵՎՍ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարդու խառնվածքը պայմանավորում է նրա մտավոր ունակությունները։ Այս հատկությունները մենք ստանում ենք բնությունից, մեր ծնողներից։ Սնունդը, ողը, կլիման, դաստիարակությունը, գաղափարները պայմանավորում են այդ հատկությունները։

Հոգուն վերագրել հոգեկան ընույթ՝ նշանակում է նրան տալ անհամապատասխան

վորակում։ Պետք է առանձնապես զբաղվել մարդու խառնվածքով, վորովհետև այդ կարելի չէ ուղղել, այլափոխել, ձևափոխել։

Խելքը ֆիզիկական զգայնության հետևանքն է։ Այդ մի քանի եյակներին հատուկ կարողություն է, վորի շնորհիվ նրանք արագ ըմբռնում են առարկաների ամբողջությունը և առնչությունը։

Փորձի ոգնությամբ կարելի չէ նախազգալ տակավին չզգայած իրողությունները։ Այստեղից առաջանում են խոհեմությունը և կանխատեսությունը։ Բանականությունը ընությունն է՝ ձևափոխված փորձի շնորհիվ։

Մարդու նպատակն է իրեն պահպանել և իր գոյությունը յերջանկացնել։ Փորձը նրան ուսուցանում է, վոր մյուս եյակները նրա համար անհրաժեշտ են։ Նա ցույց է տալիս նրանց իրեն նպատակներին ծառայեցնելու յեղանակը։ Մարդը տեսնում է, թե ինչ բան է հավանություն գտնում, ինչ բան տհաճություն պատճառում։ Փորձը նրան տալիս է արդարության և անարդարության գաղափարը։ Առաքինությունը և արատը հիմնված են վոչ թե պայմանագրերի, այլ մարդկային

ցեղի եյակների միջև յեղած հարաբերությունների վրա։

Մարդկանց պարտականությունները միմյանց նկատմամբ բղխում են այն յեղանակների գործածելու անհրաժեշտությունից, վորոնք մարդկանց տանում են դեպի իրենց ընությունից բղխող նպատակը։ Ուրիշի յերջանկությանը նպաստելով, մենք նրան դրդում ենք ապահովել նաև մեր յերջանկությունը։

Յերջանկություն ձեռք բերելու համար, մարդը շատ զգաստ պետք է լինի իր հաճույքների մեջ և խուսափի այն բոլոր վայելքներից, վորոնք կարող են տառապանքների փոխարկվել։

Քաղաքականությունը պետք է մարդկանց կրքերը դեպի հասարակության բարորությունն ուղղելու արվեստը հանդիսանա։ Որենքների միակ նպատակը պետք է լինի մարդկանց արարքները ուղղել դեպի հասարակության բարորությունը։

Մարդկանց կրքերի նպատակն է միշտ յերջանկություն ձեռք բերել. ուստի դրանք տրինավոր և բնական են. դրանց լավ կամ

վատ կարելի յե անվանել միայն այն ազ-
դեցությունների համեմատ, որ նրանք ու-
նենում են մարդկային ցեղի եյակների վրա։
Կրքերը դեպի առաքինություն ուղղելու
համար, անհրաժեշտ կլիներ մարդկանց ցույց
տալ առաքինի լինելու առավելությունը։

ԳԼՈՒԽ X

ՄԵՐ ՀՈԳԻՆ ԻՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԲՆԱՎ ԻՐԵՆԻՑ ՉԻ ՔԱՂՈՒՄ. ԲՆԱԾԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ ՉԿԱՆ

Յերթե մենք լոկ նյութական սուբ-
ստանցների մասին կարող ենք գաղափար
կազմել, ապա թերևս յենթադրել, թե մեր
գաղափարների պատճառը կարող ե վոչ մա-
տերիական լինել։

Մեզ առարկում են, մատնանշելով յերաղը-
սակայն մեր ուղեղը քնած ժամանակն ել լի
յե մինչ այդ ստացած բազմաթիվ մատպատ-
կերներով։ Յերևակայությունը միշտ ծա-
դում ե հիշողությունից։ Ցերազների պատ-
ճառը այն աստիճան ֆիզիկական ե, որ
նրանք հաճախ առաջ են գալիս կիրակուր-
ներից, հեղուկներից, խմորումներից, վորոնք

քիչ են համապատասխանում մարդու առողջ կացության։ Բնածին յենթադրված գաղափարները մեր սովորական գաղափարներն են, վորոնք կարծես միաձուլվել են մեզ հետ։ Սակայն դրանք մեր մեջ միշտ ծագել են զգայարանների միջնորդությամբ։ Դրանք դաստիարակության, որինակի, սովորության արդյունքն են։ Այսպես է նաև աստծո գաղափարը, վորն իր ծագումը ակներև պարտական է մեզ համար կերտված նկարներին։

Նույնպես և մեր գաղափարները բարոյականության բնագավառում լոկ փորձի արդյունքն են։ Հոր, մոր, յերեխաների սիրո զգացմունքը՝ խորհրդածության և սովորության հետևանքն են։

Մարդկային բոլոր գաղափարները և ըմբռնումները ձեռք բերովի յեն։ Գեղեցկություն, բանականություն, կարգ, առաքինություն, վիշտ, հաճույք բառերն ինձ համար իմաստազուրկ են, յեթե յես այդ բառերը չհամեմատեմ այլ առարկաների հետ։ Դատելուց առաջ, պետք է զգայած լինես. դատողությունը համեմատության հետևանքն է։

ԳԼՈՒԽ XI

ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԻ ՄԱՍԻՆ

Մարդը ֆիզիկական եյակ է՝ յենթակա բնության, հետևաբար, և անհրաժեշտության։ Մենք ծնված ենք անկախ մեր կամեցողությունից և մեր կազմվածքը մեզնից կախում չունի, մեր գաղափարները ծագում են ինքնաբերաբար։ Մեր գործունեությունը վորևե շարժառիթի մղման հետևանք է։

Ցերը յես ծարավ եմ և տեսնում եմ մի աղբյուր, անկարելի յե, վոր իմ մեջ խմելու ցանկություն չծագի։ Յես յերբ իրազեկ եմ լինում, վոր այդ ջուրը թունավորված է՝ հրաժարվում եմ խմելուց։ Կարելի՞ յե ասել թե յես ազատ եմ։ Ծարաքը ինձ անհրաժեշտորեն մղում է խմելու։ Թույնի հայտ-

նաբերումը ինձ անհրաժեշտորեն դրդում է չխմել։ Յերկրորդ շարժառիթը ինձ առաջինից ուժեղ է թվում և յես չեմ խմում։ Բայց, ինձ կասեն, թե վորևե անխոհեմ մարդ կխմի, այդ դեպքում առաջին շարժառիթը ավելի ուժեղ է։ Թե առաջին և թե յերկրորդ դեպքում, մենք տեսնում ենք յերկու հավասարապես անհրաժեշտ գործողություններ։ Խմողը խելագար է, բայց խելագարների գործողությունները նույնքան անհրաժեշտ են, վորքան և մյուս մարդկանց։

Հիրավի, կարելի յե հաջողությամբ համոզել մի շվայտ մարդու, վորպեսզի նա իր վարմունքը փոխի։ Այդ չի նշանակում, թե նա ազատ է, այլ վոր կարելի յե գտնել ուրիշ բավականաչափ զորեղ շարժառիթներ, վորոնք կարողանան սկզբից նրա վրա ներգործող շարժառիթների ազդեցությունը խափանել։

Ընտրելու հնարավորությունը դեռ չի ապացուցում մարդու ազատության առկայությունը. նրա տատանումը վերջանում է միայն այն ժամանակ, յերբ նրա կամքը բավարար շարժառիթներից պայմանավոր-

ված է, մարդը չի կարող արդելք լինել, վոր շարժառիթները ներգործեն իր կամքի վրա։ Կարող է նա չցանկալ այն, ինչ նրան ցանկալի յե թվում։ Վոչ. բայց ասում են նա կարող է հակակայել իր ցանկության, յեթե խորհրդածելու լինի նրա հետևանքների մասին։ Սակայն կարող է նա այդ մասին ազատ խորհրդածել։ Մարդկանց գործողությունները յերբեք ազատ չեն, այլ անհրաժեշտ հետևանք են նրանց խառնվածքի, ձեռք բերված որինակների, դաստիարակությամբ ու փորձով ամրապնդված դաղափարների։ Այն շարժառիթը, վորը պայմանավորում է մարդու գործողությունը՝ միշտ բարձր է նրա կարողությունից։

Չնայած ազատության սիստեմին՝ մարդիկ իրենց հիմնարկությունները հաստատել են անհրաժեշտությունից դրդված։ Յեթե չենթադրենք թե կան շարժառիթներ, վորոնք պայմանավորում են նրանց կամքը, ապա ինչին պիտի ծառայեն դաստիարակությունը, որենսդրությունը, բարոյականությունը և նույնիսկ կրոնը։ Այսպիսով, մարդկային կամքը ուղում են յենթարկել վորոշ հաս-

տատությունների, մի բան, որն ապացուցում է, թե դրանք ներգործում են կամքի վրա։ Այս հաստատություններն ակնհայտ անհրաժեշտություն են մարդկանց համար։

Անհրաժեշտությունը, որը կարգավորում է ֆիզիկական աշխարհի ամբողջ շարժումները, կարգավորում է նաև բարոյական աշխարհի շարժումները, որտեղ հետևաբար ամեն ինչ յենթակա յե ճակատագրականության։

ԳԼՈՒԽ XII

ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԱՑՆ ԿԱՐԾԻՔԻ, ՎՈՐԸ ՊԸՆԴՈՒՄ Է, ԹԵ ՖԱՏԱԼԻԶՄԻ ՍԻՍՏԵՄԸ ՎՏԱՆԳԱՎՈՐ Է

Եթե մարդկանց գործողություններն անհրաժեշտ են, ապա ինչ իրավունքով, մեղ կասեն, պետք է պատժել ինքնակամ գործողությունները։ Պատժի չեն յենթարկվում այն գործողությունները, որտեղ կամքը չի մասնակցում։

Հասարակությունը զգացող և խորհելու ընդունակ եյակների մի ամբողջություն է, որը ցանկանում է բարեկեցություն և փախչում է չարիքից։ Ավելին պետք չե նրանց դրդելու ընդհանուր բարոյությանը աջակցելու համար։ Այս անհրաժեշտությունը ի վիճակի յե ազդեցություն գործելու բոլոր մարդկանց

վրա։ Չար մարդիկ խելագուրկներ են, վո-
րոնցից մյուսներն իրենց պաշտպանելու
իրավունք ունեն։ Խելագարությունը ակամա
և անհրաժեշտ մի վիճակ է։ Բայց և այնպես,
խելագարներին զրկում են ազատությունից։
Ցեվ վերջապես պետք է, վոր հասարակու-
թյունը ինքը հոգ տանի, վորպեսզի մարդ-
կանց մեջ վատ հակումներ չառաջանան,
վորոնց հետո նա պատժում է։ Գող են դատ-
նում այն մարդիկ, վորոնց հաճախ հասա-
բակությունը զրկում է գոյամիջոցներից։

Ամեն ինչ անհրաժեշտության յենթարկել,
նշանակում է, ասում են, վոչնչացնել այն
գաղափարները, վոր մենք ունենք արդարի,
անարդարի, բարու և չարի մասին։ Այդ այդ-
պես չէ։ Թեպետ և մարդը գործում է
անհրաժեշտությամբ, բայց նրա գործողու-
թյունները հասարակության նկատմամբ՝
արդար և բարի յեն, յերբ այդ հասարակու-
թյան բարորության նպաստում են։ Բոլոր
մարդիկ զգում են, վոր կա մի վարվելա-
կերպ, վորը նրանք հարկադրված են հարգել
իրենց մերձավորների մոտ։ Հաճույքի և
վշտի, մոլության և առաքինության գաղա-

փարները հիմնվում են մեր սեփական եյու-
թյան վրա։

Այսպես ուրեմն, ֆատալիզմը չի ձգտում
խրախուսելու հանցանքը և վերացնելու
խղճի խայթը։ Չարագործներն այդ միշտ
զգում են։ Յերթե նրանք յերկար ժամանակ
կարողացել են խուսափել պարսավանքից
և պատժից, այնուհանդերձ նրանք վոչ ավելի
յերջանիկ են յեղել, վոչ էլ իրենցից ավելի
գոհ։ Նրանք շարունակ յերկյուղի, կռվի,
հուզման մեջ են գտնվում. նրանք չունեն
վոչ հանգիստ, վոչ վայելքներ. յուրաքան-
չյուր հանցանք նրանց պատճառում է խիստ
անհանգստություն, անքնություն և այլն։
Ճակատագրի սիստեմը հանգչում է բարոյա-
կանության վրա և ապացուցում է նրա ան-
հրաժեշտությունը։

Ֆատալիզմը, ասում են մեզ, մարդուն
վհատեցնում է, սառցնում նրա հոգին, խոր-
տակում այն հանգույցները, վորոնք նրան
պետք է միացնեն հասարակության հետ։
Բայց մթթե ինձնից է կախված իմ զգայելը
կամ չզգայելը։ Իմ զգացումները անհրաժեշտ
են, նրանք կախում ունեն իմ բնությունից։

Եթե յես ընդունեմ, որ մահը բոլոր եյակների ճակատագրական վախճանն է, մի՞թե նվազ վիշտ կպատճառի ինձ կնոջս, որդուս, բարեկամիս կորուստը։

Ֆատալիզմը պետք է մարդուն ներշնչի ոգտավետ հնազանդություն և բանիմաց համակերպում՝ ճակատագրի որենքներին։ Եթե նա յուրացնի այն միտքը, թե ամեն ինչ անհրաժեշտ է, ավելի համբերող կլինի։ Նա կկարեկցի իր նմաններին. նրանց կնների։ Նա թոնարհ և համեստ կլինի, որովհետև հասկանում է, որ իր վողջ ունեցածը ստացական է։

Ֆատալիզմը, մեզ կասեն, մարդուն նվաստացնում է, մարդու զուտ մեքենա յե դարձնում։ Բայց դա լոկ մի տերմին է, որը առաջ է յեկել այն անգիտությունից, թե վո՞ր է մարդու իսկական արժանապատվությունը։ Յուրաքանչյուր մեքենան թանգարժեք է, յերբ նա լավ է կատարում այն աշխատանքը, որին նա նախապես կոչվել է։ Ինքը բնությունն իսկական մեքենա յե, որի մեջ մարդ եյակը մի թույլ զսպանակ է... Թող հոգին մահացող կամ անմահ լինի,

մենք նվազ չենք սքանչանում Սոկրատի ազնիվ, մեծ, վսեմ հոգով։

Ֆատալիզմի գաղափարը ոգտակար է մարդուն։ Նրա միտքը զուր անհանգստություններով չի վրդովվում։ Նա կհրճվի չափավորությամբ, որովհետև ամեն մի շռայլության ընկերակցում է վիշտը։ Նա կգնա առաքինության շավղով, որովհետև ամեն բան նրան ապացուցում է, որ այս աշխարհում առաքինությունը անհրաժեշտ է, որպեսզի նա իր նմանների աչքում հարգելի դառնա և ինքն իրենից գոհ մնա։

Գ Լ Ո Ւ Խ XIII

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ, ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔԻ, ՀԱՎԱՏԻ ՅԵՎ ՄԱՀՎԱՆ ՅԵՐԿՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ

Հոգին քայլ առ քայլ հետևում է մարմնի ամման զանազան շրջաններին: Նա ծընվում է մարմնի հետ. մանկության որոք նա թույլ է. նա մասնակցում է մարմնի տառապանքներին և հաճույքներին. նա մարմնի պես լինում է առողջ կամ հիվանդ... գործունյա կամ տկար, արթուն կամ քնած: Բայց և այնպես մարդիկ կարծել են թե նա անմահ է: Բնությունը մարդկանց ներշնչել է իրենց գոյության պահպանման ցանկությունը և այդ գոյությունը հարատև դարձնելու ձգտումը նրանց հեշտությամբ բերել է հոգու անմահության գաղափարին: Թող

այդ ցանկությունը բնական լինի. բայց ապացուցում է արդյոք այդ հանդերձյալ կյանքի ռեալականությունը: Մենք ցանկանում ենք կյանքը մարմնի համար, բայց այդ ցանկությունը խափուսիկ է. ինչու համար հոգու կյանքի մեր ցանկությունը նույնպես խափուսիկ չպիտի լինի:

Հոգին լոկ զգայնության հիմնական սկզբունքն է. խորհել, վայելել, տանջվել՝ նշանակում է զգալ:... Ընդ սմին, յերբ մարմինը դադարում է գոյություն ունենալուց, զգալու կարողությունն ել վերանում է: Իսկ յերբ չկան զգայարաններ, չկան նաև գաղափարներ: Հոգին կարող է զգալ միայն զգայարանների շնորհիվ. զգայարանների վոչընչացումից հետո, ինչպես նա կարող է զգալ:

Ապա, մեզ կասեն, ասավածային ամենակարողությունը: Բայց նա ևս չի կարող այնպես անել, վոր վորևե մի բան միևնույն ժամանակ և՛ գոյություն ունենա և թե՛ գոյություն չունենա, վոր հոգին մտածի առանց այն միջնորդների, վորոնք անհրաժեշտ են մաքեր ունենալու համար:

Չնայած հավերժական կյանքի հավատին, մարմնի կործանումը միշտ մատանջում է մարդկանց. դա ապացույց է, թե իրականը, ներկան մեզ ավելի են հետաքրքրում, քան ապագայի հույսը։

Մահվան մտապատկերը վրդովում է բոլոր մարդկանց և նրանք միշտ աշխատել են այն ավելի զարհուրելի դարձնել։ Այդ մի վայրկյան է, յերբ մենք անպաշտպան մատնվում ենք մի անողորմ բռնակալի անլուր դժանությունն։ Ահա, ասում են, ամենաղորեղ պատնեշը, վորը կարելի յե հակադրել մարդկանց անառակություններին։ Բայց ինչ աղեցություն են գործում այս հասկացողությունները մարդկանց վրա, վորոնք ասում են, կամ կարծում, վոր համոզված են նրանց ճշմարտականության մեջ։ Շատերն այդ մասին քիչ են մտածում, իսկ կրքի, հաճույքի պահին՝ բնավ յերբեք։ Յեթե այդ յերկյուղը ներգործում է, ապա դա կատարվում է այն մարդկանց վրա, վորոնք նրա կարիքը չունեն, վորպեսզի խուսափեն չարիքից և բարիք գործեն։ Այդ յերկյուղը սարսափեցնում եր աղնվարարո սրտերը, առանց վո-

րևե աղեցություն գործելու քար սրտերի վրա։

Ինչ վերաբերում է անհավատներին, կարող է պատահել, վոր նրանց մեջ էլ չարագործներ լինեն. բայց անհավատությունը չի յենթադրում չարագործություն։ Ընդհակառակը, մտածող և խորհրդածող մարդն ավելի լավ է հասկանում բարի լինելու դրդապատճառները, քան այն մարդը, վորը կուրորեն առաջնորդվում է ուրիշների դրդումից։ Այլ կյանքի չհավատող մարդն ավելի քան շահադրդված է իր գոյությունը յերկարացնելու և իրեն սիրել տալ ուրիշներին հենց այս կյանքում, վորն իրեն հայտնի յե։ Ապագա կյանքի հավատը արդեք և հանդիսանում մեր յերջանկության՝ արդի կյանքում։ Մենք ուժասպառ ենք լինում թշվառությունների և ճահճանում մոլորությունների մեջ, վորովհետև հույս ենք դնում ավելի յերջանիկ մի ապագայի վրա։

Մարդն ապագան պատկերում է ներկայի նման։ Մենք հաճույքներ և տանջանքներ ունենք, այստեղից՝ արքայության և դժոխքի գաղափարը։ Հաճույքները դդայելու համար

անհրաժեշտ է մարմին ունենալ. այստեղից՝ մեռածների հարության գաղափարը։

Բայց ինչն է դրդել մարդկանց հավատալ դժոխքին։ Այնպես, ինչպես հիվանդը կառչում է իր գոյության պահպանության, ինչքան էլ թշվառ լինի իր այդ գոյությունը, նույնպես և մարդը գերադասում է թեկուզ թշվառ գոյության միտքը՝ չգոյության մտքից, վորը նա համարում է չարիքներից մեծագույնը։

Բացի դրանից, դժոխքի գաղափարը փոխհատուցվում է աստծո դթասրտության գաղափարով։

Ապագա կյանքի սարսափներն այնքան զորեղ են, վոր յեթե ազգերը մի յերջանիկ անհետևողականությամբ իրենց վարմունքով խախտած չլինեին այդ չարաբաստիկ գաղափարները, նրանք վայրագության կհասնեին և վողջ աշխարհը կամայանար։

Ընդունելով հանդերձ, վոր այս հավատը սանձում է կրքերը, ավելի պակաս են մթթե չարագործներն այն ժողովրդների մոտ, վորոնք ամենից ավելի դավանում են դրան։ Այն մարդիկ, վորոնք կարծում են թե այդ

սարսափներն իրենց զսպում են, սխալմամբ դրան վերագրում են այն, ինչ նրանք պարտական են ավելի իրական դրդապատճառներին՝ իրենց խառնվածքին, յերկչոտության, վատ արարքների հետևանք՝ յերկյուղին։ Կարող են արդյոք հեռավոր ապագայի այս սարսափները զսպել չարագործին, յերբ նրան չեն սանձում նույնիսկ մոտավոր պատժի սպառնալիքը։

Ինքը կրոնը վերացնում է այդ սարսափների ազդեցությունը։ Մեղքերի թողությունը հանգստացնում է չարագործներին մինչև իրենց կյանքի վերջին վայրկյանը և սա հակասում է ապագա կյանքի հավատի սկզբունքներին։

Այս սարսափների ազդեցությունը անբավարար է։ Այդ այդպես է մեզ տրված բուն ներշնչողների կողմից։ Նրանք դանդատվում են, թե չնայած այդ սարսափներին, մարդիկ պակաս չեն տարվում իրենց մոլի հակումներով։ Վերջապես մի յերկչոտ մարդու դիմաց, վորին զսպում են այդ սարսափները, կան միլիոնավոր մարդիկ, վորոնց դրանք խելագար, վայրի, ոգտագուրկ և չարամիտ

են դարձնում, շեղում հասարակության հանդեպ ունեցած պարտականությունների ուղիից, ուժասպառ անում, անհանգստացնում և այլն։



ԳԼՈՒԽ XIV

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՈՐԵՆՔՆԵՐԸ ԲԱՎԱԿԱՆ ԵՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԶՍՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ. ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ · ՅԱՆԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս աշխարհում մեզ դարձի մղող դեղատաճառները մի այլ իդեալական աշխարհում չվորոնենք։ Բնության, փորձի, ճշմարտության մեջ պետք է վորոնել մարդկային ցեղի ցավերի բուժումը, և նույնպես այն շարժառիթները, վորոնք մարդկային սրտին հաղորդում են հասարակության ոգտակար ձգտումները։

Գլխավորապես դաստիարակությունը պետք է արդասավորե մեր սրտերը, դրոշմե մեր հոգիների վրա անհատի և հասարա-

կութեան համար ոգտակար սովորութիւնները։ Այս դեպքում մարդկանց պետք չեն վոչ յերկնային պարգևներ, և վոչ էլ պատիժներ։

Կառավարութիւնն առասպելների կարիք չունի։ Ներկա պատիժներն ու պարգևները ավելի մեծ նշանակութիւն ունեն, քան հեռավոր ապագայի հաճույքներն ու տառապանքները։ Կառավարութիւնը դրանք պետք է գործադրե։ Բայց մարդն ամենուրեք սորուկ է։ Հետևաբար նա պետք է լինի սոսր, շահախնդիր, ծածկամիտ, անպատիվ։ Սա կառավարութեան արատն է։ Ամենուրեք մարդուն խաբում են, չեն թույլ տալիս անարգել զարգացնել իր բանականութիւնը. հետևաբար պետք է, վոր նա տխմար, անմիտ լինի։ Ամենուրեք նա տեսնում է, վոր վոճիրն ու մոլութիւնները հարգի յեն. դրանից նա յեզրակացնում է, թե մոլութիւնը՝ բարիք է, իսկ առաքինութիւնը՝ ինքնազոհաբերում։ Նա ամենուրեք դժբախտ է, նա ամենուր ճնշում է իր մերձավորներին, վորպեսզի թշվառութիւնից դուրս գա։ Նրան մատնանշում են յերկինքը, բայց նա իր ակնարկը դարձյալ յերկրին է հառում։ Նա ուզում է, ինչ գնով էլ լինի, այս աշխարհում յերջանիկ լինել։ Յեթե ժողովուրդն ավելի կրթված և ավելի յերջանիկ լիներ, նրան զսպելու համար խարելու հարկ չեր լինի։

Սովորեցնենք մարդուն իր արդի վիճակին նայել իբրև միակը՝ ուր նա կարող է յերջանկանալու հույս ունենալ։ Փոխանակ նրան մի այլ աշխարհի մասին խոսելու, սահմանափակենք նրա յերջանկութեան հույսը ներկա աշխարհով։ Ցույց տանք նրան, վոր յուր արարքները կարող են ազդել իր մերձավորների վրա. խրախուսենք նրան իր արհեստում. պարգևատրենք նրա ձիրքերը. նրան դարձնենք գործունյա, աշխատասեր, բարեգործ, առաքինի։ Այնպես նրան ուսուցենք, վոր նա զդա իր մերձավորների սիրո արժեքը և ճանաչե նրանց առելության հետևանքները։

Ինչ էլ վոր լինի մահվան յերկյուղը, դարձյալ մեր վշտերը, մտատանջությունները, դժբախտությունները յերբեմն մեզ ստիպում են այն համարել միակ ապաստարանը՝ մեր մերձավորների անարդարության դեմ։

Անձնասպանության մասին տարբեր կարծիքներ կան։ Վոմանք կարծել են, թե մարդն իրավունք չունի խախտելու այն դաշինքը, որը նա կնքել է հասարակության հետ։ Բայց յեթե մենք քննարկենք մարդու հարաբերությունները բնության հետ — կտեսնենք, որ նրանց պարտավորությունները ոչ կամավոր են մարդու կողմից, ոչ էլ փոխադարձ՝ բնության կողմից։ Մարդու կամքը մի մասնակցություն չե ունեցել իր ծննդյան խնդրում և հակառակ իր կամքին, նա ավարտում է իր գոյությունը։ Բոլոր իր արարքները հարկադրական են։ Նա իր գոյությունը կարող է սիրել միայն այն դեպքում, յերբ նա յերջանիկ է։

Յեթե քննարկենք այն դաշինքը, որը մարդուն միացնում է հասարակության հետ, մենք կտեսնենք, որ դա պայմանական է և փոխադարձ, որ նա յենթադրում է առավելություններ պայմանավորվող կողմերի համար։ Կապը՝ բարեկեցությունն է։ Յերբ այդ խզվում է՝ մարդն ազատ է։ Ո՞վ կդատապարտե այն մարդուն, որը քաղաքում առանց միջոցների ճալով, անձնատուր է

լինում մենակության։ Մեռնող մարդը լոկ ինքն իրեն է մեկուսացնում։

Կարծիքների տարբերությունը այս առարկայի (և ուրիշների) վերաբերմամբ անհրաժեշտ է։ Անձնասպանը ձեզ կասի, թե յեթե դուք ել նրա տեղը լինեյիք, նույնը կանեյիք։ Բայց իսկությամբ նրա տեղը լինելու համար, անհրաժեշտ է ունենալ նրա կառուցվածքը, խառնվածքը, կրքերը. պետք է նրա հետ նույնանալ, գտնվել նույն պայմաններում, դրդվել նույն շարժառիթներից։

Այս սկզբունքները կարելի կլիներ վտանգավոր համարել. բայց սկզբունքները չեն, որ մարդկանց մղում են դիմելու այդպիսի վճռական վորոշումի. նրանց մղում է այդ քայլին վշտերից դառնացած խառնվածքը, որդանիզմի թերությունը, մարդկային մեխանիզմի խանգարումը, այսինքն անհրաժեշտությունը։ Մահն այն վերջին յելքն է, որից չպետք է զրկել հալածված առաքինությունը։

ԳԼՈՒԽ XV

ՄԱՐԴԿԱՆՑ ՇԱՀԵՐԻ ԿԱՄ ԱՅՆ ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐ ՆՐԱՆՔ ՈՒՆԵՆ ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ԱՌԱՆՑ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՅԵՐՋԱՆԻԿ ԼԻՆԵԼ

Շահն այն բանն է, վորի հետ յուրաքանչյուր մարդ ըստ իր խառնվածքի, կապում է իր բարեկեցությունը։ Միևնույն յերջանկությունը ամենին չի պատշաճում։ Ահա թե ինչու, յուրաքանչյուր մարդու յերջանկությունը կախում ունի իր խառնվածքից, և իր կառուցվածքից։ Միանգամայն պարզ է, վոր այն, ինչ միմիանցից ամբողջովին տարբեր յերկու եյակներից մեկի տենչանքների առարկան է կազմում, մյուսին չի հետաքրքրում, կամ նույնիսկ տհաճ է։ Վոչ մի մարդ չի կարող դատել թե ինչը կարող է նպաստել իր մերձավորի բարոքությանը։

Բայց միևնույն ժամանակ, ստիպված լինելով մարդկանց արարքները գնահատելու նրանց մեզ վրա թողած ազդեցության համեմատ, մենք գովում ենք դրանց դրդող շահը, նայած թե դրանից ինչ ոգուտ է բղխում մարդկային ցեղի համար։ Ահա թե ինչու, մենք սքանչանում ենք արիությամբ, վեհանձնությամբ, տաղանդով, առաքինությամբ և այլն։

Մարդու եյությանն հատուկ է ինքզինք սիրելը, ինքնապահպանման ձգտումը, իր գոյությունը յերջանկացնելը։ Այս շահի համաձայն մարդը փորձի և բանականության ոժանդակությամբ շուտով տեսնում է, վոր նա մենակ չի կարող ձեռք բերել այն, ինչ ապահովում է նրա գոյության յերջանկությունը։ Նա ապրում է եյակների հետ, վորոնք ինչպես և ինքը, մտահոգված են սեփական յերջանկությամբ, բայց վորոնք ընդունակ են ոգնել նրան ձեռք բերելու համար այն առարկաները, վոր նա ցանկանում է ունենալ։ Նա տեսնում է, վոր նրանք բարեհաճորեն կվերաբերվեն նրան միայն այն դեպքում, յեթե իրենց սեփական բարեկե-

ցությունը դրանում շահագրգռված է։ Այս-տեղից, նա գալիս է այն յեզրակացության, վոր իր յերջանկության համար անհրաժեշտ է ձեռք բերել յուր նմանների հավանությունը, սերը և ուժանդակությունը, վոր նրանք ոգուտ ունենան աջակցելու իր ծրագրերին։ Հայթայթել մարդկային ցեղի եյակներին այդ առավելությունները, նշանակում է՝ լինել առաքինի։ Ըստ վորում, բանիմաց մարդը գիտակցում է, վոր ինքը շահ ունի առաքինի լինելու։ Առաքինությունը սոսկ ինքնղինքը ուրիշի բարորության շնորհիվ յերջանկացնելու արվեստն է։ Այս է ամեն մի բարոյականության իսկական հիմունքը։ Արժանիքն ու առաքինությունը հիմված են մարդկային բնության և մարդկային պահանջմունքների վրա։

Առաքինի մարդը հրճվում է ամեն բոպե. նա իր մերձավորների դիմագծերի վրա կարդում է այն իրավունքները, վոր նա նվաճել է նրանց սրտերում։ Մոլությունն ել հարկադրված է իր տեղը դիջել առաքինության, վորի գերազանցությունը նա ամոթխածությամբ և ճանաչում։ Յերբ բարի

մարդը յերբեմն ընկճվում է ուրիշների արհամարանքից և ապերախտությունից, ապա նա սփոփվում է իր գործի արդարության գիտակցությամբ։ Չարագործներն այս սփոփանքը չունեն. նրանք իրենց սրտում միայն հոգսեր, զղջումներ, խղճի խայթեր ունեն։

ԳԼՈՒԽ XVI

ՑԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՈՒՆԵՑԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒՆ ԱՂԲՅՈՒՐՆ ԵՆ. ԱՅՆ ԱՊԱՐԴՅՈՒՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՎՈՐՈՆՑՈՎ ՄԱՐԴԻԿ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՅԴ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վոչինչ ավելի անհեթեթ չե, քան մթին փիլիսոփայության փքուն խոսքերը՝ ուղղված իշխանության, փառահեղության, հարստության և հաճույքների ցանկության դեմ։ Բնական է սիրել այն, ինչ ոգտավետ է։

Հոր հեղինակավորությունն իր ընտանիքում հիմնվում է այդորինակ ոգտավետության վրա։ Նմանապես հասարակական դիրքը, հարստությունը, հանճարը, տաղանդը,

գիտությունները մեզ վրա իշխում են լոկ այն ոգուտի շնորհիվ, վոր նրանք հայթայթում են մեզ։ Թագավորները, հարուստները, մեծ մարդիկ կարող են մեր մեջ պատկառանք հարուցել, շլացնել մեր աչքերը. բայց այդ իրավունքը նրանց տրվում է լոկ այն բարորությունների շնորհիվ, վոր նրանք մեզ մատուցում են։

Փորձը մեզ սովորեցնում է, վոր կրոնական ուսմունքները մարդկային ցեղի թշվառությունների իսկական սկզբնապատճառներն են յեղել։ Բնության որենքների անգիտությունը նրա համար աստվածներ ծնեց։ Խաբեությունը դրանք մարդու աչքում զարհուրելի դարձրեց։ Աստվածների այդպիսի պատկերացումն արդելք յեղավ բանականության առաջադիմության։ Նա ապրեց թշվառության մեջ, վորովհետև նրան ասում են, թե աստվածները դատապարտել են իրեն թշվառ լինելու։ Նա անդամ չէր որոշեց խորտակելու իր կապանքները, վորովհետև նրան հավատացրին, թե հիմարությունը, բանականությունից հրաժարվելը, մտքի բթացումը, հոգու նվաստացումը —

միջոցներ են հավիտենական յերանություն ձեռք բերելու համար։ Նրան թվում է թե նրա համար աստվածների փոխարկված թագավորները ի ծնե ստանում են իրեն վրա իշխելու իրավունքը։ Քաղաքականությունը ամբողջի բարեկեցությունը մեկի քմահաճույքին զոհաբերելու ճակատագրական արվեստ դարձավ։

Նույն շլացումը մենք տեսնում ենք բարքերի գիտության մեջ։ Կրոնը հիմնեց բարոյականություն վոչ թե մարդկային բնության, նրա ուրիշի հետ ունեցած հարաբերությունների և սրանից անհրաժեշտորեն բղխող պարտականությունների, այլ այն յերևակայական հարաբերությունների վրա, վորոնք իբր թե գոյություն ունեն մարդու և անտեսանելի ույժերի միջև։ Այդ աստվածները, վորոնց միշտ պատկերել են իբրև բռնակալներ, ծառայել են իբրև որինակ մարդկանց վարվեցողության։ Յերբ մարդն իր մերձավորներին մի չարիք եր պատճառում, նա հավատացած եր, վոր աստվածը վիրավորվում է։ Նա կարծում եր, թե իր հանցանքը քաված կլիներ, յեթե խոնարհվեր

նրա առաջ և պարգևներ ընծայեր նրան։ Կրոնը խեղաթյուրեց բարոյականությունը և մեղքերի քավության նրա յեղանակները միանգամայն ավարտեցին բարոյականության կործանումը։ Յերբ նա ուղեց պայքարել կրքերի դեմ՝ նրա միջոցները քստմնելի դարձան։ Յեվ նա հավատացրեց, վոր այդ միջոցներն աստվածային են, վորովհետև չեյին համապատասխանում մարդուն։ Մարդը ատեց առաքինությունը, վորովհետև այդ պատկերվում եր իբրև մարդկային հաճույքների թշնամի։ Իր պարտականությունները կատարելիս, մարդուն ներշնչեցին ամենաթանկագին զոհաբերություններ անելու, առանց յերբեք բացատրելու այդ զոհաբերությունների իրական պատճառները։ Ներկան զերադասվեց ապագայից, տեսանելին՝ անտեսանելիից և մարդը չար դարձավ, վորովհետև ամեն ինչ նրան համոզում եր թե յերջանկություն ձեռք բերելու համար պետք է լինել չար։

Մելանխոլիկ սնոտիապաշտները տեսնելով, վոր մեր ցանկացած առարկաները չեն կարող մեզ զոհացնել, հայտարարեցին, թե

դրանք ՀԱՍԱԿԱՐ, ղաղրելի, գարշելի յեն։ Նրանք կամենում եյին, վոր մարդը հրաժարվի հաճույքից, մի խոսքով՝ վոր մարդը այլասերվի։ Ահա կույր բժիշկներ, վորոնք մարդկային բնական վիճակը համարում են հիվանդագին։ Արգելել մարդուն սիրել ու տենչալ, նշանակում է կամենալ զրկել նրան իր եյությունից։ Մեզ սովորեցնել թե մենք պետք է մեզ ատենք և արհամարենք, նշանակում է, մեզնից խլել այն զրդապատճառը, վորն ամենից առավել մեզ դեպի առաքինության առաջնորդելու ունակ է։

Ընայաց մեր արտունջներին ճակատագրի դեմ, այնուհանդերձ այս աշխարհում կան յերջանիկներ. այստեղ տեսնում ենք իշխանավորների, վորոնք հավակնություն ունեն յերջանկացնելու իրենց ժողովուրդը. մենք տեսնում ենք վեհ հոգիների, վորոնք խրախուսում են արժանիքը, ոգնում թշվառներին. մենք տեսնում ենք հանճարների, վորոնք համակված են հիացմունք կորզելու ցանկությամբ։

Աղքատն անգամ յերջանկությունից զրկված չէ։ Նա վայելք է ստանում իր տեն-

չանքներից, մինչդեռ հարուստը լոկ անձկում է։ Աշխատանքի դատապարտված աղքատը խմանում է հանգստի քաղցրությունը։ Նա քիչ գաղափարներ է ստանում, քիչ առարկաներ է ճանաչում, քիչ ցանկություններ ունի, և այլն։

Բարիքների քանակը գերակշռում է չարիքների քանակին։ Վոչ մի մարդ ամբողջովին յերջանիկ չէ, բայց մասամբ՝ յերջանիկ է։

Մեր կյանքի ընթացքում միանգամայն ձախորդ որերը՝ քիչ են։ Սովորությունը մեր վրա՝ տերը թեթևացնում է։ Դադարեցրած տանջանքը՝ հաճույք է։ Ցուրաքանչյուր պահանջմունք՝ բավարարման ընդունակ՝ հրճվանք է։ Վշտի և ցավի բացակայությունը մի յերջանիկ վիճակ է, վորը մենք վայելում ենք գաղտնի և մեզ համար աննկատելիորեն։ Հույսը մեզ ոգնում է կրելու մեր տանջանքները։ Վերջապես, անգամ այն մարդը, վորն իրեն համարում է ամենից թշվառ, առանց սարսափի չի տեսնում մահվան գալուստը, յեթե միայն հուսահատությունը բոլորովին չէ աղճատել բնությունը նրա աչքում։

Յերբ ընութիւնը մեզ իսպառ մերժում է յերջանկութիւնը, նա մեզ համար բաց է անում կյանքից դուրս գնալու դուռը։ Յեթե մենք դեռ չենք հրաժարվում կյանքից, նշանակում է, վոր մենք դեռ մեր գոյության մեջ հաճույք ենք գտնում։

ԳԼՈՒԽ XVII

ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Չարիքը մարդուն անհրաժեշտ է։ Առանց չարիքի նա չեր ճանաչի բարիքը. նա վոչ մի բանի մասին դատել չեր կարող, նա զուրկ կլիներ կամքից, ընտրության կարողությունից, կրքերից, ցանկություններից, մի բան սիրելու կամ մի բանից վախենալու դրդապատճառներից. նա կլիներ մի ավտոմատ. նա այլևս մարդ չեր լինի։

Աշխարհում յեղած չարիքը մարդուն ստիպեց մտածել աստվածության մասին։ Բազմաթիվ թշվառություններ, դժբախտ պատահարներ, հիվանդություններ, աղետներ, հեղեղումներ, հրդեհներ՝ սարսափներ հարուցեցին նրա մեջ։ Ի՞նչ գաղափար կարող եր նա կազմել այն անհաղթահարելի պատճառի մասին

սին, վորն այդպիսի մեծ հետևանքներ ուներ։ Նա չկասկածեց անգամ, թե այդ անկարգության պատճառը բնությունն եր, վորովհետև ինքը բնությունն ել յենթակա յեր դրան։ Այն ժամանակ չգտնելով այս աշխարհում բավական զորեղ գործոններ, վորոնք ընդունակ լինեյին այդպիսի հետևանքներ առաջացնելու, նա իր աչքերն յերկինք հառեց, վորտեղ, նա յենթադրում եր, թե ապրում եյին անհայտ ույժեր, վորոնց չարկամությունը կործանում եր մեր յերկրի յերանությունը։

Այդքան զորեղ ույժերի իդեային միշտ ընկերակցում եր սարսափի իդեան։

Մեզ անհայտ առարկաների մասին մենք դատում ենք այն առարկաների միջոցով, վորոնց մենք ճանաչում ենք։ Դրա համար մարդը՝ ամեն մի անհայտ պատճառի, վորը ներազդում է իր վրա, վերագրում է կամք, խելք, ծրագրեր, դիտավորություն, կրքեր և այլն, վորպիսիք ինքն ունի։ Վարժված լինելով հնազանդության և պարգևատվության, նա դրանք ի գործ է ածում աստծուն հաճոյանալու համար։

Զոհաբերությունների հոգատարությունը հանձնվեց ծերերին. այդ զոհաբերությունները կատարվում եյին շքեղ ծեսերով։ Փառահեղ ծեսերը հարատևելով՝ վերածվեցին սովորության։ Այսպիսով առաջ յեկան աստվածապաշտությունը և հոգևորականությունը։

Մարդկային միտքն այս սիստեմները կերպարանափոխեց, վորովհետև նրան հատուկ է անդադար ջանալ անհայտ առարկաները լուսաբանելու. մարդը սկզբում դրանց խոշոր կարևորություն է տալիս, իսկ հետո յերբեք չի համարձակվում սառնարյունությամբ հետազոտել։

Այդ իդեաների հետևանքն այն յեղավ, վոր բնությունը զրկվեց իր վողջ հզորությունից։ Մարդը չի կարող ըմբռնել թե ինչպես բնությունը կարող է նրան տանջանք պատճառել, յեթե բնությանը այդ անելու չդրդեյին մարդու յերջանկության թշնամի ույժերը, վորոնք իրեն վշտացնելու և պատժելու հիմունքներ ունեն։

ԳԼՈՒԽ XVIII

ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մարդիկ առաջին անգամ յերկրպագեցին բնության։ Նրա մասին խոսում էին այլաբանություններով։ Բնության բոլոր մասերը մարդկայնացվում էին։ Այսպես առաջ յեկան Սատուրնը, Յուպիտերը, Ապոլոնը և այլն։ Հասարակ ժողովուրդը չհասկացավ, վոր բնության, նրա մասերի, գործողությունների մասին այլաբանություններով եր խոսվում։ Շուտով մոռացվեց այն աղբյուրը, վորտեղից բղխեցրել էին աստվածներին։ Բնության եներգիան հայտարարեցին անընմբռնելի էակ և անվանեցին բնության շարժիչը։ Այսպես բնությունը տարբերեցին ինքն իրենից և այնուհետև նա համարվեց գործելու անընդունակ մի դանգված։

Պետք յեղավ այս շարժիչ ույժը ուժել հատկություններով։ Մարդկանց անտեսանելի յեր այդ էակը, այսինքն վոգին, բանականությունը, անմարմին էությունը, սուբստանցը, վորը բոլորովին տարբեր եր մեր ճանաչած սուբստանցից։ Մարդիկ այդ էակին կարող էին վերագրել միայն իրենցից փոխառնված հատկություններ։ Այն, ինչ նրանք իրենց մոտ անվանում են կատարելություններ, դարձան աստվածային կատարելությունների փոքրիկ տիպարներ։

Յեվ ահա մարդիկ աստծուն վերագրեցին բարություն, իմաստություն, անսահման հզորություն՝ ըստ նրա բարերարությունների, բնության մեջ տիրապետող կարծեցյալ կարգի, ըստ այն հրաշագործությունների, վորոնք նա կատարում եր բնության մեջ։

Բայց մյուս կողմից, ինչպե՞ս չվերագրել նրան չարկամություն, անխոհունություն, քմահաճություն, յերբ այս աշխարհը շատ հաճախ անկարգությունների և չարիքների ասպարեզ ե հանդիսանում։ Մարդիկ կարծեցին թե նրան թշնամիներ ստեղծելով, դժվարությունները լուծած կլինեն։ Յեվ ահա

ապստամբ հրեշտակների ծագումը։ Չնայած իր հզորության, աստվածը չկարողացավ դրանց հաղթահարել։ Նա այս դրության մեջ է գտնվում այն մարդկանց հանդեպ, վորոնք իրեն դեմ մեղանչում են։

Բայց և այնպես հավատալով հանդերձ, վոր մարդկային թշվառությունների պատճառները հայտնաբերված են, չեր կարելի ծածկել, վոր հաճախ արդար մարդիկ յենթարկվում եյին աստծո պատիժներին։

Այն ժամանակ պնդեցին թե, քանի վոր մարդը մեղանչել եր, աստվածը կարող եր վրեժխնդիր լինել և՛ անմեղներից։ Ճիշտ այն անիրավ իշխանավորների նման, վորոնց պատիժները համապատասխանում եյին վիրավորվածի մեծության և հզորության, քան վիրավորանքի մեծության և վավերականության հետ։ Այսպես ահա մարդկանց միջից ամենաչարերը իբրև նախատիպ են ծառայել աստծուն, և պետություններից ամենաանարդարը՝ աստվածային վարչության տիպարն և հանդիսացել։

ԳԼՈՒԽ XIX

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԽՃՃՎԱԾ ՑԵՎ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԻԴԵԱՆԵՐԸ

Աստվածն, ասում են, ամենաբարի յե, բայց ամեն բան աստվածն և ստեղծել, հետևվարաբար պետք է նրան վերագրել բոլոր այն թշվառությունները, վորոնք մարդկային ցեղը տանջում եյին։ Բարիքը և չարիքը յերկու սկզբունքներ են յենթադրում, կամ յեթե դրանք նույն բանն են, պետք է ընդունել, վոր աստվածը միաժամանակ թե բարի յե և թե չար։

Մեզ ասում են, աստվածն արդար է և թե մարդկային թշվառությունները հանդիսանում են այն նախատինքների պատիժը, վոր աստծուն հասցրել են մարդիկ։ Ուրեմն, մարդը կարող է տանջանք պատճառել աստծուն։

Բայց վորպեսզի վորևե մեկին կարողանանք վիրավորել, անհրաժեշտ են վորոշ հարաբերություններ մեր և այդ վորևե մեկի միջև։ Բայց վորևե մեկին վիրավորելը, նշանակում է նրան ցավ պատճառել. արդ, ինչպես մի թույլ արարած, վորն իր գոյությունը ստացել է աստծուց, կարող է դեմ գնալ այն անդիմադրելի ուժին, վորը չի հանդուրժում անկարգություն և մեղք։

Արդարադատությունը յենթադրում է հատուցել յուրաքանչյուրին այն, ինչ պատկանում է իրեն. իսկ մեզ ասում են, թե աստվածը մեզ վոչինչ պարտական չե և թե նա կարող է, առանց խախտելու իր արդարադատությունը, իր ստեղծած արարածը թշվառության վիճը նետել։ Մարդկային թշվառություններն, ասում են, անցողիկ են և տևում են վորոշ ժամանակ. հետևաբար, նա (աստվածը) անարդար է գոնե վորոշ ժամանակ։ Իր հավատացյալներին պատժելիս՝ նա իբր թե նրանց բարիք է կամենում։ Բայց յեթե նա բարի յե, կարող է թեկուզ ժամանակավորապես տանջանքների յենթարկել մարդկանց։ Յեթե նա ամենազետ է, ինչ

կարիք ունի փորձելու իր սիրելիներին. վորոնք անվնասակար են իրեն համար։ Յեթե նա ամենակարող է, ինչու՞ անհանդատանալ այն ապարդյուն դավադրանքներից, վորոնք նյութվում են նրա դեմ։

Կա՞ այնպիսի բարի մարդ, վորը չցանկանա իր մերձավորներին բարիք անել։ Իսկ ինչու՞ համար աստվածը մարդկանց յերջանկություն չի տալիս։ Վոչ վոք հիմք չունի իր վիճակից գոհ լինելու։ Ի՞նչ պատասխաններ են տալիս մեզ այս հարցերին։

Ասում են, աստծու դիտավորություններն անթափանցելի յեն։ Այդ դեպքում, ի՞նչ իրավունքով այդ մասին տրամաբանում են։ Ի՞նչ հիման վրա նրան վերագրում են հատկություններ, վորոնք անհնարին է ներթափանցել։ Ի՞նչ գաղափար կարելի է կազմել այն արդարադատության մասին, վորը յերբեք մարկային արդարադատության չե նմանվել։

Նրա արդարադատությունը փոխհատուցվում է իր ներողամտությամբ, վողորմածությամբ և բարությամբ։ Բայց իր ներողամտությունը խախտումն է իր արդա-

բաղատության։ Յեթե նա անփոփոխ է, կարող է այդ խախտել թեկուզ մի վայրկյան։

Աստվածը, ասում են, աշխարհը ստեղծել է իր սեփական փառքի համար։ Գերագույն լինելով ամեն բանից, մթթե նա տակավին վորևե բան կարող է ավելացնել իր փառքին։ Փառասիրությունը լոկ նշանակում է ցանկալ փայլել իր նմանների առաջ։ Յեթե նա զգայատենչ է փառասիրության նկատմամբ, ինչու թույլ է տալիս, վոր իրեն նախատեն։ Մթթե նրա համար, վորպեսզի հետո պատժի իր գթասրտությունն ի չար գործ դնելը։

Բայց ինչու նա թույլ է տալիս, վոր իր գթասրտությունը չարարկվի։ Կամ ինչու այդ գթասրտությունը բավական չէ ինձ գործի մղելու իր նպատակների համաձայն։ Այդ այն պատճառով, վոր, ասում են, թե նա քեզ ստեղծել է՝ ազատ։ Բայց, ինչու նա ինձ ընծայել է ազատություն, վոր, ինչպես նա պետք է գիտենար, յես չարարկելու յեմ։

Այս ազատության հետևանքով, մարդկանց մեծամասնությունը մեր աշխարհում գործած հանցանքների համար հավիտենապես

պիտի պատժվեն։ Բայց ինչ հիման վրա հավիտենական պատժի յենթարկել անցողիկ հանցանքի համար։ Ի՞նչ կասենք մենք այն թագավորի մասին, վորն անվերջ պատժեր իր հարբած հպատակին, յեթե այս վերջինս փութանցիկ վիրավորած լիներ նրա սնափառությունը, առանց սակայն իրական վնաս պատճառելու և այդ ել մանավանդ այն ժամանակ, յերբ ինքն այդ թագավորը հոգացել եր, վոր նա հարբեր։ Կարելի՞ յե ամենահզոր համարել այն միապետին, վորը հանդուրժում է, վոր իր բոլոր հպատակները՝ բացի մի քանի հավատարիմներից, ամեն որ արհամարեն նրա որենքները, նախատեն իրեն և չարարկեն նրա ցանկությունները։

Այս առթիվ մեզ պատասխանում են, թե աստծո հատկություններն այնքան կատարյալ են, այնքան քիչ են նմանում մեր հատկություններին, վոր դրանք վոչ մի առընչություն չունեն մարդկանց ունեցած հատկությունների հետ։

Բայց այս դեպքում, ինչպես կարելի յե գաղափար կազմել դրանց մասին։ Ինչու համար աստվածաբանությունը հավակնում է այդ

հատկությունները մարդկանց ի տես հրապարակել։

Բայց աստվածը խոսեց մարդկանց հետ և ինքզինքը նրանց հայտնարերեց։

Յե՞րբ և ո՞ւմ հետ։ Վո՞ր տեղ են այդ աստվածային պատգամները։ Անհեթեթ, հակասական հավաքածոների մեջ։ Յես այդտեղ տեսնում եմ, վոր իմաստության աստվածը խոսել է մթին, նենգավոր, անհասկանալի լեզվով, վոր բարության աստվածը անողոք, արյունռուշտ է յեղել, վոր արդարության աստվածն անարդար և աչառու յե յեղել, անիրավություն է քարոզել, վոր վողորմածության աստվածն իր բարկության զոհերին վերապահել է ամենազարհուրելի տանջանքները։

Մարդկանց և աստծու միջև հարաբերություններ կարող են հաստատվել միմիայն բարոյական հատկությունների հիման վրա։ Յեթե այդ հատկությունները հայտնի չեն մարդկանց, դրանք նրանց որինակ ծառայել չեն կարող։ Արդ, ի՞նչպես յուրացնել այդ անհայտ հատկությունները։

Վո՛չ մի համամասնություն չկա աստծո և մարդկանց միջև։ Բայց առանց համամասնության չեն կարող լինել և հարաբերություններ։ Յեթե աստվածն անմարմին է, ի՞նչպես կարող է նա ներգործել մարմինների վրա։ Ի՞նչպես կարող են մարմինները ներգործել նրա վրա, վիրավորել նրան, խանգարել հանգիստը, նրա մեջ զայրույթ առաջ բերել։ Յեթե բրուտը զայրանում է իր կերտած անոթի վրա, վոր այդ վատ է կերտված, չէ՞ վոր այդ բանում նա իրեն պետք է մեղադրի։

Յեթե աստվածը վոչինչ պարտական չէ մարդկանց, մարդիկն ել նրան վոչինչ պարտական չեն։

Առանց փոխադարձության չկան հարաբերություններ. պարտականությունները հիմնվում են փոխադարձ պահանջների վրա։ Յեթե աստվածը մարդկանց կարիք չունի, նա նրանց վոչինչ պարտավոր չէ և մարդիկ չեն կարող նրան վիրավորել։ Նրա իշխանությունը հիմնվում է միայն այն բարիքի վրա, վորը նա անում է մարդկանց, իսկ սրանց պարտականությունն՝ այն բարիքի վրա, վորը սպասում են նրանից։ Յեթե աստվածը նրանց այդ բարիքն անելու պար-

տավոր չէ, վերանում են բոլոր հարաբերութիւնները։

Յենթադրելով, որ աստվածն ունի մարդկանց բոլոր հատկութիւններ՝ անսահման կատարելության աստիճանի, կարելի յե արդյոք այդ հատկութիւնները շփոթել նրա գերբնական, դիցաբանական ատրիբուտների հետ։ Լինելով զուտ վոգի, նա ինչպես կարող է գործել մարդու նման, որը մարմնավոր մի եյակ է։ Զուտ վոգին վոչինչ չի տեսնում, չի լսում վոչ մեր աղոթքները, վոչ աղաղակները, մեր թշվառությունը չի կարող նրա գութը շարժել, որովհետև նա զուրկ է զգայարաններից, որոնք կարեկցության զգացմունք են հարուցում մեր մեջ։

Յեթե նա անփոփոխ է, նրա դիտավորությունները չեն կարող փոփոխական լինել։ Նա անսահման չէ, քանի որ ողջ բնությունը տարբեր է նրանից և պահպանում է իր գոյությունը նրա կողքին։ Նա բնավ ամենակարող չէ, քանի որ նա թույլ է տալիս, կամ չի կանխում չարիքը և անկարգությունը այս աշխարհում։ Նա ամենուր չէ, քանի որ նա չի գտնվում մեղանչող մարդու մեջ, կամ հեռանում է նրանից, յերբ նա մեղք է գործում։

Հայտնությունը կապացուցեր, աստծո նենգությունը։ Ամեն մի հայտնություն, յենթադրում է, թե աստվածը յերկար ժամանակ մարդկային ցեղը զրկել է այն գիտելիքներից, որոնք անհրաժեշտ են նրա յերջանկության համար. յերբ նա այդ անում է քչերին, դա առանձնաշնորհում է, որը չի ներդաշնակում իր բարության հետ։ Հայտնությունը կկործաներ նրա անփոփոխականությունը, որովհետև կյենթադրվեր, թե նա մի ժամանակ արել է այն, ինչ մի ուրիշ ժամանակ չի արել։

Յեվ հետո, ինչ է նշանակում միստիկական հայտնություն, այսինքն մի հայտնություն, որն անհասկանալի յե։ Յեթե անգամ, միայն մի մարդ այդ չըմբռներ, դարձյալ այդ բավական կլիներ աստծո անարդարությունը հաստատելու համար։

ԳԼՈՒԽ XX

ԱՍՏԾՈ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԼԱՐԿԻ ԱՌԱՋԱԴՐԱԾ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ասում են, թե բոլոր մարդիկ համաձայն են, որ աստվածը գոյություն ունի և բնության ձայնը բավական է այդ մեզ ապացուցելու համար. սա մի բնածին գաղափար է։

Որ աստծո գաղափարը ձեռք բերած մի հասկացողություն է, այդ ապացուցվում է բուն այդ հասկացողության բնույթով, որը փոփոխվում է դարից դար, յեկեղից յերկիր, մարդուց մարդ։ Որ այդ գաղափարը սխալ հասկացողություն է՝ ապացուցվում է նրանով, որ մարդկանց հաջողվել է կատարելագործել այն բոլոր գիտությունները, որոնք

ունեն իբրև նյութ, իրական առարկաները և որ աստծո գիտությունը ամենուրեք նույն կետի վրա յե մնացել։ Ոչ մի այլ բանում մարդկանց կարծիքներն այնքան տարբեր չեն յեղել, ինչպես այդ հարցում։

Յեթե ստույգ է, որ յուրաքանչյուր ազգություն ունի մի կուլտ, այդ բնավ չի ապացուցում աստծո գոյությունը։ Մի կարծիքի ընդհանրականությունը նրա ճշմարտության ապացույց չի կարող լինել։ Չե՞ որ մի ժամանակ ամենքն ել հավատում եյին կախարդության, ուրվականներին։ Մթթե Կոպերնիկոսից առաջ մարդիկ չեյին կարծում թե յերկինքը անշարժ է, և թե արևն է պտտվում նրա շուրջը։

Աստծո գաղափարն իր բոլոր հատկություններով ուրիշ հիմք չունի, քան մեր հայրերի կարծիքը, որը մեզ ներարկվում է դաստիարակությամբ, մանկությունից յուրացված սովորությամբ և որն ամրապնդում են որինակն ու հեղինակությունը։ Ահա թե ինչու մենք կարծում ենք, թե յուրաքանչյուր մարդ ծնվում է աստծո գաղափարով հանդերձ։

Մենք հենվում ենք այս գաղափարներին, առանց բնավ նեղություն կրելու այդ մասին մի լավ խորհրդածելու։

Դոկտոր Կլարկը ասածո գոյության մասին ամենահամոզեցուցիչ յեղանակով խոսելու համբավ ունի։

Նրա առաջադրությունները հանգում են հետևյալին.

1. Մի ինչ վոր բան հավիտյանս ի վեր գոյություն է ունեցել։

— Այո, բայց ինչ է այդ բանը։ Ինչու համար չընդունել, վոր այդ ավելի շուտ մատերիան է, քան զուտ վոգին։ Հիրավի, յեթե մի բան գոյություն ունի, նշանակում է, վոր գոյությունը նրան անհրաժեշտ է։

Այն, ինչ չի կարող անհետանալ, անհրաժեշտաբար գոյություն ունի։ Այդպիսին է մատերիան։ Ասել է, այն է, վոր միշտ գոյություն է ունեցել։

2. Անկախ և անփոփոխ եյակը գոյություն է ունեցել հավիտյանս ի վեր։

— Նախ՝ ինչպիսին է այդ եյակը։ Անկախ է արդյոք նա իր սեփական եյությունից։ Վոչ, վորովհետև նա չի կարող այնպես անել,

վոր այն եյակները, վորոնք ինքն է ստեղծում կամ շարժման մեջ դնում, այլ կերպ գործեն, քան ըստ այն հատկությունների, վորոնցով նա ուժտել է նրանց։ Բացի այդ, մի մարմին կախում ունի մի այլ մարմնից լոկ այն դեպքում, յերբ մեկն իր գոյությունը և գործելակերպը պարտական է մյուսին։ Մատերիան լոկ այս հիման վրա կարող է կախում ունենալ այդպիսի եյակից։ Արդ՝ քանի վոր մատերիան գոյություն ունի հավիտյանս ի վեր, այն չի կարող իր գոյությունը պարտական լինել մի այլ եյակի։ Իսկ յեթե այն հավիտենական է կամ գոյություն ունի ինքն իրմով, ակներև է, վոր իբրև այդպիսին, նա իր մեջ, յուր բնության մեջ, պարփակում է այն բոլորը, ինչ վոր անհրաժեշտ է գործելու համար. հետևաբար, մատերիան հավիտենական լինելով, կարիք չունի շարժիչի։

Անփոփոխ է արդյոք այդ եյակը։ Վոչ, վորովհետև անփոփոխ եյակը չի կարող վոչ կամք ունենալ, վոչ էլ հետևողականորեն գործել։ Արդ՝ յեթե այդ եյակը ստեղծել է մատերիան և ծնել տիեզերքը, ասել է, յեղել

ե մի ժամանակ, յերբ նա կամեցել ե, վոր այդ մատերիան և տիեզերքը գոյանան, յեղել ե մի ժամանակ, յերբ նա կամեցել ե հակառակը։ Ուրեմն նա անփոփոխ չե։

3. Այս հավերժական, անփոփոխ և անկախ եյակը ապրում ե ինքն իր շնորհիվ։

— Բայց ինչու համար մատերիան, վորն անխորտակ ե, չի կարող գոյություն ունենալ ինքն իր շնորհիվ։

4. Ինքն իր շնորհիվ ապրող եյակի եյությունն անհասկանալի յե։

— Այո, բայց այդպես ե նաև մատերիայի եյությունը։ Յեվ այդ գոնե մենք տեսնում ենք. իսկ աստվածության գոյությունը մեզ համար անմատչելի յե, քանի վոր մենք վոչ մի կերպ այդ չենք կարող շոշափել։

5. Ինքն իր շնորհիվ անհրաժեշտորեն գոյություն ունեցող եյակն անհրաժեշտորեն հավերժական ե։

Բայց նույնը կարելի կլիներ ասել նաև մատերիայի մասին։ Ինչու համար ցանկանում են այդ եյակը տարբերել տիեզերքից։

6. Ինքն իր շնորհիվ գոյություն ունեցող եյակը պետք ե լինի անսահման և ամենուր։

— Անսահման, թող լինի, բայց վոչ մի բան մեզ չի ապացուցում, թե մատերիան նույնպես անսահման չե։ Իսկ ինչ վերաբերում ե ամենուրությանը, վոչ, չենք ընդունում։ Մատերիան առնվազն տարածության մի վորոշ մասն ե գրավում և այդտեղից աստվածությունը պետք ե բացառվի։

7. Անհրաժեշտորեն գոյություն ունեցող եյակը անհրաժեշտորեն յեզակի յե։

— Յեթե այդպիսի եյակից դուրս վոչինչ չկա, իրոք պետք ե վոր նա յեզակի լինի. բայց կարելի յե արդյոք ժխտել տիեզերքի գոյությունը։

8. Ինքն իր շնորհիվ գոյություն ունեցող եյակն անհրաժեշտորեն պետք ե բանական լինի։

— Բայց բանականությունը մարդկային հատկությունն ե։ Բանականություն ունենալու համար պետք ե խորհել, խորհելու համար անհրաժեշտ ե գաղափարներ և զգայարաններ ունենալ, յեթե զգայարաններ ունես, ասել ե մատերիական ես. իսկ յեթե մատերիական ես, ասել ե զուտ վոգի լինել չես կարող։ Բայց ունի՞ արդյոք այդ եյակը,

այդ գերագույն էյակը մի առանձին բանականություն, որը նրան շարժման մեջ է դնում։ Ինչու այդպիսի բանականություն չվերագրել բնության, որն իր մեջ բանական էյակներ է պարփակում։

9. Ինքն իր շնորհիվ գոյություն ունեցող էյակը ազատ գործող մի ույժ է։

— Բայց իր դիտավորություններն ի կատար ածելիս, մի՞թե նա արգելքների չի հանդիպում։ Ցանկանում է նա արդյոք, որ չարը կատարվի, թե՞ անկարող է այդ խափանել։ Այս դեպքում, նա կամ ազատ չէ, կամ հանդուրժում է մեղքը։ Ընդսմին, նա գործում է լոկ իր գոյության օրենքների համաձայն։ Նրա կամքը պայմանավորված է իմաստությամբ, և նրա վերագրված նպատակներով։ Ուրեմն նա ազատ չէ։

10. Ամեն բանի գերագույն պատճառը անհուն զորություն ունի։

— Բայց յեթե մարդն ազատ կարող է մեղք գործել, ապա ուր է աստծո անսահման հզորությունը։

11. Ամեն բանի արարիչը անհրաժեշտորեն պետք է իմաստուն լինի։

— Բայց յեթե նա ամեն բանի արարիչն է, ասել է նա արարիչն է նաև այն բոլոր բաների, որը մենք համարում ենք հույժ անիմաստ։

12. Գերագույն պատճառը պետք է անհրաժեշտորեն ոժտված լինի բոլոր բարոյական կատարելություններով։

— Կատարելության իդեան, վերացական մի իդեա յե։ Որևե բան մեզ թվում է կատարյալ միմիայն նրա քննարկման մեր տեսակետի առնչությամբ։ Համարում ենք մի՞թե աստծուն կատարելապես բարի, յերբ նրա արարքները մեզ վրդովում են և մենք հարկադրված ենք դանդատվել նրա մեզ հասցրած չարիքներից։

Կարելի՞ յե արդյոք նրան կատարյալ համարել իր գործերով, յերբ մենք կարդավորության կողքին, տեսնում ենք ամենակատարյալ անկարգավորությունը։

Յեթե պնդում են, թե աստվածընման չե այն բոլորին, ինչ կարող է ըմբռնել մարդը և յեթե նրա մասին վոչինչ դրական չի կարելի ասել, ուրեմն առնվազն թույլատրելի յե կասկածել նրա գոյության մասին։ Յեթե նա

անհասանելի յե, կարելի՞ յե արդյոք մեզ կշտամբել, թե մենք այն չենք ըմբռնում։

Մեզ ասում են, թե վողջախոհությունը և բանականությունը բավական են, վոր մենք համոզվենք, թե նա գոյություն ունի։ Բայց միևնույն ժամանակ, մեզ ասում են, թե բանականությունն այդպիսի խնդիրներում անվստահելի ուղեցույց է։

Բացի դրանից, համոզումը լոկ ակնարկության և ապացույցների հետևանքն է։

ԳԼՈՒԽ XXI

ԱՍՏԾՈ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ, ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ԱՅԼ, ԱՊԱՅՈՒՑՑՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ առարկում են, վոր ամենուրեք, միշտ անփոփոխ ֆիզիկական և կույր անհրաժեշտությունից, եակների վոչ մի այլազանություն չի կարող առաջ գալ, և վոր մեր տեսած այլազանությունը կարող է առաջ գալ միայն ինքն իր շնորհիվ գոյություն ունեցող եյակի մտքից և կամքից։

Բայց ինչո՞ւ այդ այլազանությունը չի կարող առաջանալ բնական պատճառներից, ինքն իր շնորհիվ գործող մատերիայից, վորի շարժումը զուգորդում և համակցում է տարբեր և նույնանման տարրերը։ Մի՞թե հացը չի գոյանում ալյուրի, թթխմորի և ջրի

համակցությունից։ Ինչ վերաբերում է կույր անհրաժեշտության, նրա եներգիան մեզ անհայտ է։

Բայց, մեզ ասում են, այն կարգավորված շարժումները, տիեզերքում տիրող այն սքանչելի կարգը, այն բարերարությունները, վորոնք թափվում են մարդկանց գլխին, վկայում են իմաստության, բանականության մասին և այլն... Բայց այդ շարժումները բնության որենքների հետևանքներն են և դրանք համարվում են բարեկարգված, յերբ մեզ ոգտակար են, իսկ վատ, յերբ դադարում են ոգտակար լինելուց։

Պնդում են, թե անասուններն իրենց գոյության բուն պատճառի ապացույցն են։ Նրանց մարմնամասերի զարմանալի ներդաշնակությունը և այլն... Մենք չենք կարող կասկածել բնության հզորության վրա։ Բայց սրանից հետևում է արդյոք, թե անասուններն անփոփոխ մի ատած ստեղծագործություններն են։ Նրանք անդադար փոփոխվում են, և վերջանում նրանով, վոր վոչնչանում են։ Յեթե ատվածն այլ կերպ չի կարող անել, ապա նա վոչ ատա է, վոչ էլ ամենակարող։ Յեթե իր կամքը փոխում է, նա անփոփոխ չէ։ Յեթե նա թույլ է տալիս, վոր այն որգանիզմները, վորոնց նա զգայնություն է հաղորդել, ցավ զգան, ասել է նա զուրկ է բարությունից։ Յեթե նա չի կարողացել իր ստեղծած արարածներն ավելի տկուն դարձնել, նա զուրկ է վարպետությունից։

Իրեն բնության գլուխ-գործոցն համարող մարդն իր եությամբ կարծեցյալ ատածո անընդունակությունը կամ նենգությունը կապացուցեր։ Նրա մեխանիզմը ավելի յենթակա յե խանգարումների, քան մյուս ամենակոպիտ եյակների մեխանիզմը։ Ո՞վ չեր նախընտրի անասուն լինել կամ քար դառնալ, յուր սրտին մոտ յեղած առարկայի կորստի պահին։ Ավելի գերադասելի չէ՞ լինել անշունչ զանգված, քան մի սնոտիապաշտ եյակ, վորը զողում է իր ատածո լծի տակ և սարսափով սպասում ապագա կյանքի հավիտենական տառապանքներին։

Կարելի՞ յե միթե, ասում են մեզ, տիեզերքը ըմբռնել առանց այդ կերտող վարպետի, վորը հսկում է իր ստեղծագործության վրա։

Յեթե վորևե ժամացույց կամ արձան տրվեն վայրենի մարդուն, վորը յերբեք չի տեսել դրանց, նա չի հասկանալ ճանաչել, վոր դրանք ճարտար վարպետի գործեր են։

1. Բնությունը հույժ հզոր և հույժ ճարտար է. բայց մեզ համար ավելի հասկանալի չե, թե նա ինչպես կարողացել է ստեղծել քարը կամ մետաղը, քան թե այնպիսի մի կարգավորված գլուխ, ինչպիսին է Նյուտոնի գլուխը։ Բնությունն ամենակարող է. յերբ մի բան գոյություն ունի, դա ապացույց է, վոր բնությունը կարողացել է այն կերտել։ Պետք չե յեզրակացնել, վոր բնության այն ստեղծագործությունները, վոր մեզ դերազանցապես հիացնում են՝ իրեն չեն պատկանում։

2. Վայրենին, վորին մի ժամացույց կամ արձան կտան, կարող է կամ չի կարող գաղափար կազմել մարդկային ճարտարության մասին։ Իսկ յեթե նա այդպիսի գաղափար կազմում է, նա կմտածի, թե դրանք կարող են իրեն նման արարածի գործը լինել. յեթե չի կազմում՝ նա կմտածի, թե դրանք մարդու գործը չեն, և այս դեպքում նա այդ տարօրինակ գործերը վերագրում է մի վոգու,

այսինքն մի անհայտ ույժի, վորն, ինչպես նա կարծում է, ոժտված է մի զորությամբ, վորը չունեն իր տեսակի եյակները։ Դրանով նա վոչինչ ապացուցած չի լինի, բացի այն, վոր նա չգիտե, թե ինչ հորինելու ընդունակ է մարդը։

3. Իրազեկ մարդը՝ բացելով և քննելով ժամացույցը, տեսնում է, վոր դա միայն մարդու գործը կարող է լինել։ Նա տեսնում է, վոր այդ տարբերվում է բնության անմիջական արտադրություններից, վորովհետև նա չի տեսել, վոր բնությունը հղկված մետաղե անվակներ կերտե։ Նա բնավ չի մտածի, թե նյութական գործը կարող է աննյութական պատճառի արդյունքը լինել։ Աշխարհը դիտելով մենք ըմբռնում ենք այնտեղ կատարվող յերևույթների նյութական պատճառը. այդ պատճառը բնությունն է, վորի եներգիան բացահայտվում է բոլոր նրանց համար, վորոնք այն ուսումնասիրում են։

Թող չասեն մեզ, թե այս նշանակում է ամեն ինչ վերագրել մի կույր պատճառի, հյուլեների պատահական զուգորդության, պատահականության։ Մենք կույր կոչում

ենք այն պատճառները, վոր մենք չենք ճանաչում. պատահական՝ այն գործողությունները, վորոնց պատճառները մեզ անհայտ են։ Մենք պատահականության վերագրում ենք այն գործողությունները, վորոնց անհրաժեշտ կապակցությունը իրենց պատճառների հետ մենք չենք տեսնում։

Բնությունը կույր պատճառ չէ. նա չի ներգործում պատահաբար։ Այն, ինչ նա ստեղծում է՝ անհրաժեշտ է և միայն իր անփոփոխ որենքների հետևանքն է։ Այս խնդիրներում շատ կարելի յե, վոր մենք վորոշ բաներ չգիտենք. բայց վոչի, ասված, բանականություն բառերը չեն վերացնում մեր անգիտությունը, դրանք միայն կկրկնապատկեն այդ։

Սա կծառայե իբրև պատասխան այն մըշտական առարկության, վորն անում են բնության հետևորդներին՝ թե սրանք ամեն ինչ պատահականության են վերագրում։ Պատահականությունն անիմաստ մի բառ է, վորը ցույց է տալիս միայն այն գործածողների տգիտությունը։ Որինաչափ գործը, ասում են, չի կարող իր գոյությունը պատա-

հականության համակցություններին պարտական լինել. յերբեք չի հաջողվի Իլիականի պես մի պոեմա կերտել պատահականորեն վերցված, համակցված տառերով։ Անտարակույս, այդ այդպես է. հենց բնությունն է, վոր վորոշակի որենքների համաձայն համակցում է այնպես կարգավորված գլուխը, վորն ի վիճակի լինի այդպիսի պոեմա կերտել։ Հենց բնությունն է, վոր տալիս է ուղեղը, խառնվածքը, այնպիսի մի յերևակայություն, վորը, մի գլուխ, ինչպեսին Հոմերոսինն է, նույնանման պայմաններում կստեղծե անհրաժեշտորեն և վոչ պատահմամբ՝ Իլիական պոեման։ Սա մի ճշմարտություն է, վորը չի կարելի չընդունել, յեթե միայն չեն ուզում ժխտել, թե ամեն բանում նույնանման պատճառները պետք է միանգամայն նույնական հետևանքներ ունենան։

Ամեն ինչ բնության համակցությունների հետևանքն է։ Այն, ինչ մեզ ավելի զարմացնում է նրա ստեղծագործությունների մեջ, իր այլազանորեն կարգավորած մասերի բնական հետևանքն է։

ԳԼՈՒԽ XXII

ԴԵՒԶՄԻ, ՈՊՏԻՄԻԶՄԻ ՍԻՍՏԵՄԻ ՅԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե աստուածը գոյություն ունենար և նույնիսկ յեթե յենթադրենք թե նա բանականություն և ձգտումներ ունի, դրանից ինչ է հետևում մարդկային ցեղի համար։ Ինչ առնչություն մեզ հետ կարող է ունենալ այդպիսի եյակը։ Բարի կամ չար գործերը, վորոնք, ինչպես մենք յերևակայում ենք, ըղթում են նրա ամենակարողությունից և նախատեսությունից, մի՞թե նվազ չափով նրա իմաստության, արդարության, հավիտենական որենքների հետևանքները կլինեն։ Կարող ենք յենթադրել, թե նա կփոխի իր պլանը մեզ համար։ Պարտված մեր աղոթքներից, կհրամայե՞ նա արդյոք, վոր կրակը

այլևս չայրի, տենդն այլևս չցնցի, վոր փլչող տունը մեզ իր ավերակների տակ չճմլե, յերբ մենք այնտեղից անց ենք կենում։ Յեթե նա հարկադրված է թույլ տալ, վոր իր իմաստությամբ կարգավորած յեղելությունները ազատորեն ընթանան, ապա ել ի՞նչ կարող ենք մենք խնդրել նրանից։ Մենք խելագարներ կլինեյինք, յեթե կամենայինք այդ դեպքերին դիմադրել։

Խանդավառ յերջանիկը ինձ կասի. ինչու համար ինձ զրկել ասածուց, վորը յես պատկերացնում եմ իբրև բարությամբ լի մի իշխանավոր, վորն ինձ սիրում է և հոգում իմ բարեկեցությունը։ Թողեք, վոր յես յերախտագիտությունս հայտնեմ նրա բարերարության համար։ Ի՞նչու համար, կասի դժբախտը, զրկել ինձ ասածուց, վորի սփոփիչ գաղափարը ցամքեցնում է արտասուքներիս աղբյուրը։

Յես նրանց պատասխանում եմ, հարցնելով, թե ի՞նչ բանի վրա նրանք հիմնում են այն բարությունը, վորը վերագրում են ասածուն։ Բարերա՞ր է նա արդյոք բոլոր մարդկանց համար։ Մի յերջանիկի դիմաց

քանի՞ դժբախտներ կան։ Վերջքան թշվառություններ հարվածում են մեզ, իսկ նա միշտ խուլ է մնում մեր ողնության աղերսներին։ Այսպես ուրեմն, պետք է վոր յուրաքանչյուր մարդ ասածո բարության մասին դաղափար կազմի այն վիճակի և հանդամանքների համաձայն, վորոնց մեջ նա գտնվում է։

Ծանդավոր ոպտիմիստները կարծես հրաժարվել են իրենց զդայարանների վկայությունից, յերբ պնդում են, թե բնության մեջ ամեն ինչ բարիք է, մինչդեռ այդտեղ յուրաքանչյուր բարիքին անդադար ընկերակցում է չարիքը։

Բարությունը, ասում են մեզ, ամբողջության նպատակն է։ Բայց ամբողջությունը նպատակ չի կարող ունենալ, վորովհետև յեթե նա ունեներ մի նպատակ, նա այլևս ամբողջություն չեր լինի։

Աստվածը, շարունակում են պնդել, կարող է ոգուտ քաղել մեզ համար այն չարիքներից, վորոնց դատապարտում է նա մեզ այս աշխարհում։ Բայց, ո՞վ ինչ գիտե այս մասին։ Ի՞նչպես հավատալ, թե այս աշխարհում, մեզ հետ, այսքան վատ վերաբերվելուց հետո,

աստվածը մի այլ տեղ ավելի լավ պիտի վարվի։ Ի՞նչ իրական բարիք կարող է առաջ գալ այն անբերությունից, սովից, վորոնք ամայի յեն դարձնում յերկիրը։

Մարդիկ հարկադրված են յերևակայել հանդերձյալ կյանքը, վորպեսզի հնարավոր լինի արդարացնել աստվածն այն չարիքներից, վոր նա պատճառում է մեզ այս աշխարհում։

Վոմանք յենթադրում են, թե աստվածը մատերիան վոչնչությունից ստեղծելուց հետո, ընդմիշտ հանձնել է մատերիան իրեն հաղորդված շարժման։ Աստվածը նրանց պետք եր միայն բնությունը ստեղծելու համար. այս կատարելուց հետո, նա մնում է կատարյալ անտարբերության մեջ իր արարածների նկատմամբ։ Բայց այս աստվածը, մարդկանց համար մի անոգուտ եյակ է։

Ուրիշները յենթադրում են, թե մարդը վորոշ պարտականություններ ունի իր արարչի նկատմամբ։ Մի քանիսը յերևակայում են, թե արդար լինելով, նա պետք է վարձատրե և պատժե։ Նրանք իրենց աստվածը մարդու յեն վերածում։ Բայց նրան վերագրված բարոյական ատրիբուտները յուրաքանչյուր

ըոպկե հերքվում են, հենց վոր նա համարվում է բոլոր իրերի, հետևաբար, թե բարիքի և թե չարիքի արարիչը։ Այս կնշանակեր — ամեն բանի հավատալ։

Մի՞թե դուք ավելի նախընտրում եք, կասեն մեզ, կախում ունենալ կույր բնությունից, քան բարի, իմաստուն և խելացի էյակից։

Բայց, առաջին. մեր ցանկությունը չի պայմանավորում իրերի ռեալ գոյությունը. յերկրորդ. այդ այնքան բարի և իմաստուն էյակը մեզ ներկայացվում է իբրև անբան բռնակալ և մարդու համար ավելի ոգտակար կլիներ կախում ունենալ կույր բնությունից. յերրորդ. լավ ուսումնասիրված բնությունը, մեզ տալիս է այն ամենը, ինչ հարկավոր է, վորպեսզի մենք յերջանիկ լինենք, մեր եյության համաձայն։ Նա մեզ տալիս է այն միջոցները, վորոնք հարկավոր են յերջանկության հասնելու համար։



Գ Լ Ո Ւ Խ XXIII

ՔՆՆԱՐԿՈՒՄՆ ԱՅՆ ՈԳՈՒՏՆԵՐԻ, ՎՈՐՈՆՔ ԱՌԱՋ ԵՆ ԳԱԼԻՍ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՑ ԿԱՄ ԱՅԴ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԱԶԳԵՐԻ ՅԵՎ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՅԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԹՈՂԱԾ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախ և առաջ բարոյականությունը, վորի միակ առարկան ինքնապահպանության ձգտող և հասարակության մեջ ապրող մարդն է, վոչ մի ընդհանուր բան չունի այս սիստեմների հետ։ Մարդն ինքն իր մեջ դտնում է դրդապատճառներ յուր կրքերը չափավորելու, ախտավոր հակումների հետ պայքարելու, իրեն ոգտակար և սիրելի դաձնելու այն եյակներին, վորոնց շարունակ պետքն ունի նա։

Մյուս կողմից, այն սիստեմները, վորոնք աստվածը մեզ պատկերում են իբրև մի բռնակալ, չեն կարող նրան մեզ ներկայացնել վորպես տիպար մեր վարվելակերպի։ Այդ աստվածը նախանձոտ, վոխակալ, շահախնդիր է։ Ուստի և կրոնը յերկպառակություն է առաջ բերում մարդկանց մեջ։ Նրանք իրար հետ կռվում, իրար հալածում են, առանց մեղադրելու իրենց այն հանցանքներում, վոր նրանք գործում են հանուն աստծո։

Նույն մտքի մոլորությունն է տիրում պաշտամունքների ընդավառում։ Այստեղ խոսում են միայն զոհաբերությունների մասին։ Քրիստոնյաների զուտ վոգին պահանջում է, վոր աստծո ցասումը մեղմելու համար մահվան դատապարտվի նրա սեփական վորդին։

Մարդկանց անհրաժեշտ է մարդկային բարոյականություն՝ հիմնված մարդու բնության, փորձի և բանականության վրա։

Կգտնե՞նք արդյոք մենք միանգամայն իրական առաքինություն քահանաների մոտ։ Աստծո գոյության խնդրում այնքան հա-

մոզված այս մարդիկ, մի՞թե նվազ չափով են անձնատուր լինում ցավության և անժուժկալության։ Յերբ տեսնում ես նրանց վարվելակերպը, գալիս ես այն համոզմանը, վոր նրանք բոլորովին հրաժարվել են աստծո գաղափարից։

Մի՞թե վրիժառու և պարգևատու աստծո գաղափարը ավելի պատկառելի է դարձնում այն իշխանավորներին, վորոնք իրենց իշխանությունը հիմնում են աստվածության իսկ վրա։ Յեվ մի՞թե աթեիստներ են այն անարդար և անխիղճ ինքնակալները, վորոնք թշվառության են մատնում ուրիշներին։ Նրանք աստծու անունով են յերդվում, պատրաստ լինելով հանդերձ յերդումները դրժել, հենց վոր իրենց շահը այդ պահանջի։

Կրոնը բարվոքե՞ց արդյոք ժողովուրդների բարքերը։ Կրոնը նրանց համար փոխարինում է ամեն ինչի։ Նրա սպասարկուները զոհ, վոր կարող են պահպանել իրենց շահերին ոգտակար կրոնի դոգմաները և սովորությունները, աշխատել են բազմապատկել ճնշիչ կանոնները, վորպեսզի ոգտագործեն նույնիսկ դրանց խախտումը իրենց սարուկների

կողմից։ Մեղքերի թողության մենաշնորհը, յերկնային շնորհների վաճառք՝ ահա թե ինչով ե զբաղվել կրոնը։ Հորինվեցին անիմաստ բառեր. ամբարիշտություն, սրբապղծություն, աստվածահայհոյություն, հերետիկոսություն։ Այս յերևակայական հանցանքների համար մարդկանց ամենադաժան պատիժների յեն յենթարկում։

Ի՞նչ ե կատարվում յերիտասարդության հետ այդպիսի դաստիարակների ձեռքում։ Մարդուն հենց մանկությունից թունավորում են անհեթեթ հասկացողություններով։ Նրա միտքը պղտորում են ցնորքներով, վոգին կաշկանդում մեխանիկական բարեպաշտությամբ. նրան լարում են բանականության և ճշմարտության դեմ։

Կրոնական դաստիարակությունը կրթում ե արդյոք քաղաքացիներ, ընտանիքի հայրեր, ամուսիններ։ Այդտեղ կրոնը դերադասվում ե ամեն բանից։ Կրոնամոլին ասում են, թե լավագույնը աստծուն հնազանդվելն ե, քան մարդկանց. սրա հետևանքով նա մտածում ե, թե կարելի յե ապստամբել իր իշխանի դեմ և լքել կինը և այլն, յուրաքանչյուր

անգամ, յերբ յերկնի շահերը այդ են պահանջում։

Ի՞նչքան առավելություններ քաղած կլինեյին ազգերը, յեթե դաստիարակությունը ուղղված լիներ ավելի ոգտակար նյութերի շուրջը։ Ի՞նչքան թանկարժեք գիտելիքներ և այլն, և այլն...

Չնայած կրոնական դաստիարակության, վերքան արատավոր մարդիկ կան, վորոնք տարված են հանցավոր սովորություններով։ Չնայած դժոխքի սարսափներին, վորի դաղափարն անդամ սարսռեցնում ե մարդուն, դեռ և անբարոյական մարդիկ վողողում են քաղաքները։ Նրանք սարսափից քար կկտրեյին, յեթե ամենափոքր տարակուսանք արտահայտվեր աստծո գոյության մասին։ Իսկ տաճարից դուրս գալիս, վորտեղ նրանք նոր զոհաբերություններ են կատարել, աստվածային պատգամներ կարդացել, յերկնի անունով հանցանքը ահալի դարձրել՝ յուրաքանչյուր վոք վերադառնում ե յուր մոլորություններին։

Իսկ մարդասպանները, գողերը, վորոնց կյանքը հնձում են որենքները, մի՞թե ան-

հավատներ կամ աթեիստներ են։ Այս թշվառականները հավատում են աստծուն։ Նրան միշտ խոսել են աստծո մասին, հանցանքների համար սահմանված նրա պատիժների մասին։ Սակայն քողարկված աստվածը և հեռավոր պատիժը չեն կարող արգելել այն չարագործությունները, որոնց անկարող են կասեցնել յերկրային իրական տանջանքները։

Միևնույն մարդը, որը կվախենա ամենափոքր հանցանքը գործել մի ուրիշ մարդու ներկայությամբ, ամեն ինչ իրեն թույլ է տալիս, յերբ կարծում է թե իրեն վոչ վոք աստծուց բացի չի տեսնում. ահա թե որքան աստծո գաղափարը անզոր է սանձելու մարդկանց կրքերը։

Ամենաբարեպաշտ հայրը՝ իր վորդուն խրատներ տալիս՝ խոսում է արդյոք յերբևե վոխակալ աստծո մասին։ Ցոփությունից խանգարված առողջություն, խաղից վատնված հարստություն, հասարակության պատիժներ՝ ահա նրա գործադրած փաստարկները։

Մարդկանց կառավարելու արվեստը՝ նրանց խաբելու, կեղեքելու արվեստը չե։ Բանա-

կանության դիմենք և այդ ցույց կտա մեզ, վոր յերջանիկ լինելու համար, մարդը պետք է ջանա պահպանել իր և ուրիշների բարեկեցությունը. ահա թե վորն է առաքինությունը։

Այսպես ուրեմն, աստվածության գաղափարը նույնքան անոգուտ է, վորքան և հակառակ՝ վողջ բարոյականության։ Նա վոչ մի ոգուտ չի տալիս վոչ հասարակության և վոչ էլ առանձին անհատին։ Ովքեր զբաղվում են այս պատրանքներով, նրանք իրենց կյանքը կանցկացնեն հարատև սարսափների մեջ։ Նրանք կանտեսեն հետաքրքրության ամենաարժանի առարկաները, իրենց տխուր որերը կանցկացնեն հառաչանքների, աղոթքների, ապաշխարանքների մեջ։ Նրանք իրար մատնում են այնպիսի տառապանքների, վոր յերևակայությունը կարող է հնարել, կարծելով, թե ցասկոտ աստծուն կմեղմացնեն։

Ի՞նչ ոգուտ կարող է քաղել հասարակությունն այդպիսի մոլեռանդ խելագարների մռայլ հասկացողություններից։ Նրանք աշխարհին անոգուտ և իրենք իրենց վնասակար մարդատյացներ են, կամ ժողովուրդ-

ներ խռովող կրոնամոլներ։ Յեթե կան մի քանի անվրդով խանդավառ մարդիկ, վորոնք մխիթարություն են գտնում իրենց կրոնական իդեաների մեջ, ապա կան նաև միլիոնավոր, իրենց սկզբունքները հետևողականորեն դավանող մարդիկ, վորոնք դժբախտ են ամբողջ կյանքում։ Ահեղ ատոմ իշխանության տակ, խաղաղ բարեպաշտն այն մարդն է, վորը յերբեք չի դատում։

ԳԼՈՒԽ XXIV

ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ ԿԱԶՄԵԼ ՉԵՆ ԿԱՐՈՂ. ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԲՆԱԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՇԿԱՆԴՈՒՄ Ե ՄՏՔԻ ՀԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

Կամայական և անհետևողական կարծիքները, հակասական հասկացողությունները, վերացական և անհասկանալի մտահայեցումները, բարքերի և դիտության հիմք ծառայել չեն կարող։ Այդ կազմում են ակներև, մարդկային բնությունից բղխած, փորձի և բանականության վրա հիմնված սկզբունքները։ Բարոյականությունը առաջ է յեկել, վոր ընդմիշտ անփոփոխ մնա և վոչ

թե հետևի մարդու յերևակայության, կրքերին, շահերին, քմահաճույքներին։ Այն պետք է լինի կայուն և միակերպ բոլոր անհատների համար, առանց փոփոխվելու յերկրից յերկիր և ժամանակ առ ժամանակ։ Բարոյականությունը, վորը լոկ հասարակության մեջ ապրող մարդու պարտականությունների գիտությունն է, պետք է հիմնել մեր բնության հատուկ ընդհանրական զգացումների վրա։ Մի խոսքով, նրան իրրև հիմունք պետք է տալ իրերի անհրաժեշտությունը։

Ըստ վորում, ասվածաբանությունն անիրավացիորեն մտածել է, թե կարիքը, յերջանկության ձգտումը, հասարակությունների և անհատների ակներև շահը անզոր դրդապատճառներ են մարդուն բարոյականության սահմաններում պահելու համար։ Բարոյականությունն ասածուց բղխեցնելով, նրան յենթարկեցին մարդկանց կըքերին. կամենալով այդ հիմնել պատրանքի վրա, զրկեցին այն ամեն մի հիմունքից։

Ասածս բարոյականությունը, շնորհիվ նրա մասին կազմած զանազան դաղափարների, փոփոխվում է մարդուց մարդ, յերկրից յեր-

կիր, յուրաքանչյուր մարդու տարբեր յերևակայության համաձայն։

Կրոնական բարոյականությունը համեմատեցեք բնաբարոյականության հետ։ Այդ հակասում է յուրաքանչյուր բոպե այս վերջինիս։ Բնությունը մարդուն դրդում է սիրել, պահպանել ինքզինքը, անդադար ավելացնել իր յերջանկության սահմանը. իսկ կրոնը նրան հրամայում է սիրել միայն ահալի ասածուն, ինքզինքը ատել, սրտի ամենաքաղցր հաճույքները զոհաբերել յուր տհավոր կուռքին։ Բնությունը մարդուն պատվիրում է՝ բանականությունից խորհուրդ հարցրու. կրոնը նրան ասում է, թե բանականությունն անվստահելի ուղեցույց է։ Բնությունը մարդուն պատվիրում է՝ վորոնիր ճշմարտությունը. կրոնն ասում է՝ վախեցիր նրանից և վոչինչ մի քննի։ Բնությունը մարդուն պատվիրում է՝ յեղիր ընկերական և սիրիր քո մերձավորներին։ Կրոնը նրան ասում է՝ խորշիր հասարակությունից, անջատվիր ուրիշներից։ Բնությունն ամուսնուն պատվիրում է՝ դորովալի յեղիր. կրոնը ամուսնությունը պատկերում է իրրև պիղծ

և անկատար վիճակ։ Բնությունն անառակ մարդուն պատվիրում է՝ խուսափիր ամոթալի մոլությունից, որը կարող է բարեկեցության վնասել. կրոնը՝ վոճիրն արգելելով հանդերձ, խոստանում է նրա քավությունը, յեթե վոճրագործը խոնարհի քահանաների վոտքերի առաջ և զոհաբերություններ, ընծաներ, ծիսակատարություն մատուցի և աղոթք անի։

Աստվածաբանությամբ կուրացած մարդկային միտքը գրեթե վոչ մի քայլ առաջ չի գնացել։ Տրամաբանությունը գործադրվել է ամենաանհայտ հակասություններն ապացուցելու համար։ Աստվածաբանությունը ծառայել է սխալ դաղափարներ տալու իշխանավորներին իրենց իրավունքների մասին, վորոնք իբր թե աստծուց են բղխում։ Որենքները յենթարկվեցին կրոնի քմահաճույքներին։ Ֆիզիկան, բնագիտությունը, անատոմիան հարկադրվեցին ամեն բանի վրա նայել սնոտիապաշտության աչքով։ Ամենաակներև փաստերը հերքվում և չեյին ընդունվում, հենց վոր դրանք չեյին համապատասխանում կրոնի յենթադրություններին։

Մթթե ֆիզիկայի մեջ կարելի յե վորևե խնդիր լուծել ասելով՝ թե այս ինչ յերևույթը՝ հրաբուխը, հեղեղը, աստծո բարկության նշաններն են։ Փոխանակ աստվածային բարկության վերագրելու պատերազմները, սովը, ավելի ոգտակար և ճշմարիտ չէ՞ր լինի մարդկանց ցույց տալ, վոր այդ բոլոր դժբախտությունները իրենց սեփական անմտության, իրենց իշխանավորների գանանության հետևանքն են։ Այն ժամանակ մարդիկ միջոցներ կվորոնեյին, մի ավելի բանական կառավարությամբ, այդպիսի աղետներից խուսափելու համար։ Մթթե փորձը չպետք եր մահկանացուներին ցույց տար գերբնական միջոցների, քավությունների, աղոթքների, զոհաբերությունների, ծոմապահության, ծեսերի մասին կազմած դաղափարների սխալականությունը, վորոնք յերբեք վոչ մի ոգուտ չեն տվել նրանց։

ԳԼՈՒԽ XXV

ՄԱՐԴԻԿ ԻՐԵՆՑ ՀԱՂՈՐԴԱԾ ԱՍՏՎԱԾՈՒԹՑԱՆ ԳԱՂԱՓԱՐԻՑ ՑԵՐԲԵՎԻՑԵ ՎՈՉ ՄԻ ԲԱՆ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՑԵՋՐԱԿԱՑՆԵԼ: ԱՍՏՎԱԾՈՒԹՑԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ՆՐԱՆՑ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԱՆՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՑԱՆ ՑԵՎ ԱՆՈԳՏԱԿԱՐՈՒԹՑԱՆ ՄԱՍԻՆ

Յենթադրելով հանդերձ, վոր նախախնամությունն ունի աստվածաբանության կողմից իրեն վերագրած բանականությունը, այնուամենայնիվ պետք է ընդունենք, վոր վոչ մի մարդ նախախնամության դիտավորությունները չի կատարում: Աստվածը կամենում է, վոր նրան ճանաչեն, բայց նույնիսկ աստվածաբանները նրա մասին գաղափար կազմել չեն կարող. բայց յեթե ընդունենք անգամ, թե նրանք ճանաչում են աս-

ծուն, վոր նրա գոյությունը, եյությունը և սարիբուտները լիովին ակնբախ են նրանց համար, ապա վայելում են արդյոք մնացած մարդիկ նույն առավելությունը:

Քիչ մարդիկ ընդունակ են խոր և հետևողական մտածողության: Խորհում է արդյոք յերբեք ապրելու համար աշխատանքի հարկադրված ժողովուրդը: Բարձր դասի և աշխարհիկ մարդիկ, կանայք, յերիտասարդները, վորոնք զբաղված են իրենց գործերով, կրքերով, հաճույքներով, նույնքան քիչ են մտածում, վորքան և հասարակ ժողովուրդը: Հարյուր հազար մարդկանց մեջ թերևս չգտնվեն յերկուսը, վորոնք իրենց հարցրած լինեն, թե ինչ են հասկանում, ասված ասելով. մինչդեռ շատ հաղվադեպ է գտնել մարդիկ, վորոնց համար աստծո գոյությունը առեղծված լինի:

Սակայն համոզմունքը յենթադրում է ակնհայտնիություն, վորը միայն կարող է ճշգրտություն հաղորդել: Արդ՝ վորտեղ են այն մարդիկ, վորոնք համոզված են աստծո գոյության մեջ: Լոկ ուրիշների խոսքերի հիման վրա յե, վոր ամբողջ ժողովուրդներ

պաշտում են իրենց հայրերի և քահանաների աստվածը։ Հեղինակավորությունը, վստահությունը և սովորությունը նրանց մոտ փոխարինում են համոզմունքը և փաստերը։ Այստեղ յուրաքանչյուր բան հիմնված է հեղինակավորության վրա, իսկ դատողությունը և հետազոտությունը արգելված են ընդ միշտ։

Մթթե միայն քահանաներին և ներշնչվածներին է վերապահված աստծո գոյության համոզմունքը, որն այնուամենայնիվ, ինչպես պնդում են, այնքան անհրաժեշտ և մարդկային ցեղի համար։ Իրենք արդյոք համաձայն են միմիանց հետ այդ առթիվ։ Կա՞ արդյոք այս խնդրում այն միաբանությունը, որը մենք գտնում ենք գիտությունների և ամենաանշան արվեստների բնագավառում։ Յեթե աստվածն ուզում է, որ իրեն ճանաչեն, սիրեն, յերախտագետ լինեն, ապա ի՞նչու նա իրեն չի հայտնաբերում վողջ յերկրի առաջ, նվազ յերկղիմի և առավել համոզեցուցիչ մի յեղանակով, քան այն հայտնությունները, որոնց հիման վրա նրան ավելի շուտ կարելի յե մեղադրել աշառության մեջ։ Մթթե նա այլ միջոցներ չունի, քան կերպափոխությունները։ Ինչու համար նրա անունը, ատրիբուտները, ցանկությունները չեն գրված բոլորի համար հավասարապես դյուրըմբռնելի տառերով։

Աստվածաբանությունը, վերագրելով աստծուն հակասական հատկություններ, նրան գործելու անկարելիության մեջ է դրել։ Յեթե նույնիսկ նա գոյություն ունենար նրան վերագրված այնքան աններդաշնակ ատրիբուտներով հանդերձ, դրանից վոչ մի կերպ չի կարելի յեզրակացնել թե պետք է ունենալ նրա նկատմամբ այս կամ այն վարվելակերպը կամ պաշտամունքը։

Յեթե աստվածն անհուն բարի յե, ապա ինչու վախենալ նրանից։ Յեթե նա անսահման իմաստուն է, ինչու անհանգստանալ մեր ճակատագրի համար։ Յեթե նա ամենազետ է, ինչու համար նրան հաղորդել մեր կարիքների մասին և ձանձրացնել նրան մեր աղերսանքներով։ Յեթե նա ամենուր է, ինչու համար են տաճարները։ Յեթե նա ամենակալ է, ապա ինչու համար են զոհաբե-

բութիւնները և ընծաները։ Յեթե նա արդար է, ինչպես հավատալ, թե նա կպատժի իր այն արարածներին, վորոնց նա թույլ է ստեղծել։ Յեթե նրա շնորհն է, վոր նրանց մեջ գործում է, ինչի համար նրանց վարձատրել։ Յեթե նա ամենակարող է, ինչպես կարելի յե նրան վիրավորել, ընդդիմանալ։ Յեթե նա բանական է, ինչու զայրանալ այն կույրերի վրա, վորոնց նա ինքը տվել է խորհելու կարողությունը։ Յեթե նա անփոփոխ է, ինչպես ենք մենք հավակնում փոփոխել նրա նախասահմանումները։ Յեթե նա անըմբռնելի յե, ինչու ցանկալ նրա մասին գաղափար կազմել։

Մյուս կողմից, յեթե նա ցասկոտ, վոխակալ և չարամիտ է, ապա մեզ թույլատրելի չե նրան ուղղել մեր տենչանքները։ Յեթե նա մի բռնակալ է, ապա ինչպես սիրել նրան։ Ի՞նչպես սիրել այն տիրոջը, վորն իր սարուկներին ազատություն կտար իրեն վիրավորելու համար, սակայն վորպեսզի հետո նրանց հանցանքը հայտնաբերելով՝ կատարյալ բարբարոսությամբ պատժեր նրանց։ Յեթե նա ամենակարող է, ինչպես խույս տալ

նրա բարկության հետևանքներից։ Յեթե նա անփոփոխ է, ինչպես խուսափել մեր ճակատագրից։

Այսպես ուրեմն, ինչ տեսակետից էլ վոր քննարկելու լինենք աստծուն, մենք վոչ մի հիմք չունենք վոչ պաշտամունքներ կատարելու և վոչ էլ աղոթելու նրան։

Յեթե աստվածը գոյություն ունենար և յեթե այդ աստվածը լիներ մի արդար, խելացի, բարի էյակ, ապա ինչից պետք է վախենար առաքինի անթեխտը, վորն իր մահվան ժամին, կարծելով թե քնում է ընդմիշտ՝ իրեն հանկարծ կգտներ մի աստծու առաջ, վորին չի ճանաչել և անտեսել է իր վողջ կյանքում։

Ո՞վ աստված, կասեր նա, վոր քեզ անտեսանելի եյիր պահում, ով անըմբռնելի էյակ, վոր յես չկարողացա բացահայտել՝ ներիր, յեթե քո ինձ տված սահմանափակ բանականությունը չկարողացավ քեզ ճանաչել։ Կարող եյի յես արդյոք իմ զգայարաններովս բացահայտել քո հոգևոր եյությունը։ Իմ բանականությունը չկարողացավ խոնարհվել մի քանի մարդկանց հեղինակության առաջ, վորոնք խոստովանում եյին, թե իրենք

նույնքան քիչ լուսավորված են, որքան և յես և, որոնք իրար հետ համաձայնության են գալիս միայն ինձ հրամայելու համար, որպեսզի իրենց գոհեմ քո ինձ տված բանականությունը։ Սակայն, ով ասված, յեթե դու անսահման սիրում ես քո արարածներին, յես ել նրանց սիրել եմ քեզ պես։ Յեթե քեզ հաճելի յե առաքինությունը, իմ սիրտս ել միշտ այն մեծարել է։ Յես սիրել եմ ուրիշի վիշտը։ Յես չեմ խլել աղքատի հացը։ Յես յեղել եմ արդար, բարի, կարեկից...

Հաճախ հակառակ առողջ դատողության վայրկյանական տրամադրությունը մարդուս վերադարձնում է մանկության նախապաշարումներին։ Այդ պատահում է մանավանդ հիվանդության կամ մահամերձ ժամին։ Մարդը սարսափից դողում է, որովհետև նրա օրգանիզմը թուլացել է։ Ուղեղն իր ֆունկցիաները չի կարող կատարել և մարդը զրկվում է բանականությունից։ Մեր մտածելակերպը յենթարկվում է մեր մարմնի փոփոխություններին։

ԳԼՈՒԽ XXVI

ԱՅՍ ԳՐՔՈՒՄ ՅԵՂԱԾ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԸ. ԱՄԲԱՐԻՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ. ԿԱՆ ԱՐԴՅՈՔ ԱԹԵԻՍՏՆԵՐ

Աթեիստի անունն անդամ սարսուռ է պատճառում. բայց ի՞նչ է նշանակում աթեիստ։ Աթեիստը նա յե, ով մարդկային ցեղի ֆլասակար պատրանքները վոչնչացնում է, որպեսզի մարդկանց վերադարձնի բնության, փորձին, բանականության, մի մարդ, որը բնության գործողությունները բացատրելու համար, յերևակայական ույժերի դիմելու կարիքը չի զգում։

Ըստ ասվածաբանների, անմտություն է յենթադրել թե բնությունն անըմբռնելի շարժում ունի։ Մի՞թե խելացնորություն է գերադասել հայտնին անհայտից, դիմել փոր-

ձին, զգայարանների վկայության, դիմել բանականության և դերադասել դրա կարծիքը մի քանի սոփեստների սահմանումից, վորոնք խոստովանում են թե իրենք իսկ վոչինչ չգիտեն իրենց հռչակած ասածո մասին։

Մի՞թե մենք իրավունք չունենք կասկածելու նրանց գործի արդարության վրա, յերբ տեսնում ենք այն կատաղությունը, վորը նրանց մեջ հարուցում են աթեիստների կարծիքները։ Մտքի այս բռնակալներն են նախատում ասվածությունը՝ ասելով թե նա անազորույն է և ծարավ խեղճերի արյան։ Նրանք իսկական ամբարիշտներ են։ Ամբարիշտ լինել՝ նշանակում է անարդել ասածուն, վորին հավատում են։ Ով չի հավատում ասածուն, նա չի կարող վոչ նախատինք հասցնել նրան, վոչ էլ, հետևաբար, կարող է կոչվել ամբարիշտ։

Մյուս կողմից, բարեպաշտ լինել, նշանակում է ծառայել հայրենիքին, ոգտակար լինել իր մերձավորներին, չխախտել բնության որենքները։

Հետևաբար, աթեիստը կարող է լինել բարեպաշտ, աղնվաբարո և առաքինի, յերբ նրա

վարմունքը չի շեղվում բնության և բանականության պատվիրած որենքներից։

Չի պատահում, ասում են մեզ, վոր աթեիստ դառնան այն մարդիկ, վորոնք հիմք ունեն հուսալու, թե ապագա կյանքում իրենց վիճակը յերջանիկ կլինի։ Միայն կրքերի շահախնդրությունը և պատիժների վախն է, վոր մարդկանց աթեիստ է դարձնում։ Սակայն լուսավորության ձգտող և բանականության դիմող մարդը, վորին այդ բանականությունը հաղորդում է բոլոր առաքինությունների գաղափարը, այն մարդը չէ, վորին կարելի լինի յենթադրել այնպիսի վիճակում, վոր նա հրաժարվի ավելի շուտ քան մեկ ուրիշը, ապագա կյանքից և վախենա այդ կյանքի պատիժներից։

Ճիշտ է, վոր աթեիստները հաղվադեպ են, վորովհետև խանդավառությունը շլացրել է մտքերը, և մոլորությունն այնպես առաջադիմել է, վոր միայն քիչ մարդիկ քաջություն ունեն խաբեությունից ազատվելու։ Բայց յեթե աթեիստ անվան տակ հասկացվում են մարդիկ, վորոնք առաջնորդվում են փորձից, իրենց զգայարանների վկայությունից և

վորոնք բնության մեջ տեսնում են լոկ այն, ինչ այնտեղ իրոք գոյություն ունի. յեթե աթեիստ անվան տակ հասկացվում են բնագետներ, վորոնք յենթադրում են թե կարող են ամեն բան բացատրել շարժման որենքներով, առանց դիմելու պատիր ույժի. յեթե աթեիստ անվան տակ հասկացվում են մարդիկ, վորոնք չգիտեն թե ինչ է վոգին, վորոնք չեն ընդունում ֆանտոմը, վորի հակասական հատկությունները լոկ վրդովում են մարդկային ցեղը՝ կասկածից դուրս է, վոր կան աթեիստներ, և նրանք ավելի բազմաթիվ կլինեին, յեթե վողջախոհ բնագիտության և ուղղամիտ բանականության լույսն ավելի տարածված լիներ։

Աթեիստը մի մարդ է, վորը չի հավատում աստծո գոյության։ Բայց վոչ վոք չի կարող վստահ լինել, թե մի եյակ գոյություն ունի, վորը նա չի ըմբռնում և վորը, ասում են, իր մեջ միացրել է անհամատեղելի հատկություններ։ Այս առումով, բազմաթիվ աստվածաբաններ աթեիստներ կլինեին, ինչպես նաև այն բոլոր դյուրահավատ ժողովուրդները, վորոնք ուրիշի խոսքով ծունկ են չո-

քում մի եյակի առաջ, վորի մասին նրանց ունեցած միակ գաղափարը նրանց հաղորդել են մարդիկ, վորոնք խոստովանում են, թե իրենք իսկ վոչինչ չեն հասկանում դրանից։

ԳԼՈՒԽ XXVII

ՀԱՄԱՏԵՂԵԼԻ՞Ց ԵՏ ԱՐԴՅՈՔ ԱԹԵԻԶՄԸ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Եթե աթեիստը հերքում է աստծո գոյությունը, նա չի կարող ժխտել իր սեփական գոյությունը և վոչ էլ իրեն նման էյակների գոյությունը։ Նա չի կարող կասկածել նրանց միջև յեղած առնչությունների, վոչ էլ պարտականությունների այն անհրաժեշտության վրա, վորոնք բղխում են այդ առնչություններից։ Նա չի կարող ուրեմն կասկածել բարոյականության սկզբունքների վրա, վորը վոչ այլ ինչ է, քան հասարակության մեջ ապրող կենդանի էյակների միջև գոյություն ունեցող հարաբերությունների դիտությունը։ Իսկ յեթե նա մոռանում է իր բարոյական սկզբունքները, դրանից չի հետևում թե այդ սկզբունքները սխալ են։ Աթեիստը կարող է անհետևողական լինել իր սկզբունքներում, բայց անհավատ փիլիսոփան նվազ վտանգավոր է, քան խանդավառ քահանան. կարելի՞ յե միթե հավատալ թե աթեիստը, վորովհետև չի վախենում աստծո վրիժառությունից, կթույլատրի իրեն ծայրահեղ գործողություններ, վորոնք խիստ ճնշակար են իրեն իսկ համար և պատժի արժանի։

Միթե մարդն ավելի յերջանիկ կարող եր լինել մի բռնակալի իշխանության տակ, վորը կհավատար աստծուն, ընծաներ կշռայլեր քահանաներին և նրանց վոտքերի առջև կխոնարհեր, քան մի այլ բռնակալի իշխանության տակ, վորը կլիներ աթեիստ։ Այս վերջին դեպքում գոնե նա չեր վախենա կրոնական հալածանքներից. գոնե աստծո անունը, վորը բռնակալն ոգտագործում է իր անձին աստվածային փայլ տալու համար, չեր կարող ծառայել բռնակալի հարստահարությունների արդարացմանը. գոնե նա չեր ունենա հանցանքների թողության հույսը։ Վորը նրան խոստանում է կրոնը։

Բարոյականությունն աստծո գոյությունից կախման յենթարկելը խիստ դժվար կացություն է ստեղծել։ Հայտնաբերած լինելով կրոնական յենթադրությունների սխալականությունները, անառակ մարդիկ կարծեցին թե առաքինությունն ել աստվածների պես մի պատրանք է և թե այս աշխարհում վոչ մի միտք չկար այն գործադրել։ Մինչդեռ առաքինությունը մեզ վրա վորոշ պարտականություններ է դնում, վորպես հասարակության մեջ ապրող եյակների։ Թող վոր աստվածը գոյություն ունենա կամ չունենա, մեր պարտականությունները մնում են նույնը։

Յեթե ուրեմն գտնվել են աթեիստներ, վորոնք ժխտել են բարու և չարի տարբերությունն, այդ նշանակում է նրանք չեն խորհրդածել։ Այդ տարբերությունը հիմնված է մարդու բնության վրա, վորը պարտադրում է վորոնել յերջանկություն և բարեկեցություն, և խույս տալ տառապանքից։ Հարցրեք այն մարդուն, վորն անմտությամբ ժխտում է արատի և առաքինության տարբերությունը. միթե նրա համար միևնույն է ծեծված, թա-

լանված, բամբասված, մատնված և նախատված լինելը. նրա պատասխանը ձեզ կապացուցե, վոր նա ընդունում է մարդկանց գործողությունների միջև յեղած տարբերությունը, վոր բարու և չարի տարբերությունը կախված չէ վոչ պայմանագրերից, վոչ աստծո մասին ունեցած գաղափարից և վոչ ել մի այլ կյանքի վարձահատուցումներից կամ պատիժներից։

Միայն իր արդի գոյությունն ըմբռնող աթեիստը պետք է ձգտի այն յերջանիկ դարձնել։ Աթեիզմը, ասում է Բեկոնը, ստիպում է, վոր մարդն ինքն իր վերաբերմամբ ավելի շրջահայաց լինի, վորովհետև այս աշխարհի սահմաններից դուրս նա վոչինչ չի տեսնում։ Այն մարդիկ, վորոնք վարժված են խորհրդածելու և գիտության մեջ վորոնելու իրենց հաճույքը՝ ընտրակար քաղաքացիներ չեն։

Կրոնի մոլորությունից ազատագրված մարդիկ պնդում են, թե կրոնն անհրաժեշտ է հասարակ ժողովրդի համար, վորովհետև առանց դրան չի կարելի նրան զսպել։ Սակայն ներգործում է արդյոք կրոնը ժողովրդի բարքերի վրա ոգտակար կերպով։ Այդ նրան սարկացնում է առանց յերջանկացնելու,

նրան ապուշ է դարձնում, վորն այլ առաքինություն չի ճանաչում, քան կույր հնազանդություն այն սին կրոնական արարողություններին, վորոնց նա ավելի մեծ նշանակություն է տալիս, քան ճշմարիտ առաքինություններին և այն բարոյականության, վորը նա յերբեք չի ճանաչել։

Յերևակայական սարսափներով միայն մի վայրկյան կարելի յե վախեցնել անուս յերեխաներին։ Առաքինության արժեքի և դրան հետևելու շարժառիթների ճանաչմանը կարելի յե հասնել միայն ճշմարտության ցուցաբերումով։

Աթեիստները կան միայն այն ժողովուրդների մոտ, վորտեղ սնոտիապաշտությունը՝ սատարված թագավորական հեղինակավորության կողմից, զգալ է տալիս իր լծի ծանրությունը և ի չարն է գործ դնում իր անսահման իշխանությունը։ Ճնշումը յեռանդ և հաղորդում հոգուն. այդ ստիպում է մոտիկից քննել իր տառապանքների աղբյուրը։ Դիժբախտությունը մի զորեղ խթան է, վորը միտքը դարձնում է դեպի ճշմարտությունը։

ԳԼՈՒԽ XXVIII

ԱԹԵԻԶՄԻՆ ՀԱՆԴԵՑՆՈՂ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ԿԱՐՈ՞Ղ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ ԼԻՆԵԼ ԱՑԴ ՍԻՍՏԵՄԸ. ԿԱՐՈ՞Ղ Է ՀԱՍԱՐԱԿ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՑԴ ԸՄԲՌՆԵԼ

Հարցնում են, թե ինչ շահ ունեն մարդիկ աստծուն չճանաչելուց։ Բայց մթթե հանուն նրա կատարված բռնությունները, հալածանքները, այն սարկությունը, վորի մեջ մեզ պահում են քահանաները, մթթե այս բոլորը բավական ուժգին շարժառիթներ չեն դրդելու մարդկանց ուսումնասիրել այն եյակի հատկությունները, վորը մեզ այնքան չարիք է հասցնում։ Կա արդյոք մի ավելի մեծ շարժառիթ, քան աստծո դաղափարից ծնած հարատանջ յերկյուղը, մի աստծո, վորը զայրանում է մեր ամենադաղտնի խոհերից,

վորին կարելի յե վիրավորել առանց գիտակցելու, վորին յերբեք չգիտես ինչպես հաճոյանալ, վորը մեզ թույլ ե տալիս հանցավոր հակումներ ունենալ, վորպեսզի հետո պատժե, վորը մի վայրկյանի հանցանքների համար անվերջ վրեժ պետք ե առնե։

Դեիստը մեզ կասի, թե աստվածն այնպիսին չե, վորպիսին մեզ պատկերում ե սնոտիապաշտությունը. բայց այս յենթադրությունը չի ապացուցում աստծո գոյությունը։ Բացի սրանից, յեթե սնահավատի աստվածը քըստմնելի յե, դեիստի աստվածը միշտ հակասական և անհնարին մի եյակ ե։

Սնոտիապաշտը յերբ ապականված սիրտունի, իր կրոնի մեջ աթեիստից ավելի շատ պատրվակներ ե գտնում մարդկային ցեղին ջնջելու համար։ Այս վերջինս մոլեռանդության ծածկույթը չունի, վորը սքողի աստծո վրիժառությունը և զայրույթը։

Վողջախոհ աթեիստը յերբեք չի հավատա, վոր կրոնից ծագած վայրագությունները կարելի կլինի արդարացնել։ Յեթե աթեիստը անառակ ե, դենե նա գիտե, վոր չարություն ե գործում։ Վոչ նրա աստվածը, վոչ քահանա-

ները չեն կարող նրան համոզել, թե նա բարություն ե անում։

Մեզ ասում են, թե քահանաների անվայել և հանցավոր վարվելակերպը վոչինչ չի ապացուցում կրոնի դեմ. բայց նույնը և կարելի յե ասել աթեիստի մասին, վորը կարող ե լավ բարոյականություն և վատ վարք ունենալ։ Մեզ ասում են, թե աթեիզմը յերդումի սըրբությունը վոչնչացնում ե։ Բայց յերդմնազանցությունը հազվադեպ չե կրոնասեր ազգերի մոտ և վոչ ել այն անձերի մոտ, վորոնք ամենից շատ պարծենում են իրենց հավատքով առ աստված։ Կատարում են արդյոք ամենակրոնասեր թագավորներն իրենց պարտականությունները։ Ինքը կրոնը չե՞, վոր նրանց հաճախ դրանցից ազատում ե, մանավանդ, յերբ այդ են պահանջում նրա սրբազան շահերը։ Հրաժարվում են արդյոք չարությունից ամեն կարգի խաբեբաները, յերբ պետք ե աստծո անունը վկա կանչել։ Ի՞նչին ե ծառայում յերդումը։ Դա մի դատարկ ձևականություն ե, վորը վոչ մի նշանակություն չունի չարագործների համար և վորը վոչինչ չի ավելացնում աղնիվ հոգիների պարտա-

կանությունների վրա։ Հարցնում են, թե յեղե՞լ է արդյոք մի ազգ, որը բնավ աստծո գաղափարը չի ունեցել, և թե կարո՞ղ է գոյություն ունենալ աթեիստներից բաղկացած մի ազգ։

Որպես յերկչոտ և տգետ կենդանի, մարդն անհրաժեշտորեն դառնում է սնահավատ իր թշվառության ժամանակ։ Նա կամ ինքն իրեն համար ստեղծում է աստված, կամ ընդունում է այն աստծուն, որն ուրիշներն ուզում են նրան տալ։ Բայց իր աստծո գոյությունից վայրենին նույն հետևությունները չի անում, ինչպես բանիմաց մարդը։ Վայրենի ժողովուրդը բավարարվում է կոպիտ կուլտով, առանց խորհրդածելու աստվածների եյության շուրջը։ Միայն քաղաքակրթված ազգերի մոտ մարդիկ նրբություններ են մտցնում իրենց իդեաների մեջ։

Անտարակույս, յեթե մի բազմաթիվ հասարակություն չունենա վո՛չ կրոն, վո՛չ բարոյականություն, վո՛չ կառավարություն, վո՛չ որենքներ, վո՛չ սկզբունքներ, նա չի կարող պահպանվել, այլ կմիավորե միայն իրար ջնջելու համար հակամետ եյակները։ Բայց

մի՞թե նույն վիճակում չեն գտնվում մարդկային հասարակությունները աշխարհիս բոլոր կրոնների հետ միասին։ Լավ որենքներով կառավարված, վարձատրության հույսով առաքինության դրդված, պատժի վախից հանցագործությունից հրաժարված աթեիստների մի հասարակություն ավելի առաքինի կլիներ, քան այն կրոնական հասարակությունները, որոնց մոտ ամեն ինչ նպաստում է մտքի բթացման և սրտի ապականման։

Անկարելի յե հուսալ, որ հնարավոր է ազատագրել մի ամբողջ ժողովուրդ իր կրոնական իդեաներից, որովհետև դրանք նրա մեջ հաստատվել են ամենավաղ մանկությունից։ Բայց հասարակ ժողովուրդը ժամանակի ընթացքում կարող է քաղել այն ջանքերի պտուղները, որոնց մասին նա այժմ գաղափար չունի։ Աթեզմն իր հետ ունենալով ճշմարտությունը, կարող է թափանցել մտքերը, ընտելանալ նրանց հետ և այլն։

ԳԼՈՒԽ XXIX

ԲՆՈՒԹՅԱՆ ԿՈԴԵՔՍԻ ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ դուք, ասում է մեզ բնությունը, որ իմ ներշնչած մղումի համաձայն, ձեր գոյության յուրաքանչյուր բոպեյում ձգտում եք յերջանկության, մի ընդդիմանաք իմ գերագույն որենքներին։ Ջանացեք յերջանկություն ձեռք բերել, վայելեք առանց վախի, յեղեք յերջանիկ։

Ո՞վ անահավատ մարդ, վերադարձիր դեպի բնությունը։ Այդ քեզ կսփոփե, քո սրտից քեզ ճնշող յերկյուղը կարտաքսե։ Դադարիր ապազան հայեցելուց։ Ապրիր քեզ և քո նմանների համար։ Ցեռ խրախուսում եմ քո հաճույքները, յեթե դրանք քեզ չվնասելով հանդերձ, կորստաբեր չեն քո յեղբայրների հա-

մար, վորոնց յես դարձրի անհրաժեշտ քո յերջանկության։

Թող մարդասիրությունը քեզ շահագրգռե քո նմանի ճակատագրով։ Մտածիր, վոր ճակատագիրը մի որ կարող է հարվածել քեզ ևս։ Սրբիր նախատված անմեղության, և ճնշված առաքինության արտասուքները։ Թող բարեկամության քաղցր ջերմությունը և սիրելի ամուսնու հարգանքը քեզ մոռացնել տան կյանքի տառապանքները։

Արդար յեղիր, վորովհետև արդարությունը մարդկային ցեղի նեցուկն է։ Բարի յեղիր, վորովհետև բարությունը հրապուրում է բոլոր սրտերը։

Ներողամիտ յեղիր, վորովհետև ինքդ թույլ ես և ապրում ես թույլ յակների հետ։ Քնքույշ յեղիր, վորովհետև քնքշությունը նվաճում է սերը։ Ցերախտագետ յեղիր, վորովհետև յերախտագիտությունը սնում և աճեցնում է բարությունը։ Համեստ յեղիր, վորովհետև հպարտությունը գրգռում է ինքնահավան յակներին։ Ներիր վիրավորանքները, վորովհետև վոխը հավերժացնում է ատելությունը։ Բարություն արա քեզ նա-

խատողին, վորպեսզի ցույց տված լինես, վոր դու նրանից ավելի վեհանձն ես և վորպեսզի նրան բարեկամ դարձնես քեզ։ Զուսպ, չափավոր և պարկեշտ յեղիր, վորովհետև հեշտասիրությունը, անչափավորությունը և շռայլությունը կործանում են քո կյանքը և քեզ արհամարանքի արժանի կդարձնեն։

Քաղաքացի յեղիր, վորովհետև քո հայրենիքիդ անհրաժեշտ ե քո ապահովությանդ, վայելքներիդ, բարեկեցությանդ համար. վրատահ յեղիր, վոր ուրիշներին յերջանկացնող մարդը՝ ինքը դժբախտ չի կարող լինել։ Այսպես վարվելով, դու միշտ հաճույքով կքննես քո արարքները։ Դու քո սրտի խորքում չես գտնի վոչ ամոթանք, վոչ խղճահարություն։ Յեթե յերկինքը հետաքրքրվեր քեզանով. նա ևս գոհ կմնար քո վարմունքից, քանի վոր գոհ ե յերկիրը։

Յերկրում գործված հանցանքների համար յես պատժում եմ ավելի խիստ, քան ասվածները։ Զարագործը կարող ե խույս տալ մարդկանց՝ բայց վոչ յերբեք իմ որենքներից։ Յեթե դու քեզ մատնում ես անժուժկալության, մարդիկ քեզ չեն պատժի. բայց

յես կպատժեմ՝ կարճացնելով քո որերը։ Յեթե դու արատավոր ես, քո մոլի սովորությունները քեզ կհարվածեն։ Իշխանավորները, վորոնց հզորությունը նրանց մարդկային որենքներից բարձր ե դասում, ստիպված են դողալ իմ որենքների առաջ։

Այդ յես եմ, վոր պատժում եմ նրանց, արթնացնում նրանց մեջ կասկած և յերկյուղ։

Թափանցիր վոճրագործների սրտի խորքը, վորոնց գոհունակ դեմքը սքողում ե նրանց բղկված հոգին. տես ինչպես ուժասպառ ժլատը հեծծումներիր գանձի վրա, վորը նա դիզել ե ի վնաս իրեն։ Տես, ինչպես արտաքուստ այնքան զվարթ և ցոփ մարդը գաղտնի հառաչում ե իր հյուծված առողջության համար, ինչպես յերկպառակությունը և աղելությունը իշխում են շնացող ամուսինների մոտ. տես խարեբային, վորը բոլորի վստահությունից զրկված ե. տես զրպարտչին, վորը ճշմարտության անունից անդամ դողում ե. տես նախանձողի խամրած սիրտը, վորը դալկանում ե ուրիշի յերջանկությունից, ապերախտի սառած սիրտը, վորը վոչ մի բարերարությունից չի ջերմանում. ճիվաղի յեր-

կաթե հոգին, վորը չեն կարող մեղմացնել դժբախտ մարդու հառաչները. տես վոխակալը, վորը սնվում է մաղձով և թույնով և վորն ինքն իրեն բզկտում է իր կատաղության մեջ։

Նախանձիր, յեթե հանդգնում ես ունենալ մարդասպանի, անարդար դատավորի, հարստահարողի քունը, վորոնց անկողինը լափում է կատաղության կրակը։ Դու այդ չես անի և մարդասիրությունը քեզ կմղի մասնակցելու նրանց չարչարանքներին։ Յեթե դու քեզ բաղդատես նրանց հետ, քեզ յերջանիկ կհամարես, վոր քո սրտում միշտ տիրում է խաղաղություն. վերջապես տես թե ինչպես ե կատարվում քո և նրանց նկատմամբ ճակատագրի նախասահմանումը, վորը պահանջում ե, վոր վոճիրն ինքն իրեն պատժի և առաքինությունը բնավ զուրկ չմնա վարձահատուցումից։

ՀՍՀՀ ՊՐ
ԱԿ. Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
Մ. ՍԵՍԱՆԱՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Առաջաբան Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 5
Նախաբան 43

Գլուխ I

Բնության մասին 45

Գլուխ II

Շարժման և նրա ծագման մասին 48

Գլուխ III

Մատերիայի և նրա շարժումների մասին . . 51

Գլուխ IV

Բոլոր եյակների շարժման ընդհանուր որենքների մասին. Ձգողականության և վանողականության, իներցիայի ուժի և անհրաժեշտության մասին 53

Գլուխ V

Կարգավորության և անկարգավորության, բանականության և պատահականության մասին 55

Գլուխ VI

Մարդու մասին. Բարոյական մարդու և ֆիզիկական մարդու յերկատման, նրա ծագման մասին 58

Գլուխ VII

Հոգու և նրա հոգեկանության մասին 61

Գլուխ VIII

Տասվոր ունակությունների մասին. Դրանք բղխում են դդայելու կարողությունից . . 63

Գլուխ IX

Տասվոր ընդունակությունների բաղմազանության մասին. Վորպես բարոյական ունակություններ՝ նրանք ևս կախում ունեն ֆիզիկական պատճառներից. Հանրության, բարոյականության և քաղաքականության բնական սկզբունքների մասին 65

Գլուխ X

Մեր հոգին իր գաղափարները բնավ իրենից չի քաղում. Բնածին գաղափարներ չկան . . . 69

Գլուխ XI

Մարդու աղատության սիստեմի մասին . . . 71

Գլուխ XII

Քննարկումն այն կարծիքի, վորը պնդում է, թե ֆատալիզմի սիստեմը վտանգավոր է . . . 75

Գլուխ XIII

Հոգու անմահության, հանդերձյալ կյանքի, հավատի և մահվան յերկյուղի մասին 80

Գլուխ XIV

Դաստիարակությունը, բարոյականությունը և որենքները բավական են մարդկանց զսպելու համար. Անմահության ցանկության և ինքնասպանության մասին 87

Գլուխ XV

Մարդկանց շահերի կամ այն գաղափարի մասին, վոր նրանք ունեն յերջանկության մասին. Առանց առաքինության մարդը չի կարող յերջանիկ լինել 92

Գլուխ XVI

Յերջանկության կյության մասին ունեցած մարդկանց մոլորություններն իրենց թշվառությունների բուն աղբյուրն են. Այն ապարդյուն միջոցների մասին, վորոնցով մարդիկ ցանկանում են վերացնել այդ թշվառությունները 96

Գ լ ո ւ խ XVII

Աստվածության մասին մեր ունեցած գաղափարների ծագումը 103

Գ լ ո ւ խ XVIII

Դիցաբանության և աստվածաբանության մասին 106

Գ լ ո ւ խ XIX

Աստվածաբանության խճճված և արտասովոր իդեաները 109

Գ լ ո ւ խ XX

Աստծո գոյության մասին Կլարկի առաջադրած ապացույցների քննությունը 118

Գ լ ո ւ խ XXI

Աստծո գոյության առթիվ առաջադրած այլ ապացույցների քննությունը 127

Գ լ ո ւ խ XXII

Դեիզմի, ոպտիմիզմի սխատեմի և վերջնական պատճառների մասին 134

Գ լ ո ւ խ XXIII

Քննարկումն այն ոգուտների, որոնք առաջ են գալիս մարդկանց համար աստվածության գաղափարից կամ այդ գաղափարների՝ բարոյականության, քաղաքականության, գիտության, ազգերի և անհատների յերջանկության վրա թողած ազդեցության մասին 139

Գ լ ո ւ խ XXIV

Աստվածաբանական գաղափարները բարոյականության հիմքը կազմել չեն կարող. Աստվածաբանական բարոյականության և բնաբարոյականության համեմատությունը. Աստվածաբանությունը կաշկանդում է մտքի հառաջադիմությունը 147

Գ լ ո ւ խ XXV

Մարդիկ իրենց հաղորդած աստվածության գաղափարից յերբեվիցե վոչ մի բան չեն կարող յեզրակացնել. Աստվածության նկատմամբ ունեցած նրանց վարվելակերպի անհետևողականության և անոգտակարության մասին 152

Գ լ ո ւ խ XXVI

Այս գրքում յեղած կարծիքների պաշտպանումը. Անբարիշտության մասին. Կան արդյոք աթեիստներ 159

Գ լ ո ւ խ XXVII

Համատեղելի՞ յե արդյոք աթեիզմը բարոյականության հետ 164

Գլուխ XXVIII

Աթենքմին հանգեցնող շարժառիթների մասին. կարող է արդյոք վտանգավոր լինել այդ սիստեմը. կարող է արդյոք հասարակ ժողովուրդը այդ ըմբռնել 169

Գլուխ XXIX

Բնության կոդեքսի համառոտ շարադրությունը 174

ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Վերևից թե ներքևից	ՏՊՎԱԾ Է	ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
9	13	վերևից	Մոնտեսկյոի	Մոնտեսկյոի
12	2, 3	ներքևից	հակաթեղեոլոգիա-կան	հակաթեոլոգիա-կան
13	2	վերևից	հակաթեոլոլոգիա-կան	հակաթեոլոգիա-կան
16	1	„	չքանուեւ է	չքանում է
28	17	„	որենքնեբը	որենքները
31	2	ներքևից	մատերիալիատներ	մատերիալիստներ
32	12	վերևից	տեսնակյունից	տեսանկյունից

Перевод с франц. **В. Петросян**
Отв. редактор **М. Григорьян.**
Техн. редактор **И. Карамян.**
Суперобложка, титул
и переплет **С. Аладжалова.**

К. ГЕЛЬВЕЦИЙ

ИСТИННЫЙ СМЫСЛ СИСТЕМЫ ПРИРОДЫ

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении.
Москва, Армянский пер., д. 2. Заказ 1187.
Главлит № Б—12971. Тир. 3000. Сдано в набор
9/VIII-35 г. Подп. к печ. 4/IX-35 г. Печ. л. $5^3/_4$.
В 1 печ. листе 44000 зн.

ՀՀ Ազգային գրադարան
NL0139600